

### ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼԵՀԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒ ԼԵՀԱՀԱՅԵՐԻ ՀՈՒՄԻ ՀԵՏ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԼԵՀ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ինչպէս յայտնի է, հայ ազատագրական միտքը ունեցել է նաեւ լեհական կողմնորոշում<sup>1</sup>, որը պատմագիտութեան չուսումնասիրուած խնդիրներից է: Լեհ պատմագիտութիւնը եզակի փաստեր է ընձեռում այդ հարցի ուսումնասիրութեան համար:

Կարեւոր են նաեւ լեհահայերի Հռոմի հետ միութեան պատմութեան առնչուող տուեալները, որոնք հայկական աղբիւրներին համադրելիս, լոյս են սփռում այդ իրադարձութեան որոշ վիճելի հարցերի վրայ:

Հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշման պատմութիւնն ու լեհահայերի Հռոմի հետ միութիւնը մենք չենք անջատում ո՛չ իրարից, ո՛չ էլ հայ ազատագրական շարժման եւրոպական դիմահակութիւնից, որը լինելով լատինական շարունակութիւնը, լծորդուում է արեւմտեան տէրութիւնների արեւելեան քաղաքականութեանն ու Հայաստանում Հռոմէական Եկեղեցու ծաւալած քարոզչական — առաքելական գործունէութեանը:

Իրօք, դեռեւս Կիլիկեան Հայաստանի անկմանը նախորդող շրջանից սկսած, հայ ազատագրական միտքը յաճախ է փարել քրիստոնէայ Եւրոպայի օգնութեամբ թագաւորութիւնը պահելու կամ վերականգնելու յոյսերին՝ միջնորդ ունենալով Հռոմի Պապերին: Իսկ Հայաստանի թագաւորութեան վերականգնմանը օժանդակելու Եւրոպայի

խոստումները համարեա միշտ էլ խարսխուած են եղել հայադաւան եկեղեցին Հռոմի միացնելու պայմանների վրայ: Այդ մտայնութեան դադափարական հիմքը դեռեւս ժԱ.—ԺԳ դարերից Կիլիկեան Հայաստանի լատինահակ հոսանքի հրապարակ հանած Կոստանդին մեծ կայսեր ու Սեղբեստորոս Պապի եւ Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսաւորչի միջեւ կնքուած «Դաշանց Թուղթը» էր, պատմական կեղծիք մը, որը Հայ Եկեղեցին Հռոմին միացնելու համար օգտագործում էին թէ՛ միութեան պաշտպան հայերը եւ թէ՛ Հռոմի Միարար Առաքեալները:

Լատին Միարարները յաճախ օգտագործում էին նաեւ ժ դարից շրջանառութեան մէջ դրուած՝ Հայերի թագաւորութիւնը «Ֆրանկների» օգնութեամբ վերականգնելու մասին Ներսէս Մեծի տեսիլքը, որը մուծուած էր այդ դարի մատենագիր Մեսրոպ Երէցի «Վարք Ներսիսի» մէջ<sup>2</sup>:

ԺԳ.—ԺԴ դարերում, երբ Մամուկների առաջխաղացմամբ նժարին էր դրուած Կիլիկեան Հայաստանի լինել—չլինելու հարցը, Հռոմի Պապերը խոստանում էին Խաչակրաց արշաւանքներով Հայերին ազատել մահմեդական աշխարհի յարձակումներից՝ փոխարէնը պահանջելով (դեռեւս «Դաշանց Թուղթով» ամրացած) հայ—լատին եկեղեցիների միութիւն: Հեթոմեան հարստութեան որոշ թագաւորներ ու կաթողիկոսներ նոյնիսկ այդ ժամանակ ազգային եկեղեցական ժողովներ գումարեցին «միութեան խնդիրը» լուծելու համար:

Միւս կողմից՝ Հայ եկեղեցին Հռոմի միացնելու գործողութիւնների մասին հայ եւ

<sup>1</sup> ա) Լ. Բարսեան — Հայերը Մուղապիայում եւ Բուզովինայում, էջ 24, Թիֆլիս, 1911 թ.:

բ) Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հտ. Բ, էջ 200, 349, 352, 1959 թ., Երևան (Այսուհետեւ՝ գրուագներ):

գ) Վ. Ոսկանեան — Դրեւնայա բուս ի ուկրաինալ սուգրաբն արմեան (Հին Ռուսիան եւ Ռութենիան Հայոց ճակատագրում), Իստորիչնիկիյէ սվյազի ի դրուժբա Ուկրաինսկոյո ի ամբանսկոյո նարոզով (Ռուսէն եւ հայ ժողովուրդների պատմական կապերն ու բարեկամութիւնը, յօդուածների ժողովածու), 1961 թ., էջ 70—81, 88 (Ժողովածուն այսուհետեւ յղելու ենք ԻՄԴ կրճատ ձեւով):

<sup>2</sup> Այս թուղթը թէեւ հաւասար հիմունքներով դաշինք էր երկու քրիստոնէայ պետութիւնների միջեւ, բայց ժամանակի ընթացքում անկատելիորէն փոխուեց հայ եկեղեցին Հռոմին ենթարկելու պայմանագրի:

<sup>3</sup> Մոփերք Հայկականք, հտ. 2, Պատմութիւն Մրթոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, 1853 թ., Վենետիկ:

օտար աղբիւրների բաղդատումից յստակօրէն երեւում է որ միութեան գործն առաջ տանելիս Հռոմը յատուկ ծրագրով աշխատել է երկու ճակատով՝ բո՛ւն Հայաստանում եւ դաղթաշխարհում: Իրօք՝ Հռոմի եկեղեցին Կիլիկիայում սկսած միարարական գործողութիւնների հետ գրեթէ միաժամանակ, արդէն ժԴ դարակէսին, ամուր արմատներ էր դրել Անիի, Թավրիզի, Թիֆլիսի եւ Արտազի հայաշատ շրջաններում՝ ի դէմս նախ Ֆրանցիսկեան, ապա քիչ աւելի ուշ՝ Դոմինիկեան կրօնական ուխտերի:

ԺԴ դարի սկզբին հիմնուած Երնջակի Բունայ վանքի (Յովհաննէս եւ Յակոբ Բունցիներն ու սրանց վարժապետ Բարթոլոմէոս Բոլոնացին) եւ Արտազի ս. Թադէի վանքի Մործորի (Չաքարիա եւ Յովհաննէս Մործորեցիներ) դպրոցները լատին առաքեալների առաջին հանգրուաններն էին Հայաստանում:

Հռոմը հայ եկեղեցու միութիւնը շարունակում էր դնել քաղաքական հիմքերի վրայ՝ Հայաստանի անկախութեան վերականգնման մէջ իր օժանդակութիւնը կապելով միութիւնը ընդունելու հետ: Սակայն հայ կղերականութիւնը միշտ էլ փորձել է զանազան ճանապարհներով Լատիններու միութենական փորձերը օգտագործել իր քաղաքական նպատակներին՝ շատ յաճախ թղթի վրայ միայն հպատակութեան դաշինքներ կնքելով Հռոմի հետ<sup>4</sup>:

Պատմագիտութեան մէջ հայ—լատին եկեղեցիների միութեան դաշնագրերի մասին տեղեկութիւններն առատ են մանաւանդ Ֆրլորենտիայի ժողովից (1439 թ.) յետոյ:

Կոստանդին Զ. կաթողիկոսը (1430—1439) ազատագրական անկախիքներով փաստօրէն ընդունում է Ֆլորենտիայի ժողովի որոշումները՝ թէեւ նրա մահուանից յետոյ Հայ Եկեղեցին չեղեալ նկատեց Ֆլորենտիայում ըստանձնած պարտաւորութիւնները:

Քրիստոնէայ պետութիւնների օգնութեամբ Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու յոյսերով Հռոմին «հպատակութեան» թղթեր են յանձնել նաեւ Ստ. Սալմաստեցի, Միքայէլ Սեբաստացի, Ստ. Առնշեղի, Թադէոս, Փիլիպպոս Աղբակեցի,

<sup>4</sup> Մ. Փրմանեան, Ազգապատում, հտ. Բ, էջ 2613, 1913 թ., Կոստանդնուպոլիս (այսուհետեւ՝ Ազգապատում):

Մելքիսեդեկ, Դաւիթ, Յակոբ Զուղայեցի կաթողիկոսները, որոնք գրեթէ բոլորն էլ այդ նպատակով ճամբորդել են Վենետիկ, Հռոմ եւ Լեհաստան<sup>5</sup>:

Հռոմի միարարական գործողութիւնները աշխուժացան ԺԶ—ԺԷ դարերում (1545 թ. Տրիդենտեան ժողովից յետոյ մանաւանդ), երբ Սէֆեան Իրանի եւ Թուրքիայի հակամարտութիւնները արեւմտեան երկրների մէջ Օսմանեան Կայսրութեանը Պարսկաստանի միջոցով մասնատելու յոյսեր ներշնչեցին, որը ժԷ դարի 30-ական թուերին դարձաւ քաղաքական նոր ծրագիր: Թուրք պարսկական պատերազմներից ամայացած Հայաստանը այդ շրջանում է՛լ աւելի էր փարում Եւրոպայի ձեռքով թուրքիան կործանելու եւ Հայաստանի պետականութիւնը վերականգնելու գաղափարին:

Այսպիսով՝ հայ բարձրաստիճան հոգեւորականութեանն ու առեւտրական բուրժուազիային տուած քաղաքական ազատութեան խոստումներով, Հռոմը բուն Հայաստանում ծաւալած միարարական գործողութիւնները յատուկ ծրագրով լծորդում էր դաղթաշխարհը դաւանութեամբ իրան հետ միացնելու ջանքերին:

Ահա այսպիսի պայմաններում է որ լատին կղերը ժԷ դարի 20-ական թուերին վերսկսեց նոր ծրագրով «ամբողջ Լեհաստանի բնակչութեան 0,023 տոկոսը կազմող»<sup>6</sup> լեհահայոց վերջնական միութիւնը իրագործել, թէեւ այդ արժեք 300 տարուայ վիթխարի ջանքեր եւ հսկայական միջոցներ:

Լեհահայերին Հռոմի եկեղեցուն միացնելու դիտաւորութիւնը լատին կղերի համար նորութիւն չէր: Ըստ պատմական կցկտուր տեղեկութիւնների, լեհահայերի մէջ Հռոմի հետ միութեան քարոզչութիւնը առկայ էր

<sup>5</sup> S. BARACZ, ZYWOTY SŁAWNYCH ORMIAN W POLSCE, str. 191, 1856, Lwów, (Այսուհետեւ ժղվորը):

<sup>6</sup> Ղ. Ալիշան, Կամենից տարեգիրք, էջ 19, 32, 50, 62, 135 եւ այլ, 1896 թ., Վենետիկ:

Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ, հտ. Բ, էջ 34, 45—46, 104—105, 147:

<sup>6</sup> TYGODNIK POWSZECHNY (չաբաթաթերթ), Կրակով, Թիւ 15, 1980 թ.: Միութեան դէմ պայքարի դրօշակիր Լվովի հայերը 1648 թ. ունէին ընդամէնը 147 տուն, 1704 թ.՝ 73 տուն (տե՛ս B. JANUSZ, MONS PIUS ORMIAN LWOWSKI, 1928 թ, էջ 13, Լվով):

դեռևս Կաղիմիր Մեծի թագաւորութեան շրջանում (1333—1370), երբ լեհական այս միապետը Կիւեւեան Ռուսիայի եւ Գալիցիայի հայաշատ վայրերը միացրեց Լեհաստանին եւ 1367 թ. Գրիգոր եպիսկոպոսին թոյլատրեց որպէս թեմակալ հիմնուել Լվով: Այսպէս՝ արդէն 1350—1379 թթ. աղբիւրները Լվովում յիշում են Կիւեւեց եկած հայադպի կաթողիկ եպիսկոպոս Յակոբին<sup>7</sup>: Վլ. Լոգինսկին նշում է լեհահայերի հետ առեւտրա-տնտեսական սերտ կապերի մէջ գտնուող զրիմահայերը արդէն 1318 թ. Կաֆայում ունէին առանձին եպիսկոպոսութիւն՝ Երոնիմոսի գլխաւորութեամբ<sup>8</sup>: Լեհ պատմաբանը նշում է նաեւ, որ Լվովում պահպանուած վաւերագրերի ամենահին մատենանում (ԺԴ դարի վերջ), ուր հիմնականում դատական վճռագրեր են, հայադաւանների հետ միասին յիշատակուում են նաեւ կաթողիկ հայեր (նոյն տեղը, էջ 81): 1374 թ. Մայիսի 24-ին Գրիգոր ԺԱ Պապը Հալիչի լատին համայնքի հաւատացեալներին արտօնութիւններ է պարզեւել, որը տարածուել է նաեւ կաթողիկ եղած մի քանի լեհահայերի վրայ<sup>9</sup>: 1376 թ. տուեալներ են պահպանուել «Լվովի ոմն վաճառական Եանի որդի Սուքիասի փեսայ Թայչուդի» մասին, որը Կիւեւեց եկած վերոյիշեալ Յակոբ եպիսկոպոսի օրօք իր մահուան կտակում մեծ գումարներ էր նախատեսել Լվովի ու Կաֆայի կաթողիկ եկեղեցիների համար<sup>10</sup>: Յղուած բերի նոյն էջում Բարոնչը 1393 թ. Լվովում նշում է հայուհի կաթողիկ Մազադինէ կոյսի մասին: Տեղեկութիւններ կան ԺԴ դարում լատին Կրօնական Ուխտերից անկախ գործող հայ կաթողիկ մենակեացների գոյութիւնը փաստող: Հիմնուելով Լվովի Դոմինիկեան վանքի դիւանում գտնուող Ուրբանոս Զ Պապի 1381 թ. մի կոնդակի (բուլլա) վրայ՝ Բարոնչը գրում է 1381 թ. Հռոմի Պապը Լվովի կաթողիկ հայերին յիշեալ կոնդակով Դոմինիկեան միաբանութիւն մտնե-

լու թոյլատրութիւն տուեց<sup>11</sup>: Նոյն կոնդակի մասին Զ. Լեխիցկին գրում է, թէ Ուրբանոս Զ. Պապը 1381 թ. Լվովի Դոմինիկեաններին յորդորում էր «Լվովի կաթողիկ հայ մենակեացների համար իրաւադրութիւն (Երկրիսդիկցիա) մշակեն», որով հայ կաթողիկ մենակեացները «կորցնում են իրենց անկախութիւնը»<sup>12</sup>:

Թ. Գրոմնիցկին հիմնուելով 1428 եւ 1436 թթ. փաստաթղթերից քաղած այն տեղեկութիւնների վրայ, որտեղ նշուում է, թէ Լուցկից Լվով եկած եւ հէնց Լվովում բնակուող մի քանի հայ ընտանիքների վրայ տարածուում էր ոչ թէ հայկական, այլ Մազաբուրդեան իրաւունք, եղրակացնում է, թէ դրանք կաթողիկներ էին<sup>13</sup>:

Այս եւ նման մի քանի այլ փաստերը կասկած չեն թողնում, որ լեհահայերին Հռոմի միացնելու գործը սկսել էր դեռևս ԺԴ դարից: Այսինքն՝ ճիշտ այն ժամանակ, երբ Լատին առաքեալները իրենց գործունէութիւնը աշխուժացրին Կիլիկիայում, փակ բուն Հայաստանում հիմնեցին կաթողիկ համայնքներ:

Բայց քրիստոնէական միւս ծիսակարգերի եկեղեցիները Ս. Պետրոսի Աթոռին միաւորելու շարժումը վճռական տեսք ընդունեց 1517 թ. Լուսեբրի նշանաւոր «95 դրոյթների» հռչակումից յետոյ, երբ քրիստոնէական աշխարհում, որպէս ռեֆորմացիայի արդիւնք, հանդէս եկան նոր ուղղութիւններ՝ բողոքականութիւնն ու կալվինիզմը: Ռեֆորմացիան կարճ միջոցում հաւաքեց բազմաթիւ հետեւորդներ եւ արդէն ԺԶ դարավերջին Եւրոպայի մէկ երրորդը անջատուեց հռոմէական եկեղեցուց:

1545—1563 թթ. ընդհատումներով գումարուած Տրիդենտեան ժողովը մշակեց հակառեֆորմիստական գործողութիւնների ընդհանուր ծրագիր, որի կէտերից մէկն էլ միաբարական կենտրոնացուած շարժումն էր արեւելքում:

<sup>11</sup> S. BARĄCZ, RYS DZIEJÓW ORMIAN-SKICHI, str. 107, 1869, TARNOPOL (այսուհետեւ՝ ՌԵՍ Ձեյուվ Օրմիանսկիխ):

<sup>12</sup> CZ. LECHICKI, KOŚCIOŁ ORMIAN W POLSCE, str. 39, 1928, Lwów, (Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ: Այսուհետեւ՝ Զ. Լեխիցկի, նշ. աշխ.):

<sup>13</sup> Թ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 395:

<sup>7</sup> Բարոնչ, Ժըվուր, էջ 180: Տե՛ս նաեւ՝ T. GROMNICKI, ORMIANIE W POLSCE (Հայերը Լեհաստանում), ENCYKLOPEDIA KOŚCIELNA, T. 17, str. 395, WARSZAWA, 1891 (այսուհետեւ՝ Թ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում):

<sup>8</sup> Հմմտ. Հ. Չաւրեան, Լեհահայ գաղութը եւ ներքին կեանքը, «Հայրենիք» ամսագիր, 1929 թ., թիւ 5, էջ 80—81, Բոստոն:

<sup>9</sup> Գր. Պետրովիչ, Լեհահայ, «Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ», Հանդէս Ամսօրեայ, թիւ 7—9, էջ 321, 1974 թ.:

<sup>10</sup> Ս. Բարոնչ, Ժըվուր, էջ 180-ի տող. ծանօթ.:

Ժողովից յետոյ լեհ կղերը սկսեց Լեհաստանի միւս ծիսակարգերի ժողովուրդներին Հռոմի հետ միութիւնը դաշնակել Լեհաստանում տարածուող ռեֆորմացիայի դէմ պայքարելու հետ:

Ժողովից մի քանի տասնամեակ անց (1595—96) յաջողուեց Բրեստում կայացած ժողովի որոշումների ուժով Լեհաստանի Ռուսիէն եկեղեցին միացնել Հռոմին:

Հասկանալի է լեհահայ եկեղեցին չէր կարող բացառութիւն կազմել: Ըստ Գր. Պետրովիչի տեղեկութեան, կարգինալ Ջիովաննի Կոմենդոնին, երբ 1563 թ. Լեհաստան եկաւ Տրիդենտեան ժողովի որոշումները լեհական թագաւորին ու կղերականութեանը յանձնելու, հանդիպեց նաեւ լեհահայ եկեղեցու գլուխ արքեպիսկոպոսին, այցելեց Լվովի ու Կամենեցի հայոց եկեղեցիները<sup>14</sup>: Տրիդենտեան ժողովի որոշումները Լեհաստան բերող լատին եպիսկոպոսը լեհահայոց եկեղեցու պետի հետ հայադաւանութիւնը պահելու մասին չէ, որ պիտի խօսէր: Բացի այդ՝ յայտնի է որ Ստ. Սալմաստեցի կաթողիկոսը Հայաստանի ինքնուրոյնութիւնը վերականգնելու. Հռոմի խոստումներին ի հասոյց, 1549 թ., Հռոմ էր հասցրել 1547 թ. էջմիածնի դաղտնի խորհրդակցութեան պատգամները, գրաւոր հպատակութիւն էր յայտնել Պապին եւ Հայաստան վերադարձել Լվովի վրայով<sup>15</sup>: Ենթադրուում է Ստ. Սալմաստեցին Հայաստանի ազատագրութեան գործերով շփումներ է ունեցել նաեւ լեհական արքունիքի հետ: Մեզ որեւէ փաստ յայտնի չէ: Թէ Լվովի կաթողիկ եկեղեցու պետերի հետ նա ի՞նչ բանակցութիւններ է վարել, բայց կարելի է ենթադրել, որ Հռոմի Պապին հպատակութեան թուղթ ստորագրած այս կաթողիկոսը դժուար թէ որոշ խոստումներ տուած չլինէր միութեան հարցին շուրջ: Մենք մի քիչ յետոյ կը բերենք լեհահայերին Հռոմի հետ միացնելու մի շատ ծանրակշիռ փաստ եւս. բայց մինչ այդ նըշենք, որ այդ շրջանում լեհահայերը լատին կղերի միութեանական փորձերին հանդիպաւ դրում էին այն նկատառումը, թէ իբր հայոց ծիսակարգը չնչին տարբերութիւններ ունի

լատինականից, որ իրենք առանց այդ էլ ընդունում են Հռոմի Պապի գերիշխանութիւնը<sup>16</sup>, ուստի հարկ չկայ աւելորդ ջանք թափել իրենց պաշտօնապէս Հռոմի հետ միացնելու համար: Մա անշուշտ դիւանագիտական քայլ էր, եւ, ինչպէս կը տեսնենք, որոշ ժամանակ արդարացրեց իրեն:

Կաթողիկ Միաբաններն այդ թուերին նոյնիսկ գրականութիւն տպագրեցին վերոյիշեալ տեսակէտը հիմնաւորելու համար: Գրոմնիցկին գրում է լեհ նշանաւոր հոգեւորական Ս. Լուբեչիկի Կրակովում հրատարակած երկու լատիներէն գրքոյկների մասին («Հայոց Մկրտութիւնը», 1544 թ. եւ «Հայոց Պատարագը», 1549 թ.), որոնցում հեղինակը պնդում էր, թէ հայադաւան եկեղեցու ծէսերը «չնչին ու երկրորդական տարբերութիւններ միայն ունեն լատինականից, իսկ էական գծերով երկու ծիսակարգերն էլ շատ լաւ համաձայնում են իրար»<sup>17</sup>: «Արդէն 1544 թ., — գրում է Գր. Պետրովիչը, — երեւելի լեհ գրող եւ հոգեւորական՝ Ս. Օսեխովսկին — համոզուած ըլլալով, թէ միակ տարբերութիւնը Հռոմէական եւ Արեւելեան եկեղեցիներու միջեւ կը կայանայ լեզուի եւ ծէսերու զանազանութեան մէջ, ... կը հրաւիրէր լեհ եկեղեցու առաջնորդ՝ Պ. Գամբրան, որպէսզի սուրբ եկեղեցու սահմանները ընդարձակէ՝ «Վալաքների եւ Հայերի եկեղեցիները Հռոմին միացնելով»<sup>18</sup>: Բարոնչի տուեալներով 1566 թ. յայտնի քարոզիչ Բենեդիկտ Հերբեստը «կրօնական գործերով այցելեց Լվով, եղաւ նաեւ հայոց եկեղեցում, որտեղ նրան ամէն ինչ շատ դուր եկաւ եւ հետագայում այն կարծիքը յայտնեց, թէ հայկական պատարագամատոյցը մեր (իմա՝ լատինական: Ռ. Հ.) արարողութիւններին շատ է համապատասխան ... Նոյնն էր պնդում նաեւ Հռոմի Պիոս Ե-ի պապական լեզատ, կարգինալ Կոմենդոնին»<sup>19</sup>:

Զ. Լեխիցկու կարծիքով Լվովի լատին արքեպիսկոպոս Եան Սոլիկովսկին (1585—1603) եւս մեծ տարբերութիւններ չէր գրա-

<sup>14</sup> Գր. Պետրովիչ, «Լեհ կղերի միութեանական փորձերը...»:

<sup>15</sup> Թ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 403:

<sup>16</sup> Գր. Պետրովիչ, «Լեհ կղերի միութեանական փորձերը...», Հանդէս Ամսօրեայ թիւ 7—9, էջ 294—295, Վիեննա, 1968 թ.:

<sup>17</sup> ՌԵՍ Ձեյուվ Օրմիանսկիխ, էջ 113—114:

նում հայկական եւ լատինական ծիսակարգերի միջեւ<sup>20</sup> :

Բայց միութեան նոր շրջանում լատին քարոզիչները, զբաղով պաշտօնական միութիւնը շրջանցելու լեհահայերի դիւանադիտական քայլերը եւ տեսնելով հայ եւ լատին եկեղեցիների ծիսակարգերի նմանութեան թմբկահարումը ո՛չ մի արդիւնք չի՛ տալիս, նոյն հետեւողականութեամբ վերսկսեցին բացայայտել նաեւ հայ եւ լատին ծիսակարգերի «արմատական տարբերութիւնները»՝ հայերին համարելով «անուղղելի հերձուածողներ» (Կլեմենս Գալանոս, Ալոիսիոս Պիզու եւ այլք) :

Հայերին Հռոմի միութեան բերելու գործողութիւնները, ինչպէս ասուեց, աշխուժացան Տրիդենտեան ժողովից յետոյ՝ ժէ դարում դառնալով որոշակի քաղաքականութիւն :

Լեհահայերի Հռոմի հետ միութեան ժէ դարի պատմութեան մասին բաւական դրականութիւն կայ թէ՛ օտար եւ թէ՛ հայ պատմագրութեան մէջ : Հայկական աղբիւրներից առաջինը դէպքերին ժամանակակից Առաքել Դաւրիթեցին է, որն իր Պատմութեան ԻԸ գլուխը ամբողջովին նուիրել է այդ իրադարձութիւններին : Միութեան վերաբերեալ տեղեկութիւններ են պարունակում 1636 թ. Սիմէոն դպիր Լեհացու ընդօրինակած «Վարդանի մեկնութիւն Արարածոց» մատեանի վերջում նրա թողած յիշատակարանում<sup>21</sup>, ինչպէս նաեւ Լեհահայ անյայտ մի հեղինակի ընդարձակ բանաստեղծութեան մէջ<sup>22</sup>, որը Ն. Ալիւնեանը վերագրում է Սիմէոն դպիր Լեհացուն<sup>23</sup> : Այս գործերը թէեւ Առ. Դաւրիթեցու գրքում բացակայող որոշ փաստեր են ընձեռում, բայց 1626—91 թուականների իրադարձութիւնների պատմութեան ուսումնասիրութեան տեսակէտից առանձնապէս մեծ արժէք չունեն : Ղ. Ալիւնեանի հրատարակած «Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւաստյեայ յաւելուածովք» ժողովածուն յոյժ արժէքաւոր աղբիւր

լինելով 1365 թ. մինչեւ ԺԸ դարի լեհահայ պաղովի պատմութեան համար, միութեան պատմութեան մանրամասների տեսակէտից մեղ շատ նիւթ չի տալիս Առ. Դաւրիթեցու պատմութեան համեմատ՝ լեհահայերի միութեան հետ կապուած որոշ թուականներ ճշգրտելուց բացի : Մ. Չամչեանը եւս, հիմնուելով Դաւրիթեցու վրայ, իր «Պատմութիւն Հայոց» աշխատութեան Գ հատորի ԻԸ գլխում թուցիկ շարադրում է այդ դէպքերը, բայց ուշադրութեան արժանի նոր փաստեր չի հաղորդում, բացի թերեւս նրանից, որ նշում է, թէ Նիկոլի մահուանից յետոյ թեմը գլխաւորել է Վ. Յունանեանը<sup>24</sup> :

Օտար աղբիւրներից ամենահաւաստին, «Բոնի միութիւն» ժողովածուում զետեղուած Ալոիսիոս Մարիա Պիզուի եւ անյայտ մի հեղինակի գործերն են որոնք լատիներէնից լեհերէնի վերածելով 1876 թ. տպագրել էր Ա. Պավինսկին, ուրից եւ թարգմանուել է հայերէն :

Այս իրադարձութիւններին մի քանի տողով անդրադարձել է նաեւ Բարթոլոմէոս Զիմորովիչը իր Leopolis Triplex աշխատութեան մէջ : Բայց այդ գիրքը դիտական շրջանառութեան մէջ մտաւ միայն 1899 թ., երբ առաջին անգամ տպագրուեց Լվովում<sup>25</sup> : Զիմորովիչն այստեղ փառաբանում է Նիկոլին ու իր գործը եւ այդ աշխատութիւնը առանձին աղբիւրադիտական նշանակութիւն չունի «բոնի միութեան» դէպքերին նոր փաստեր աւելացնելու տեսակէտից : Անհրաժեշտ է նշել Մ. Բարոնչը ծանօթ էր Ալ. Պիզուի, Անանուն հեղինակի ու Զիմորովիչի գործերին եւ միութեան վերաբերող իր տուեալները քաղել է այլ աղբիւրներից : Մ. Բարոնչի, Տ. Գրոմնիցկու, Չ. Լեխիցկու եւ լեհական միւս հեղինակների տեղեկութիւնների համաձայն, «բոնի միութեան»ը վերաբերող արժէքաւոր փաստեր կան Տ. Կրուսինսկու «Պարսկական պատերազմի մասին» լատիներէն գրքում<sup>26</sup> :

<sup>24</sup> Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 642—643 :

<sup>25</sup> JÓZEF BARTŁOMEJA ZIMOROWICZA PISMA DO DZIEJÓW LWOWA ODNOSZĄCE SIE. WYDAK DR. KORNELI HECK, LWÓW, 1899, str. 208 :

<sup>26</sup> T. KRUSIŃSKI, PRODUMUS AD TRAGICUM VERTENTIS BELLI PERSICI HISTORAM..., LWÓW, 1773 :

<sup>20</sup> Չ. Լեխիցկի, նշ. աշխ. էջ 47 :  
<sup>21</sup> Ն. Ալիւնեան, Սիմէոն դպիր Լեհացու երկու յիշատակարանք, Հանդէս Ամսօրեայ, 1968 թ., թիւ 4—6, էջ 252—258, վիճենա :  
<sup>22</sup> Ղ. Ալիւնեան, Կամենից Տարեգիրք, էջ 202—214 :  
<sup>23</sup> Ն. Ալիւնեան, Սիմէոն դպիր Լեհացու երկու յիշատակարանք, Հանդէս Ամսօրեայ, էջ 247—249 :

Այս հարցի մասին հայ պատմաբաններից գրել են Գ. Այվազովսկին, Ա. Ալթունեանը, Մ. Բժշկեանը, Մ. Օրմանեանը, Լէոն, Արշակ Ալպոյաճեանը, Աշ. Յովհաննիսեանը, Գր. Պետրովիչը եւ ուրիշներ : Օտար հեղինակներից կարելի է յիշել Ֆր. Զախարիասեւիչին, Թ. Գրոմնիցկուն, Վլ. Լոգինսկուն, Չ. Լեխիցկուն, Ա. Պավինսկուն, Ա. Օբերտընսկուն, նորերից՝ Մ. Զակեւսկա-Դուբասովսկին, երաժշտագէտ Զր. Կոսիցուլին եւ այլոց՝ չհաշուած արդի հայ եւ ուկրաինացի պատմաբանները (Մ. Բ. Բիլցիկի, Գ. Պ. Պինդիբեան, Ա. Գ. Աբրահամեան, Վ. Ռ. Գրիգորեան, Ն. Կ. Կրիվանոս, Վ. Բ. Գրաբովեցկի, Մ. Լ. Յովհաննիսեան եւ այլք), որոնք լեհահայերին նուիրած իրենց աշխատութիւններում թուցիկ անդրադարձել են նաեւ այդ խնդրին :

Հայ եւ օտար աղբիւրների ու պատմաբանների հաղորդած տուեալների բաղդատմամբ հարցի ամենաընդարձակ լուսաբանութիւնը տուել է Գր. Պետրովիչը, որը սակայն երբեմն հանդէս է բերել «կամաւոր» միութիւն սեպելու միտումներ (տե՛ս սոյն աշխատութեան մէջ օգտագործուած նրա զոյգ յօդուածները) :

Լեհահայերի միութեան պատմութիւնը լուսաբանելու մէջ հայ եւ օտար գիտնականների կարծիքները բաւական տարբեր են, յաճախ՝ հակադիր : Դրա հիմնական պատճառն այն է որ օտար հեղինակները, օգտուելով միութիւնն արդարացնող լատինական աղբիւրներից, այդ իրադարձութեանը մերձեցել են լատին եկեղեցու տեսակէտից :

Հայ հեղինակների մեծ մասը հիմնուել է միութեան «բոնի» էութիւնը բացայայտող հայկական աղբիւրների վրայ եւ միութեան հարցը կապել հայադաւան եկեղեցու շահերին :

Օտար հեղինակները, միութիւնը սկսելով Նիկոլի թեմակալութեան տարեթուից, յաղթարշաւը համարում են 1664 թ., երբ լեհահայերի միացման գործը ձեռքները վերցրին Լեհաստան մտած Թէատինեան կրօնաւորները՝ գլուխ ունենալով Կղեմենս Գալանոսին<sup>27</sup> : Այդ թուականի վերջերին նը-

րանց ջանքերով Լվովի մայր տաճարում Նիկոլը առաջին անգամ պատարազը մատուցեց լատին ծիսակարգը՝ հայադավան եկեղեցու ծիսակարգից անջատող կարեւորագոյն կէտերով (Գինուն ջուր խառնելը, «վասն խաչեցար» յապաւումով եւ այլն) : Նրանք հայերի Հռոմի եկեղեցուն հետ միացնող հիմնական գործիչներին են համարում Ն. Թորոսովիչին եւ Վ. Յունանեանին՝ վերջինիս դերը աւելի վճռական համարելով այդ գործում, որովհետեւ մինչեւ Յունանեանի նըստելը Լվովի թեմակալի աթոռին (1686 թ.), լեհահայ եկեղեցու պատարագամտոյցը, ծիսակարգն ու ժամասացութիւնը մեծ փոփոխութիւններ չէին կրել :

Հայ պատմագիտութեան մէջ Վ. Յունանեանի անունը միացման առիթով քիչ է շեշտուում :

Ամբողջ «մեղքը» բարդուում է Նիկոլի վրայ, իսկ միութեան սկիզբը մեծ մասամբ համարուում է 1630 տարեթիւրը :

Ոմանք լեհահայերի Հռոմի հետ միութեան մէջ կարեւոր տեղ են յատկացրել նաեւ Մելքիսեդեկ կաթողիկոսին : Վարդան Ըստկարեանն, օրինակ, հիմնուելով Ստ. Ռոշքայի ժամանակագրութեան եւ լատին աղբիւրների վրայ, նշում է Մելքիսեդեկը 1617, 1620, 1622 եւ 1623 թթ. իր աշակերտ Զաքարիա վարդապետի միջոցով Պօղոս Ե, Գրիգոր ԺԳ եւ Ուրբանոս Ը Պապերին յղած նամակներում հպատակութիւն էր յայտնել Հռոմին, եւ որ նա Նիկոլին դնում է լեհահայոց եկեղեցու գլուխը, որպէսզի նրա միջոցով միացնի լեհահայերին<sup>28</sup> : Հարցին նոյն կերպ է մերձեցել նաեւ Աղեքսանդր Պալճեանը («Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայոս», էջ 162) : Կ. Եղեանը դիտումնաւոր կերպով Մելքիսեդեկի կաթողիկամէտ հակումների մասին հաւաստի փաստերը դուրս քողնելով հայոց կաթողիկոսին յղած լեհահայերի 1631 թ. նամակից<sup>29</sup>, հակադիտական մտեցում է ցուցաբերել խնդրոյ

կութեան նպատակով» տե՛ս ENCYKLOPEDIA STAROPOLSKA, T. 2, str. 710, 1937, WARSZAWA: WIELKA ENCYKLOPEDIA POWSZECHNA, PWN, T. 11, str. 431, 1968, WARSZAWA :

<sup>28</sup> Վ. Ըստկարեան, Եկեղեցական Պատմութիւն, Վիեննա, 1872, էջ 379 :

<sup>29</sup> Բոնի միութիւն, էջ ԻԵ, տող. թիւ 2-րդ ծանօթագրութիւնը :

<sup>27</sup> Անհրաժեշտ ենք համարում նշել, որ լեհ պատմագիտութիւնը Թէատինեանների առաջին անգամ լեհաստան մտնելը կապում է հայերի հետ՝ նշելով, որ նրանք Լեհաստան մտան «Հայ կղերի դաստիարա-

առարկայ հարցի մեկնաբանութեան մէջ՝ անհին համարելով Մխիթարեան պատմաբաններին ճիշտ կարծիքները: Ահոն առանց որեւէ հիմքի, ընդհանրապէս ժխտում է Մելքիսեդեկի միութենական հակումը: Այլ. Պիղուն, Անանունը, Չ. Լեխիցկին եւ այլք որեւէ խօսք չեն ասում Մելքիսեդեկի Հոռոմի հետ միութիւն ընդունած լինելու մասին: Միմոն դպիր Լեհացին միայն նշում է, թէ ինքը 1611 թ. Չաքարիա Վարդապետի հետ միասին տեսակցել է Պապին եւ նրան տուել Մելքիսեդեկի նամակն ու նուէրները, որոնցից Պապը միայն ակնակառ խաչն է ընդունել՝ միւս նուէրները ետ տալով: Այստեղ այդ կաթողիկոսի միութենական հակումի մասին խօսք չկայ: Մինչդեռ Մելքիսեդեկի Հոռոմի եկեղեցուն հետ միութիւն ընդունած լինելու Ստ. Ռոչչայի, Վ. Ըստկարեանի, Աղ. Պալճեանի եւ այլոց տուեալները ճշտուում են Մովսէս Տաթեւացի կաթողիկոսին յղած Լըվովահայերի 1631 թ. Յուլիսի 25-ի նամակից, որն իր գրքում զետեղել է Ֆր. Չախարիասելիքը: «Առաջին յանցաւորը հանդիսանում է Գո Սրբազնութեան նախորդ երջանկայիշատակ Մելքիսեդեկ պատրիարքն ու կաթողիկոսը. նա իսկական եւ զուտ ունիտոր էր տակաւին Պողոս Հինգերորդ Հոռովի Պապի ժամանակներից (1605—1620: Ռ. Հ.), որը նրա մօտ ուղարկել էր իր նուիրակ Չաքարիա վարդապետին, այն ժամանակուան Պոլսի արքեպիսկոպոսին, որ հաստատուում է հէնց նոյն պատրիարք Մելքիսեդեկի լատինական գրքերում տպուած թղթով: Այդ թղթի մէջ, որի պատճէնը կցում ենք ընդ սմին, Մելքիսեդեկը ճանաչում է Պապին իրեն գլխաւոր եւ յայտնում նրան իր հնազանդութիւնը: Երկրորդ ապացոյցը դրան, — որ Մելքիսեդեկը ունիտոր է —, որ երբ այստեղ յիշուած Մելքիսեդեկ կաթողիկոսը 1625 թ. եկաւ մեզ մօտ Լվով — երեւի ի մեծ դժբախտութիւն մեր —, նա ցոյց տուեց մեզ Գրիգոր ԺԳ. Պապի իրեն ուղղած թուղթը՝ գրուած լատիներէն լեզուով, որից երևում է, որ Մելքիսեդեկը ենթարկուել է Պապին: Պապի այդ թուղթը Մելքիսեդեկին հասցրել էր Ջուղայի աւազերէց Յովհաննէսը, որ երջանկայիշատակ Մելքիսեդեկի կողմից պատուիրակ էր ուղարկուած Հոռոմ՝ Պապի մօտ. այդ թղթի պատճէնը կցում ենք: Երրորդ ապացոյցը մեր ակնհայտով լսածն է, որովհետեւ երբ նա այստեղ մեզ մօտ Լըվովում եպիսկոպոսներ էր ձեռնադրում, նը-

րանց հրամայեց կարգաւ հոռովէական եկեղեցու հաւատոյ հանգանակը, այսինքն՝ այն յաւելումը, որ Սուրբ Հոգին բխում է Հօրից եւ Որդուց: Բացի այդ, նոյն կաթողիկոս Մելքիսեդեկը հանդիսանում է այս բոլոր շարիքի գլխաւոր պատճառն ու հիմքը, որովհետեւ երբ մենք նրան խնդրում էինք եպիսկոպոս չձեռնադրել այդ թշուառական եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչին՝ ներկայացնելով նրան կարեւոր հիմքեր, այսինքն՝ որ երբ տասարդ մարդ է, անդարդացած, արդէն շատ ոճիրներ գործած եւ, ուրեմն, անարժան մեզ եպիսկոպոս լինելու, եւ որ մեր մէջ մեծ ատելութիւն եւ երկպառակութիւն է առաջ բերում, այդ բոլորին այսպէս պատասխանեց մեզ ինքը կաթողիկոսը եւ նրա մօտ եղած իր նման եպիսկոպոսները. մեր ուզածն էլ հէնց այն է, որ ձեր մէջ երկպառակութիւն ընկնի, ահա ձեր միջեւ դրուած սուրը»<sup>30</sup>: Չախարիասելիքի վրայ յենուելով Մելքիսեդեկին Հոռոմի հետ միութիւն ընդունած է համարում նաեւ Թ. Գրոմիցկին (Հայերը Լեհաստանում, էջ 404):

Մելքիսեդեկի լատինական հակումի մասին տեղեկութիւն է տալիս նաեւ Ս. Բարոնը. «մօտ 1624 թ. Լվով եկաւ էջմիածնի պատրիարք Մելքիսեդեկը, որը չկարողացաւ Պարսից թագաւորին վճարել 2000 դուկատ հարկը, ստիպուած էր լքել իւր մայրաքաղաքը եւ զբաղեցնել Լվովի թեմակալի աթոռ՝ Մեսրոպի մահուանից յետոյ... Բայց քանի որ կոպ էր հայ եկեղեցու միաբանը Հոռովին, ժողովուրդը նրան ասում էր»<sup>31</sup> (ընդգծումներն իմը: Ռ. Հ.):

<sup>30</sup> Հ. Չալեան, Լեհահայ գաղութը եւ ներքին կենսը, «Հայրենիք» ամսագիր, է տարի, թիւ 12 (84), 1929 թ., Բոստոն, էջ 148—149: Բնագիրը տե՛ս: FR. ZACHARYJASIEWICZ, WIADOMOŚCI O ORMIANACH W POLSzcZcZc, Lwów, 1842, str. 46—47:

<sup>31</sup> Ս. Բարոնը, Ժըվուսը, էջ 191: Մեզ մատչելի այլ աղբիւրներից յայտնի չէ նաեւ Ս. Բարոնի եւ Բիշոֆի այն տեղեկութիւնը, թէ Մելքիսեդեկը Մեսրոպի մահուանից յետոյ զբաղեցրել է Լվովի թեմակալի աթոռը: Մելքիսեդեկի Լվով ժամանելու մասին եւս սկզբնաղբիւրներն տարակարծիք են: Դաւրիժեցու «Պատմութիւնից» երևում է սա Լվով է եկել 1626 թ.: Կամենից, «Տարեգրք հայոց»-ի ժամանակագիրը եւս նշում է 1626 թ. (Ղ. Ալիշան, Կամենից, էջ 137): Նոյնն են յայտնում Անանուն հեղինակն ու Չամչեանը (Բոնի Միութիւն, էջ 154, Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Հտ. Գ, էջ 630—632), Այլ. Պիղուն գրում է, թէ՛ 1623 թ. (Բոնի Միութիւն, էջ 21) Միմոն Լեհացին՝ 1628: Ֆ. Բիշոֆը նշում է, որ 1625 թ. Մել-

Մ. Օրմանեանի հաշուումներով Մելքիսեդեկը մօտ 1624 թ. ժամանեց Պոլիս, այստեղի պատրիարք Յովհաննէս Խուլի ու սրա գործակից Չաքարիա Վանեցու հետ միութենական խմբակցութեան մէջ միաւորուելով քարոզում էր Հոռոմի հետ միութիւն, որի համար ժողովուրդը նրան հալածեց քաղաքից»<sup>32</sup>:

Այսպիսով, աղբիւրները միահամուռ խօսում են Մելքիսեդեկի միութեան յարած լինելու օգտին: Բայց քանի որ նրա հեղինակութիւնը խիստ ընկած էր Լեհահայերի մօտ, ուստի չենք կարծում, թէ նա որեւէ շօշափելի դեր ունեցած լինի Լեհահայերի միութենական դործին մէջ՝ բացի թերեւս նրանից, ինչ որ արեց, այն է՝ Լեհահայերի կամքին հակառակ, Նիկոլ Թորոսովիչին դրեց Լեհահայ թեմակալի դահին:

Ինչ վերաբերում է միութեան բուն պատճառներին, ապա, ինչպէս յօդուածի սկզբում արդէն ակնարկել էինք, այդ երեւոյթը դուրս է գալիս առանձին անհատների ու համայնքների շրջանակներից եւ մի շարք քաղաքական, ընկերային ու հասարակական փոխկապակցուած հանդամանքներով սերտորէն առնչուում է Հայ ժողովրդի պատմութեան տուեալ փուլի իրադարձութիւններին, մասնաւորապէս Հայ ազատագրական շարժումները շահարկելու, ինչպէս նաեւ Հոռոմի քարոզչական մեքենան օգտագործելու միջոցով արեւելքում գերիշխանութիւն ձեռք բերելու եւրոպական պետութիւնների քաղաքական ծրագրերին:

Բացի այս՝ այդ երեւոյթը լինելով պատմական զարգացման որոշակի շրջանի արդիւնք, ունեցել է զարգացման մի քանի փուլեր, որոնց միասնութեան մէջ պէտք է դիտել այն:

Այժմ անցնենք Հայ եւ օտար սկզբնաղբիւրների քննութեանը<sup>33</sup>:

Քիսեդեկը եկաւ Լվով ու զբաղեցրեց թեմակալի աթոռը: Թ. Գրոմիցկին նրան հետեւելով նաեւ Չ. Լեխիցկին ու Գր. Պետրովիչը, հիմնուելով Լվովի քաղաքապետարանի գիւնդական թղթերի վրայ, նշում են. Մելքիսեդեկը Լվով է մտել 1626 թ. Մայիսի 2-ին (Թ. Գրոմիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 404):

<sup>32</sup> Մ. Օրմանեան, Ազգապատում, Հտ. Բ, էջ 2369—2370:

<sup>33</sup> Մենք սկզբնաղբիւր ենք համարում նաեւ Ս. Բարոնից, քանի որ նրա բերած տեղեկութիւնների մի մասը հիմնուած է դիւնական փաստաթղթերի վրայ:

Հայ պատմագիտութիւնը Լեհահայերի միութիւնը դիտում է ո՛չ թէ «կամաւոր» միութիւն Հոռովէական եկեղեցուն, այլեւ իրենց կամքին հակառակ «ստիպողական» ձուլում:

Թէ՛ Հայ եւ թէ՛ օտար պատմագիտութիւնը Լեհահայերի միութիւնը Հոռոմին սկսում է Ժէ դարի 20-ական թուերի վերջերից: Բարոնիցի եւ Լեհ միւս պատմաբաններից քաղած եւ հայկական աղբիւրների սուղ փաստերը լրացնող տուեալները սակայն ցոյց են տալիս, որ Նիկոլը առաջին թեմակալը չէր, որ ինքնակամ միութիւն ընդունելով, լատին կղերականութեան եռանդուն ջանքերով ձգտեց Հոռոմի միացնել Լեհահայերին: Լատին կղերը Լեհահայերին միացնելու փորձեր արել է նաեւ շատ աւելի վաղ, վերոյիշեալ Տրիդենտեան ժողովից անմիջապէս յետոյ 1560—70-ական թուերին:

Լեհ պատմաբան Չ. Լեխիցկու տեղեկութիւններից պարզուում է Լեհահայ թեմի 1557—1568 թթ. առաջնորդ Գրիգոր Բ. Լեհահայ եկեղեցին Հոռոմին միացնելու որոշակի ձգտումներ է ունեցել, բայց «Ժողովրդի մէջ կաթոլիկանայու ցանկութիւն չլինելու»<sup>34</sup> պատճառով գործը զլուխ չի եկել: Լեխիցկին հաղորդում է նաեւ, թէ Գրիգոր Բ. ի եւ Հայ համայնքի «աւազներ» միջեւ հակասութիւններ են եղել «եկեղեցին ղեկավարելու» եւ կազմակերպչական այլ հարցերի շուրջ եւ որ սա լվովահայ «աւազներ» դէմ 1568 թ. բողոքել է Ջիգմունտ Ալգուստ թագաւորին որը Լվովի մի քանի լատին եպիսկոպոսներից կազմած յանձնախմբով քննել է թեմակալի բողոքը եւ նրան հաշտեցրել ժողովրդի հետ»<sup>35</sup>: Լեհ պատմաբանը այսքանից բացի ոչ մի լրացուցիչ տեղեկութիւն չի հաղորդում այդ վէճի մասին, ուստի այն տպաւորութիւնն է ստեղծուում, թէ ժողովուրդը հաշտուել էր թեմակալի հետ: Այս իրադարձութիւնների մասին աւելի հարուստ տեղեկութիւններ է հաղորդում Թ. Գրոմիցկին: Նա ոչ միայն բերում է Գրիգոր եպիսկոպոսի բողոքագրի չորս հիմնական կէտերը, այլեւ վէճը լուծելու համար թագաւորի կազմած վերոյիշեալ յանձնախումբի վեց կէտանոց պայմանագիրը, որը թագաւորի հաստատման էր ներկայացուել

<sup>34</sup> Չ. Լեխիցկի, Նշ. աշխ., էջ 44:  
<sup>35</sup> Անդ., էջ 42—43:

1569 թ. Մայիսի 16-ին<sup>36</sup>: Թ. Գրոմնիցկին թէեւ չի նշում հաշտութեան մասին, բայց շարադրանքից երեւում է այդպիսի հաշտութիւն չի եղել:

Ս. Բարոնչը գրում է, թէ այս եպիսկոպոսը ինչ-որ «սխալներ» համար 1568 թ. ուխտագնացութեան է մեկնում «Սուրբ երկիր» (Իմա՝ Երուսաղէմ), ապա Հոռոմ<sup>37</sup>:

Գրիգոր եպիսկոպոսի եւ լեհահայ համայնքի միջեւ ծագած հակասութիւնների վերաբերեալ թէեւ շատ սեղմ, բայց լեհական աղբիւրների տուեալները հաստատող յիշատակութիւն է պահպանուել Ստեփան Ռոչքայի ժամանակագրութեան մէջ, ուր խօսք կայ նաեւ յիշեալ եպիսկոպոսի միութենական ձգտումների մասին, «...Սա (Գրիգորը: Ռ. Հ.) զբաղւած էր լեհական սուրբ զբառանայքս ընդդէմ կամաց նորին դատէին եւ ի հոգեւոր իրս հակառակին նմա, կոչեաց ի դատ՝ առ նոյն լեհաց արքայն (Սիգիզմունդ Գ.: Ռ. Հ.), որ յամի 1569 Վոլոնայ, զի դատարանն ի հոգեւոր իրաւունսն բնաւ մի խառնեցին... Յամի Ռոժի (1568) Գրիգոր Արքեպիսկոպոսն Լէոպոլսի թողեալ զաթոն վասն հերձուածողութեան եւ հակառակութեան ժողովրդոցն՝ երթայ յԵրուսաղէմ, եւ անտի ի Հոռոմ<sup>38</sup>»:

Չ. Լեխիցկու, Թ. Գրոմնիցկու, Բարոնչի ու Ստ. Ռոչքեանի տուեալների համադրութիւնից կարելի է եզրակացնել. Լվովում աւազանու եւ թեմակալի միջեւ ծագած այս «վէճը» ոչ այլ ինչ է, քան եթէ Նիկոլ Թորոսովիչի շրջանում առաջացած հակասութիւնների նախատիպը: Իրօք, թէեւ Լեխիցկին գրում է թագաւորը 1568 թ. Գրիգոր եպիսկոպոսին հաշտեցրեց «աւազանների» հետ, բայց Ս. Բարոնչի ու Ստ. Ռոչքայի տուեալներով սա իր գործած ինչ որ սխալների համար այդ նոյն թուին մեկնում է Երուսաղէմ, ապա Հոռոմ: Իսկ Գրոմնիցկին գրում է, թէ թագաւորի հաստատած վերոյիշեալ վեց կէտանոց պայմանագիրը Գրիգոր եպիսկոպոսին չի բաւարարել եւ նա իր գործերը կարգաւորելու համար մտադրուած է եղել միանալու «ուժեղ իշխանութիւն ունեցող

<sup>36</sup> Թ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 390-400:  
<sup>37</sup> Ժբվորը, էջ 137:  
<sup>38</sup> Ստ. Ռոչքա, Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964 թ., էջ 112:

Հոռոմի Պապին<sup>39</sup>»: Ճշտուած է նաեւ, որ 1568 թ. այդ եպիսկոպոսի դահակալութեան վերջին տարին էր, որից յետոյ լեհահայ թեմը 11 տարի թեմակալ չի ունեցել: Հետեւաբար «միութեան ցանկութիւն չունեցող» Լվովահայերը նրան վտարել են պաշտօնից՝ հակառակ դէպքում այդ 11 տարիների ընթացքում նա պիտի որ «սխալները» շտկած լինէր ու վերադառնար իր աթոռը: Իսկ Լեհաստանում ռեֆորմացիայի դէմ պայքարող կաթոլիկ եպիսկոպոսներից բաղկացած հաշտարար յանձնախումբը չէր կարող անկողմնակալ դիրք բռնած լինէր լեհահայերին միացնելու ձգտող թեմակալի ու ժողովրդի միջեւ ծագած վէճը լուծելու համար: Հետեւաբար այդ հաշտեցումը միութեան մէտ եպիսկոպոսին հովանաւորելու անյաջող գործողութիւն պիտի համարել:

Եթէ Գրիգոր եպիսկոպոսի վերաբերեալ եղած սուղ տեղեկութիւնների պատճառով մեր վերոյիշեալ դատողութիւնները կարող են ոչ այնքան համոզիչ թուալ, ապա նրա յաջորդի մասին Ս. Բարոնչի հաղորդած տուեալները կասկած չեն թողնում լեհահայերին միութեան մղելու նախանիւթեան շրջանի փորձերի մասին:

«1579 թ. Յունիսի 28-ին, — համապատասխան վաւերագիրը յղելով գրում է Բարոնչը, — թագաւորից (Ստեփան Բատորից: Ռ. Հ.) Լվովի եպիսկոպոսի աթոռին հաստատուելու զիր ստացաւ Բարսուլմաս Բոգդանովիչը: Սա չկարողանալով կոտրել հաշտագրութեամբ մէջ լեհահայերի տեւական յաւառութիւնը, երեք տարի ետք հեռացաւ եպիսկոպոսութիւնից, որի տեղը զբաղեցրեց Սուչավայից Լվով եկած Մուրապիլայի Յովհաննէս (Յան) եպիսկոպոսը<sup>40</sup>» (ընդդժմին իմը: Ռ. Հ.): Չ. Լեխիցկին լրացուցիչ դիւանական աղբիւրներից քաղած տուեալներով ամբողջացնում է Բարսուլմաս Բոգդանովիչի մասին յայտնած Բարոնչի տեղեկութիւնները. «...Սա Տրապիզոնից էր, — գրում է Լեխիցկին, — որին որպէս եպիսկոպոս, 1579 թ. Յունիսի 12-ին, հաստատեց Ստեփան Բատոր թագաւորը: Սխիզմատիկների (իմա՝ հայերի) դատած այս թեկնածուն եւս չարդարացրեց նրանց սպասելիքները: Շուտով բացայայտուեցին նրա լատինահակ միտումները եւ երեք տարի թեմը ղեկավարե-

<sup>39</sup> Գրոմնիցկի, նշ. աշխ., էջ 400:  
<sup>40</sup> Ռու Ջելով Օրմիանսկիս, էջ 116:

լուց յետոյ ստիպուած եղաւ 1582 թ. հեռանալ ասպարէզից<sup>41</sup>»:

Այս տուեալները ցոյց են տալիս որ միութեան յարած թեմակալի միջոցով լեհահայերին միութիւն պարտադրելը առկայ էր դեռեւս Նիկոլի Հոռոմի եկեղեցու հետ միութիւնից 50—60 տարի առաջ: Ուստի լեհահայերի միութիւնը կարելի է սկսել ոչ թէ 1630 թ., ինչպէս ընդունուած է, այլ 1560-ական թուերից: Եւ եթէ 1568—1581 թթ. իրադարձութիւնները այն արձագանքը չունեցան, ինչ Թորոսովիչի հետ կապուած դէպքերը, պատճառն այն էր, որ այդ շրջանում ռեֆորմացիայի հետեւանքով Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին ինքն էր գտնուում վտանգաւոր կացութեան մէջ:

Այսպէս՝ արդէն 1555 թ. սէյմում ռեֆորմացիայի կողմնակիցները յաջողացրին ռեֆորմատիկ եկեղեցիների ազատ դործունէութիւնը օրինականացնել: Հակառեֆորմականներին միայն 1569 թ. յաջողուեց արքայական հրովարտակի ուժով բոլոր աշխարհիկ իշխանութիւնների օժանդակութիւնը ստանալ ռեֆորմացիայի կողմնակիցներին պատժելու համար: Բացի այդ՝ լեհահայերին Հոռոմի հետ միացնելու մէջ կարեւոր դեր ունեցած Յիսուսեանք դեռ նոր էին հաստատուել Լեհաստան (1564 թ.) եւ հիմնական ուժերը կենտրոնացրել էին Լեհաստանում արագ տարածուող եւ արդէն ժողովուրդին 20—25 տոկոսը իր կողմը դարձած<sup>42</sup> ռեֆորմացիայի դէմ պայքարելով, եւ ինչպէս տեսանք, սկզբնական շրջանում մտածում էին հայ եւ լատին ծիսակարգերի «չընչին տարբերութիւնները» վերացնելու կերպով դործը հեշտութեամբ գլուխ բերելու վրայ: Բացի այդ, ամենակարեւորը՝ այդ շրջանում բաւարար չափով պարարտ չէր այն հողը, որը լատին կղերի միութենական փորձերը Լեհաստանում դաշնակէր հայ ազատագրական պայքարի հեռանկարին: Մի խօսքով քաղաքական կացութիւնն այնպիսին էր, որ կաթոլիկ հոգեւորականութիւնը պատրաստ չէր աւելի մեծ ուժերով արդիւնաւէտ յաջողութիւն ձեռք բերել լեհահայոց վրայ, ուստի Գրիգորն ու Բարսուլմաս Բոգդանովիչը աչքի ընկնող փոփոխութիւններ չկարողացան կատարել լեհահայ եկեղեցու մէջ:

<sup>41</sup> Չ. Լեխիցկի, նշ. աշխ., էջ 44:  
<sup>42</sup> SŁOWNIK HISTORII POLSKII, էջ 401, WAR-SZAWA, 1973.

Այնուհանդերձ, Միարարներն այդ փորձերն արեցին՝ ըստ երեւոյթին օգտադործելով նաեւ Ստեփան Բատորի (Թագաւորել է 1576—1586 թթ.) խոստումներ հայերին՝ Հաստատանի ազատագրութեան դործին օժանդակելու մէջ՝ թէեւ Լեհաստանն այդ ժամանակ այն երկիրը չէր, որի հետ հայ ազատագրական շարժման դործիչները մեծ յոյսեր կապէին<sup>43</sup>: Բայց Բարոնչի տուեալը բաւական ծանրակշիռ կռուան է ցոյց տալու համար, որ լատին կղերը ձեռքից բաց չէր թողնում հայերին Հոռոմի եկեղեցուն կապելու ամէն առիթ:

Այսպիսով՝ լեհահայերի Հոռոմի հետ պաշտօնական միութեան սկիզբը պէտք է առնուազն 60 տարով ետ տանել եւ 1560—1630 թթ. ընդունել որպէս այդ երեւոյթի նախնական շրջան:

Միութեան վաւերական կամ նոր շրջանը սկսուում է 1630 թ. Նիկոլի Հոռոմի յարումից որ անընդհատ շարունակուում է մինչեւ 1691 թ. սինդոնների որոշումները, որոնցում լեհահայոց խզումը էջմիածնից, եւ հայ եկեղեցու դաւանութիւնից, իրաւական տեսք ստացաւ:

Բարոնչի տուեալներն առանձնապէս առատ են միութեան վաւերական շրջանի վերաբերեալ (1630—1691):

Այժմ Բարոնչի եւ լեհ միւս պատմաբանների ընձեռած փաստերը դէպքերին ժամանակակից աղբիւրների տեղեկութիւններին բաղդատելով, հակիրճ ներկայացնենք միութեան վաւերական շրջանի հետ կապուած իրադարձութիւնները՝ շեշտը դնելով այն փաստերի վրայ, որոնք այս կամ այն չափով կապ ունեն ազատագրական շարժման լեհական կողմնորոշման պատմութեանը:

Առ. Դաւրիժեցու տուեալներով, երբ հայոց կաթոլիկոսի նուիրակ Խաչատուր Կեսարացին Լվովի եկեղեցում նզովեց Նիկոլին եւ դուրս եկաւ այնտեղից, եկեղեցին լքեցին նաեւ լեհահայ աւազանին, հողեւորականութիւնն ու ժողովուրդը: Դրանից յետոյ լեհահայ համայնքի պետերը եկեղեցին փակում են, բանալիները վերցնում որ Թորոսովիչը ներս չմտնի: Նիկոլն այս քայլին

<sup>43</sup> Դիտարկուող շրջանում հայերը հիմնականում բանակցում էին Հոռոմի ու Վենետիկի հանրապետութեան հետ:

պատասխանում է Հոռմի հետ միութիւն ընդունելով՝ ըստ Դաւրիթեցու, Ս. Լեհացու եւ Չամչեանի՝ Յիսուսեանների եկեղեցում, ըստ Ալոխիոս Պիղուի, Անանուն հեղինակի եւ Բարոնչի՝ Կարմելիտեանց բոկոսն հայերի եկեղեցում<sup>44</sup> (1630 թ.) :

Դրանից յետոյ Նիկոլն ու լատին կղերը զինուորներին հետ պաշարում են հայոց եկեղեցին եւ մի քանի անգամ բանալիները պահանջելուց եւ հայերից մերժուելուց յետոյ ջարդում են եկեղեցու դռները, բանալիները յանձնում Նիկոլին: Ընդ որում Բարոնչի տուեալներով, լեհական Սիգիզմունդ Գ թագաւորը դեռեւս 1629 թ. էր հաստատել Նիկոլի թեմակալութիւնը<sup>45</sup>:

Դրանից յետոյ Նիկոլը, ըստ Բարոնչի, 1634 թ. վերջերին ուղեւորուեց Հոռմ՝ իր յարումը Ս. Պետրոսի Աթոռին մօտ վաւերացնելու համար: «Ուրբանոս Ը Պապը խիստ ուրախացաւ... եւ ի նշան իր սիրոյ ու բարեկամութեան, նրան տուեց արքութեան աստիճան<sup>46</sup>, որից մինչեւ օրս օգտուում են իր յաջորդները... Երկիր վերադառնալով անուանուեց Վլադիսլավ Դ-ի քարտուղարը... իր ծառայութիւնների համար Հոռմէական կայսրից ստացաւ Ս. Միքայէլի շքանշան<sup>47</sup>:

Նիկոլ Թորոսովիչի այդ ուղեւորութեան մասին Ա. Դաւրիթեցին ոչինչ չի հաղորդում, գուցէ եւ տեղեակ էլ չէր: Նիկոլի ուղեւորութեան մասին մանրամասնութիւն-

ներ չեն հաղորդում նաեւ այլ աղբիւրները: Փաստորէն Նիկոլին, ըստ Բարոնչի, Պապը դարձնում է արքեպիսկոպոս եւ լեհահայոց թեմը ենթարկում ոչ թէ տեղական հոգեւոր իշխանութիւններին, այլ անմիջապէս իրեն: Այսպէս լեհահայ եկեղեցին որպէս անկախ միաւոր անմիջապէս ենթարկուում էր Հոռմին: Հակադրելով միութեան գաղափարին հակամիտ լեհահայ գաղութի երեւումն տարբերին:

Հոռմից ետ դառնալուց յետոյ, Յիսուսեան հայերը Թորոսովիչին օգնում էին իր գործը շարունակելու մէջ (տե՛ս, Ռըս Ջեյով Օրմիանսկիս, էջ 121): Առաքել պատմագիրը թէեւ յիշատակում է թէ Նիկոլը հայերից «յափշտակեց» իրենց եկեղեցին, բայց չի յայտնում միութեան դէմ լեհահայերի դիմադրական ուժն ու նախնեաց հաւատը պահելու վճռականութիւնը փաստող մի ուրիշ իրողութիւն: Երբ Նիկոլը հայերից «յափշտակում է» Լվովի բոլոր եկեղեցիները, նրանք հրաժարուում են մտնել եկեղեցիները՝ պահանջելով գոնէ մի եկեղեցի տրուել իրենց: Անանուն հեղինակի պատմելով «Եւ իբրեւ ոչինչ ազգեցին Նիկոլի ո՛չ աղաչանք եւ ոչ սպառնալիք զի դարձուցէ նոցա գէթ զմին յեկեղեցեացն՝ աղօթարան արարին իւրեանց տուն մի մասնաւոր եւ զպաշտամունսն կատարէին, թողեալ, զի տիրեցէ Նիկոլ քափուր եկեղեցեացն<sup>48</sup>»: (Ընդգծումս իմը: Ռ. Հ.):

Բարոնչը, յենուելով Լվովի հայոց եկեղեցու դիւանական թղթերի եւ այլ աղբիւրների վրայ, Անանուն հեղինակի տուեալները հարստացնում է հայ պատմագիտութեան ուշադրութիւնից վրիպած որոշակի անուններով ու փաստերով: Նրա տուեալներով Լվովի Հաճկատար կոչուող վանքի կողքը գտնուում էր վաղուց աւերուած Ս. Սաշ մատուռը: Նիկոլի քրոջ ամուսին, Լվովցի հարուստ վաճառական Սահակ Ազոպսովիչը այդտեղ կառուցում է փայտաշէն մի եկեղեցի՝ հայադաւաններին իրբեւ աղօթատեղի: 1637 թ. Նիկոլը Ազոպսովիչին խնդրում է եկեղեցին բացել, իրեն ցոյց տալ: Երբ Ազոպսովիչը եկեղեցին բացել է տալիս, նախնական պայմանաւորութեան համաձայն լատինների կուսակիցներ լցուում են եկեղեցին, բանալին խլում Ազոպսովիչից,

<sup>48</sup> Բռնի Միութիւն, էջ 156:

<sup>44</sup> Չեւլով Լեիեցկին առանց աղբիւրը նշելու, գրում է թէ Նիկոլը դեռեւս 1629 թ., թագաւորից իր պաշտօնը հաստատելուց անմիջապէս յետոյ, Յիսուսեան արքեպիսկոպոսի մօտ անհատապէս ընդունել էր միանալ Հոռմի, իսկ 1630 թ. նա ուղղակի «հրապարակաւ թարմացրեց իր դաւանափոխութիւնը»: (Լեիեցկի, նշ. աշխ., էջ 55-56): Եթէ այս փաստը համադրենք նոյն պատմաբանի այն պնդմանը, թէ Թորոսովիչը Յիսուսեանների հովանաւորութիւնը ստանալուց յետոյ նրանց միջոցով կարողացաւ անմիջական կապերի մէջ մտնել արքունիքի ու Լվովի բարձրաստիճան հոգեւորականութեան հետ (նոյն տեղը), կարող ենք ենթադրել, որ Նիկոլը Յիսուսեանների միջնորդութեամբ թագաւորից ստացել էր իր հաստատումը՝ փոխարէնը Յիսուսեաններին խոստանալով միանալ Հոռմի: Եւ երկրորդ՝ Դաւրիթեցու, Անանունի եւ Պիղուի տուեալը, թէ նա միութիւնը ընդունեց Յիսուսեանների մօտ, ճշտուում է:

<sup>45</sup> Ռըս Ջեյով, էջ 120:  
<sup>46</sup> «Ռըս Ջեյով Օրմիանսկիս» աշխատութեան մէջ Բարոնչը նշում է, Նիկոլը արքեպիսկոպոսութեան աստիճան ստացաւ 1635 թ. Յունիսի 18-ին:  
<sup>47</sup> Ժըվոտը, էջ 333-334:

հայադաւաններին վտարում՝ նաեւ այդ եկեղեցուց<sup>49</sup>: «Անալով հայերի բողոքներին, — շարունակում է Բարոնչը, — Վլադիսլավ Դ-ն 1638 թ. հրամայեց Ս. Սաշ եկեղեցին վերադարձնել հայերին, որը երբեք չկատարուեց. «1643 թ. Փետրուարի 14-ին կարդինալ Բարբերին Հռովից յատուկ նամակով Լվովի լատին հոգեւորականութեանը պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնեց հայոց արքեպիսկոպոսին ցոյց տաւած օժանդակութեան համար՝ խնդրելով հետագայում եւս օգնել նրան, երբ նա օգնութեան կարիք գգայ<sup>50</sup>»: (Ընդգծումս իմը: Ռ. Հ.): Պահպանուել է Ուրբանոս Ը Պապի 1637 թ. Մարտի 4-ի նամակը Լեհաստանի թագաւորին, լեհական եկեղեցու պետին ու «Մուսկայի վոյեվոդ» Ստ. Լեուրովիչին, որտեղ նա այդ գործիչներին «խնդրում է, որպէսզի իրենց հեղինակութեամբ պաշտպանեն հայերի միութիւնը<sup>51</sup>»: Ստ. Ռոշքայի տուեալներով, երբ Փիլիպպոս կաթողիկոսը Պոզոս Պիրոմալիի միջոցով լեհահայերի ու իր անունից Հոռմի Ուրբանոս Պապին խնդրում է, որպէսզի Պապը «թերեւս հրամայեցէ արքեպիսկոպոսին թոյլ տալ նոցա, (Լեհահայերին: Ռ. Հ.) մնալ յառաջին կրօնին» Պապը 1640 թ. Յունիսի 16-ին «գրեցէ թուղթ առ թագաւորին լեհաց խնդրելով զի օգնեցէ Նիկոլայոսին. եւ առ Փիլիպպոս կաթողիկոսն, յորդորելով զսա բազում վրկայութեամբք եւ օրինակօք... գալ յուղղափառութիւն<sup>52</sup>»: Ռոշքայի յիշատակած նամակը, որը Հայաստան էր հասցրել Հաւաստափիւռ Ժողովի կողմից հայերին միութեան յորդորելու ջրկուած Պոզոս Պիրոմալիին, Փիլիպպոս կաթողիկոսին, իրօք, յորդորում էր վերսկսել Մովսէս Տաթեւացու հետ սկսուած միաբանական բանակցութիւնները<sup>53</sup>:

Հայերի միութիւնը շուտափոյթ վերջաւորելու Ուրբանոս Ը-ի կեցուածքի մասին է խօսում նաեւ լեհ պատմաբան Լեուզիլիզ Կորվիլի բերած հետեւեալ փաստը. «Ուրբանոս Ը Պապը, ցանկանալով հայերին որքան հնարաւոր է շուտ հակել միութեանը,

ուսական Դոմինիկեաններին յորդորում էր հայերէն սովորել<sup>54</sup>»:

Վերոյիշեալ եւ մի շարք այլ փաստերն, այսպիսով, անհիմն են դարձնում Ս. Բարոնչի (եւ նրա ազգեցութեամբ նաեւ լեհ մի քանի պատմաբանների) այն կողմնակալ տեսակէտը, թէ իբր ոչ միայն Հոռմը, այլեւ սկզբնական փուլում նոյնիսկ Յիսուսեանք քիչ դեր են ունեցել միութեան հարցին մէջ, թէ իբր հայերն իրենք էին Հոռմը վիչ եւ Թորոսովիչ գերդաստանների ղեկավարութեամբ երկու բանակի բաժանուած<sup>55</sup> պայքարում իրենց թեկնածուին թեմակալի աթոռին դնելու համար, եւ, որ իբր Թորոսովիչի յաղթանակից յետոյ այդ երկու բանակները դարձան կաթոլիկ եւ հայադաւան եկեղեցիների կողմնակիցների կուսակցութիւններ, որոնցից Յիսուսեանների ու թէպտիսեանների օժանդակութեամբ վերջին հաշուով, յաղթող դուրս եկան միութեան կողմնակիցները: Ճշմարտութիւնը, սակայն, այն է, որ միութեան առաջին փուլում (1664—1690) լեհահայ համայնքը միակամ դուրս էր եկել պաշտպանելու իր նախնիների հաւատը: Հէնց կաթոլիկ աղբիւրների իսկ վկայութեամբ «ի բաց կացին ի նմանէ (Թորոսովիչից: Ռ. Հ.) Ժողովուրդն առհասարակ, հաստատեալ յուխտի իւրեանց, բաց ի միոյ կամ յերկուց անտի քահանայից, եւ ոմանց ազգակցաց Նիկոլի սակաւուց» (Բռնի միութիւն, էջ 156): Այսինքն՝ Նիկոլի «կուսակիցների» մասին խօսք լինել չի կարող: Եթէ նա ունէր կուսակիցներ, ապա դրանք տեղի լատին կղերականներն էին: Իսկ լեհահայերը 1630 թ. սկսած մօտ 60 տարի չդադարեցրին իրենց իրաւունքները վերականգնելու պայքարը՝ 1640—50-ական, 1666—70-ական եւ 1680-ական թուերի կէսերին արձանագրելով լուրջ յաջողութիւններ: Իրօք, հայերի մատուռը խլելու 1637 թ. դէպքը երեւի Նիկոլի վերջին քայլն էր իր հակառակորդների հանդէպ՝ չհաշուած 1646 թ. եւ հայադաւան քահանաներին ծեծելու փաստը, որը մեզ է հասել Լվովի քաղաքային դատարանի արձանագրութիւններից<sup>56</sup>:

<sup>54</sup> L. KORWIN, ORMIANSKIE RODY SZLACHECKIE (Հայ ազնուական տոհմեր), էջ 43, Կրակով, 1934 թ.:

<sup>55</sup> Ռըս Ջեյով Օրմիանսկիս, էջ 118—119:  
<sup>56</sup> Այս արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ երկու հայադաւան քահանայի ծեծելու համար հայերը Նիկոլի դէմ 1646 թ. Ապրիլի 21-ին դատ են

<sup>49</sup> Ռըս Ջեյով Օրմիանսկիս, էջ 121:  
<sup>50</sup> Անդ, էջ 122:  
<sup>51</sup> Չ. Լեիեցկի, նշ. աշխ. էջ 63—64:  
<sup>52</sup> Ս. Ռոշքա, Ժամանակագրութիւն, էջ 178:  
<sup>53</sup> Կ. Ամատունի, Ոսկան Վարդապետ Երեւանցի եւ իր ժամանակը: Վենետիկ, 1975, էջ 98, 102:

Լեհահայերի հակամարտութիւնները հանդարտեցնելու գործում, ինչպէս կը տեսնենք, շատ կարեւոր դեր ունեցաւ Փիլիպպոս կաթողիկոսը, որը այս խիստ բարձր ու խրճճուած իրադրութիւնում կարողացաւ չափազանց նուրբ եւ հաւասարակշիռ դիրք բռնել: 30-ական թթ. վերջերից սկսած նա բազմաթիւ նամակներ ու բանազնացներ ուղարկեց թէ՛ Լեհաստան եւ թէ՛ նոյնիսկ Հոռոմ<sup>57</sup>: Հետաքրքիր է, Վլադիսլավ Դ-ին ուղղած 1640 թ. Հոկտեմբեր ամսի մեզ անյայտ մի նամակը կաթողիկոսը Լեհաստան է ուղարկում դիւանագիտական գործերով Լեհաստան գնացած Պարսից Շահի հայազգի դեսպան Մուսաբեկի հետ: Փիլիպպոս կաթողիկոսի դիւանագիտական երեւելի ունակութիւնների մասին որոշակի պատկերացում է տալիս Վլադիսլավ Դ-ին ուղղած նրա 1644 Յուլիսի 27-ի նամակը, որը Ղ. Ալիշանը հրատարակել է «Կամենից Տարեգրքում»: Այդ նամակը Վլադիսլավ Դ-ին հասցրած Գրիգոր եպիսկոպոսը, որը ամենայն հաւանականութեամբ լեհահայ էր, յատուկ առաջելութիւն ունէր Լվովում: Ինչ գնով էլ լինի խաղաղեցնել լեհահայերին՝ առանց սակայն դիպչելու հայադաւան եկեղեցու շահերին<sup>58</sup>:

Հետագայ իրադարձութիւնները ցոյց են տալիս, որ կաթողիկոսը հասնում է նպատակին:

Այս իմաստով, եւ ընդհանրապէս լեհահայ միութեան մութ կէտերը լուսարանելու տեսակէտից, կարեւոր է այլ աղբիւրներում բացակայող Բարոնչի մի ուրիշ տեղեկութիւնը եւս: «1649 թ., — գրում է Բարոնչի»:

ՍՄՀ Լվովի կենտրոնական պատմական դիւան, Փ. 9, Օպ. 1, տոմ. 396, ստր. 1540—1541: Այսուհետեւ 89ԻՍ ՈւՍՍՐ: Փաստաթուղթը գետեղում է Եւ. Դաշկելիչի կազմած «Հայ Ռուսթէն կապերը ԺԷ դարուն», էջ 94—95, փաստաթուղթ 26, Կիեւ, 1970 թ.):

<sup>57</sup> Ինչպէս տեսանք Ուրբանոս Պապը Փիլիպպոսի ինդրանքը կատարելու փոխարէն 1640 թ. նամակով նրան յորդորում է «գալ յուղափառութիւն»:

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Կամենից, էջ 244—246:

<sup>2</sup> Անդ, էջ 247—249:

<sup>58</sup> Լվովի կենտրոնական դիւանում պահուում է Վլադիսլավ Դ-ի 1645 թ. Նոյեմբերի 25-ի նամակը Լվովի քաղաքապետարան՝ Գրիգոր եպիսկոպոսին Լվովում չհետապնդելու հրահանգով (89ԻՍ ՈւՍՍՐ, Փ. 9, Օպ. 1, տոմ. 396, ստր. 1161—1162): Սա մեզ նաեւ հիմք է տալիս ենթադրելու, որ Գրիգոր եպիսկոպոսը երկար ժամանակով էր եկել այստեղ եւ երկրորդ ճշտելու Գրիգորի Լվով մտնելու մտաւոր ժամանակը (1645 թ. Դեկտեմբեր):

րոնչը, — արքեպիսկոպոս Թորոսովիչը ուղեւորուեց Հոռոմ, որտեղից այլեւս ետ չէր ուզում գար. ուստի իր փոխարէն թողեց Տաթեւի եպիսկոպոս Գրիգոր Պիրոմովիչին, որը Փիլիպպոս կաթողիկոսի նուիրակն էր Լեհաստանի թագաւորի մօտ: Երբ նրան Հոռոմում սկսեցին հանգստացնել թէ մեծակ չեմ թողնի, որ նրան միշտ կ'օգնեմ, համոզուեց ու ետ եկաւ Լվով» (Ընդգծումներն իմը: Ռ. Հ.): Հայ եւ լեհ պատմագիտութիւնից մեզ յայտնի է, որ Փիլիպպոս կաթողիկոսի նուիրակ եւ Տաթեւի եպիսկոպոս Գրիգոր Պիրոմովիչը 1649 թ. որոշ ժամանակ Լվովի թեմակալի աթոռին փոխարինել է Նիկոլին: Բարոնչն էլ ոչ մի լրացուցիչ տեղեկութիւն չի հաղորդում: Բայց այս թուուցիկ տուեալը լեհական արքունիքում եւ լատին կղերի աչքում Նիկոլի հեղինակազրկման մասին խօսող բազմաթիւ փաստերին լծորդելիս, դժուար էր եզրակացնել որ Նիկոլին մենակ չթողնելու եւ միշտ օգնելու Հոռոմի խոստումները վերաբերում էին ո'չ թէ Նիկոլի հակառակորդներին, այլ բարեկամներին: Այսինքն՝ միութիւնն ընդունած հայերին ու լատին կղերին:

Այս եզրակացութեան օգտին խօսող փաստերն այնքան շատ են ու պերճախօս, որ հիմնաւորելու կարիք չունեն:

Բարոնչի տեղեկութիւնը մեզ այստեղ ամենից աւելի հետաքրքրում է լեհահայերի հակամիարար շարժման մէջ էջմիածնի խաղացած որոշիչ ու ղեկավար դերը բացայայտելու տեսակէտից, որը հայ պատմագիտութեան չուսումնասիրուած խնդիրներից է: Արդ՝ ո՞վ էր «Վլադիսլավ Դ-ի մօտ հայոց կաթողիկոսի նուիրակ» այս Գրիգոր եպիսկոպոսը եւ ի՞նչ առնչութիւն ունէր նա լեհահայերի հակամիարար շարժման հետ:

Պատմական աղբիւրներից վերոյիշեալ տիտղոսով ու առաջելութեամբ այդ թուերին Լեհաստան ժամանած միայն մի Գրիգոր է մեզ յայտնի: Դա Վլադիսլավ Դ-ին յղած Փիլիպպոս կաթողիկոսի 1644 թ. Յուլիսի 27-ի նամակը 1645 թ. Նոյեմբերին Լեհաստան հասցրած Գրիգոր եպիսկոպոսն է: Այս նամակի մէջ կաթողիկոսը նրա անունը միայն մի տեղ է տալիս՝ առանց նշելու որտեղից է<sup>59</sup>: Չնայած այս երկու Գրիգորներին

<sup>59</sup> Ղ. Ալիշան, Կամենից, էջ 248:  
<sup>3</sup> Ռեւ Զեյուլ, էջ 122—123:

նոյնացնելու հիմնաւոր փաստեր չունենք, բայց կարծում ենք դրանք միեւնոյն անձնաւորութիւններն են: Իրօք՝ դժուար թէ 4—5 տարուայ տարբերութեամբ միեւնոյն կաթողիկոսի միեւնոյն յանձնարարականով Լվով գնային երկու տարբեր նոյնանուն եպիսկոպոսներ: Բացի այդ՝ Բարոնչի այն տուեալը, թէ Գրիգոր եպիսկոպոսը որոշ ժամանակ Լվովում փոխարինել է Նիկոլին, ճշտուում է Հայաստանից Հաւատաստիւն ժողովին յղած Պ. Պիրոմովի 1644 թ. Օգոստոսի 22-ի նամակից, որտեղ Հայաստան ուղարկուած կաթողիկ այս առաջելու գրում է, թէ Փիլիպպոս կաթողիկոսը Գրիգոր վարդապետին եպիսկոպոս օծելով ծրագրել էր Լեհաստանի թագաւորի միջամտութեամբ Նիկոլի եպիսկոպոսին փոխել Գրիգորով<sup>60</sup>: Յիշեալ փաստաթղթերի ու այլ վաւերագրերի վրայ յենուելով՝ Կ. Ամատունին գրում է, թէ Գրիգորը Կամենից Պոդոլսկից էր<sup>61</sup>: Գրիգորի լեհահայ լինելը հաւաստուում է նաեւ Առաջել Դաւրիթեցու մի հաղորդումից: Գրելով, որ Նիկոլի հալածանքներից բազմաթիւ լեհահայեր եկան էջմիածին, պատմագիրը շարունակում է. «որք էին որդիք նշանաւոր արանց յորոց դոմանս ձեռնադրեաց Փիլիպպոս կաթողիկոսն եպիսկոպոս յիլովայ, եւ առաջեաց անդ առ ի հովուել զժողովուրդան»<sup>62</sup>: Այժմ տեսնենք Նիկոլին ի՞նչն էր ստիպել լքելու իւր աթոռը եւ ի՞նչ կապ կար նրա հրաժարականի ու լեհահայերի հակամիարարական պայքարին օժանդակող Փիլիպպոս կաթողիկոսի ջանքերի միջեւ: Աղբիւրների մանրագնին հետազոտութիւնից երեւում է հայոց կաթողիկոսը 1640-ական թթ. շատ լուրջ նախադրեալներ է ունեցել յուսալու, որ իրեն կը յաջողուի որոշ փոխզիջումների գնով Նիկոլին դահլէյց անել տալ եւ նրան փոխարինել էջմիածնին նուիրակուած Գրիգոր եպիսկոպոսով:

Պատմագիտութեան մէջ այն տեսակէտն է տիրում, թէ իւր հայոց կաթողիկոսը հնարաւորութիւն չի ունեցել սատարելու լեհահայոց պայքարին: Մինչդեռ աղբիւրների մանրագնին բաղդատումը եւ քննութիւնը մեզ բերել է ճիշտ հակառակ եզրակացութեան: էջմիածինը ո'չ միայն օգնել եւ օժանդակել է լեհահայերին, այլ ղեկավարել է նրանց հակամարտութեան շարժումը:

<sup>60</sup> Կ. Ամատունի, նշ. աշխ. էջ 112—113:  
<sup>61</sup> Անդ:  
<sup>62</sup> Առ. Դաւրիթեցի, Պատմութիւն, էջ 383, Վաղարշապատ 1896:

րել է նրանց հակամիարարական շարժումը՝ արձանագրելով լուրջ յաջողութիւններ: Այս գործի մէջ, ի դէպ, հայոց կաթողիկոսը կարողացել է ներգրաւել Դոմինիկեան հայր Պօղոս Պիրոմովիին, որի մասին թուուցիկ խօսք եղաւ վերը:

Յենուելով դիւանական փաստաթղթերի վրայ՝ Կ. Ամատունին ճշտել է, որ Պիրոմովիին առաջին անգամ Հայաստան է մտել 1632 թ. Ապրիլին: 1630-ական թթ. դէպքերի առիթով Առաջել պատմագիրը Պիրոմովիին մասին հետեւեալն է գրում. «Այլ եւ ի սոյն ժամանակի՝ ի կարգէն Դոմինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ոմն, այր իմաստուն եւ երեւելի՝ յարգէն Պառնկաց, եկն յերկիրն Նախչուանայ ի մէջ աթոռայիցն, որք անդ կան, եւ Փիլիպպոս կաթողիկոսն բազում սէր եւ բարեկամութիւն արար ընդ Պօղոսին այնր. վասն օգտի ժողովրդեանն մերոյ եւ փրկութեան եկեղեցւոյն իլովայ. եւ Պօղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամեցաւ գնալ ի Հոռոմ, եւ գնալով զճանապարհս իւր հանդիպեցաւ յիլով քաղաք. եւ իլովացիք եւս բազում աղաչանօք խնդրեցին ի Պօղոսէ եւ բազում մեծարանս արարին նմա, եւ գանձս եւս յոլովս առ ի թուակ ճանապարհի ետուն նմա. զի թերեւս օգնութիւն ինչ հնարեցէ նոցա ի դուռն Փափին: Եւ յորժամ եհաս Պօղոս ի Հոռոմ, եւ մինչ նա բանս ինչ բարեխօսութեան վասն Հայոց առաջարկեալ էր, եւ խօսէր ի դուռն Փափին՝ վաղվաղակի գնաց զկնի նորա եւ Նիկոլի եպիսկոպոսն ի Հոռոմ ի դուռն Փափին. եւ խափանեաց զօգնութիւնն Պօղոսի՝ ձեռնառութեամբ Եզրայիթացն»<sup>63</sup>:

Առաջել պատմագրի տեղեկութիւնները հաստատուում են մեզ հասած դիւանական փաստաթղթերով ու նամակներով: Իրօք, էջմիածնի, Հոռոմի ու Լեհաստանի միջեւ սկսուած բանակցութիւններին ու թղթակցութիւններին իրրեւ արդիւնք, Հոռոմը 1637 թ. վերջերին որոշում է Պիրոմովիին Հայաստանից ուղարկել Լվով՝ «Նիկոլի եւ ժողովրդի միջեւ ծաղած վէճը խաղաղացնելու»<sup>64</sup>: Պիրոմովիին արդէն 1638 թ. Լվովում էր, ուր մնում է մինչեւ 1639 թ. աշունը:

Սա սկզբում շատ է հիանում Նիկոլով, բայց յետոյ փոխում է կարծիքը: Ըստ Հա-

<sup>63</sup> Պատմութիւն Առաջել վարդապետի Դաւրիթեցւոյ, էջ 383, Վաղարշապատ 1896:  
<sup>64</sup> Կ. Ամատունի, նշ. աշխ. էջ 82:

ւատասփիւռ ժողովի 1639 թ. նիստերից մէկի արձանագրութեան, Պիրոմալլին Լվովում խաղաղութիւն հաստատելու միակ պայմանը Նիկոլին Լվովից հեռացնելն է համարում: Նիկոլի Յիսուսեան հովանաւորների ջանքերով Պիրոմալլին անմիջապէս ետ է կանչուում Հոռոմ: Բայց Լեհաստանի թագաւորը 1639 թ. նամակով Պապից խնդրում է Պիրոմալլին ետ ուղարկել՝ «իր իսկ սկսած հաշտարար գործողութիւնները վերսկսելու»<sup>65</sup>: Հաւատասփիւռ ժողովը 1640 թ. Մարտի 26-ի նիստում որոշում է Պիրոմալլին Հայաստան ուղարկել Լվովի վրայով՝ նրա վրայ դնելով նաեւ Լեհաստանի խնդրի շուրջ Փիլիպպոսի ու Նիկոլի հետ բանակցութիւններ վարելու պարտականութիւնը<sup>66</sup>: Նիկոլի ու Պիրոմալլի դեռեւս 1637 թ. սկսած հակասութիւնը սրուում է: Նիկոլի դիրքերը էլ աւելի են խարխուլուում, երբ դժտուում է նաեւ Լեհաստանում պապական նորընծայ նուիրակ Գ. Մարեսկոտի հետ: Անելանելի վիճակից դուրս գալու համար Հաւատասփիւռ ժողովը 1641 թ. Ապրիլի 10-ի նիստում որոշում է Նիկոլին ժամանակաւորապէս կանչել Հոռոմ, տեղը նշանակել Պիրոմալլին<sup>67</sup>: Բայց քանի որ Հաւատասփիւռ ժողովի Յիսուսեանները հովանաւորում էին Նիկոլին, սրան յաջողուում է առժամանակեայ յաղթանակ տանել իր երկու զօրեղ հակառակորդների դէմ: Յիսուսեանք Պապին յիշեցնում են Պիրոմալլի իսկական առաքելութեան մասին. այն է՝ որպէս Փիլիպպոս կաթողիկոսի մօտ Պապի դեսպան, նա պէտք է միութեան համոզէր Հայոց կաթողիկոսին: Եւ ահա Հաւատասփիւռ ժողովի 1642 թ. Յունիս ամսուայ նիստերից մէկուն որոշուում է Պիրոմալլին անմիջապէս ուղարկել էջմիածին՝ կաթողիկոսի հետ միութեան խընդիրների մասին բանակցութիւնները շարունակելու<sup>68</sup>: Պիրոմալլին 1642 թ. աշնանը Լվովից դուս է գալիս եւ 1643 թ. Փետրուարին էջմիածնում արտակարգ ընդունելութեան է արժանանում Հայոց կաթողիկոսից:

Բայց, ինչպէս ցոյց են տալիս հետագայ դէպքերը, Նիկոլի համար դա ժամանակաւոր յաղթանակ էր: Կաթողիկոսը շատ նուրբ քաղաքականութեամբ Պիրոմալլի միջոցով Հոռոմին կարողանում է ներշնչել, թէ ինքը

<sup>65</sup> Կ. Ամատունի, նշ. աշխ. էջ 82—83:  
<sup>66</sup> Անդ, էջ 84:  
<sup>67</sup> Անդ, էջ 84:  
<sup>68</sup> Կ. Ամատունի, նշ. աշխ. էջ 102:

պատրաստ է հայ եկեղեցին Հոռոմին ենթարկելու շուրջը բանակցելու, բայց միաժամանակ բանակցութիւնների յաջող ելքը կապում է Լվովահայերին: Կաթողիկոսի այս դիրքորոշումը պարզ երեւում է Հաւատասփիւռ ժողովին ու Պապին յղած Պիրոմալլի 1644—1645 թթ. նամակներից: Պիրոմալլին Հայաստանից դուրս է, թէ Միութեան դործերը փոփոխական յաջողութեամբ շարունակուում են, բայց «կարծես թէ ընդդիմութեան հանդիպել է աշխարհականներէն ոմանց կողմէ, որոնք միշտ կը սպասեն Լվովի եկեղեցիներուն հարցին կարգաւորութեան», ուստի անհրաժեշտ է Փիլիպպոսին քաջալերել՝ Լվովի եկեղեցիներից դոնէ մէկը ժողովրդին վերադարձնելու<sup>69</sup>: Փիլիպպոս կաթողիկոսը, օգտուելով Նիկոլի ու Հոռոմի դործակալների հակասութիւններից, 1644 թ. յատուկ առաջադրանքով Լվով է ուղարկում իր կողմից եպիսկոպոս օծուած վերայիշեալ Գրիգոր Կամինեցացի Պիրոմալլիչին:

Վատիկանի դիւանում պահպանուած վաւերագրերը պարզորոշ ցոյց են տալիս նաեւ, որ Փիլիպպոս կաթողիկոսը տարիներ շարունակ Պիրոմալլին ու Հոռոմին դատարկ խոստումներ է տուել եւ միաբանական ջանքերը ի դերեւ ելած էին<sup>70</sup>: Եւ եթէ արեւ է որոշ զիջումներ, ապա միայն յանուն լեհահայ եկեղեցու փրկութեան: Այդ մասին հարեւանցի վկայում է նաեւ Առաքել պատմիչը. «Եւ Փիլիպպոս կաթողիկոսն բաղում սէր եւ բարեկամութիւն արար ընդ Պողոսին այնր, վասն օղտի ժողովրդեանն մերոյ եւ Փրկոմի ԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԻԼՈՎԱՅՄ» (Ընդդրծումն իմը: Ռ. Հ.):

Փիլիպպոս կաթողիկոսի նուիրակ Գրիգոր եպիսկոպոսը, ինչպէս ասուեց, 1645 թ. Նոյեմբերին արդէն Լեհաստանում էր: Նա լեհահայերի հետ անընդհատ ճնշում էր Նիկոլին: Ժողովուրդը ոչ մի կերպ չէր ենթարկուում թեմակալին, որի հեղինակութիւնը ընկել էր նաեւ իր հովանաւորներից շատերի մօտ: Ահա այս պայմաններում էջմիածնի ու Լվովահայերի միացեալ դիւանագիտութիւնը հարցն այսպէս էր դնում. լեհահայերը կ'ենթարկուեն Հոռոմին, բայց ո'չ Նիկոլի թեմակալութեամբ: Նիկոլի հեղինակազրկումը, Հայոց եկեղեցին Հոռոմին

<sup>69</sup> Անդ, էջ 109—110:  
<sup>70</sup> Կ. Ամատունի, նշ. աշխ. էջ 16:  
<sup>71</sup> Առ. Դաւրիժեցի, Պատմութիւն, էջ 383:

միացնելու մասին Պիրոմալլի Հոռոմ ուղարկած յուսադրական նամակները եւ Նիկոլին մէկ ուրիշով փոխարինելու մտայնութիւնը Հոռոմին ստիպում են Նիկոլի հարցում երբեք թէեւ Հոռոմ կողմնակից չէր փոփոխութիւններ անելու: Այս բարդ ու խճճուած իրադրութիւնում լեհահայերի պայքարին օժանդակող հանգամանքներ են ստեղծուում նաեւ քաղաքական առումով: 1648 թ. հեթման իմենիցկին կողակների գլուխն անցած ապստամբել էր Լեհաստանի դէմ, պաշարել Լվովը՝ քաղաքում յարուցելով խիստ տագնապալի ու խառն իրադրութիւն: Հասկանալի էր այդպիսի սպառնալի վիճակում հասարակական կեանքի հանդէպ դժուար էր իրադործել պետական վերահսկողութիւն: Երկրին նախ եւ առաջ անհրաժեշտ էր ներքին հանդարտութիւն: Այնպէս որ լիովին հաւանական է որ Լվովահայերը բազմաթիւ միջոցներով Թորոսովիչին ստիպէին լքելու իր աթոռը: Իսկ Նիկոլը վստահալից Լվովում շատ լուրջ պատճառներ ունէր երկիւղելու Նոյնիսկ իր կեանքի համար<sup>72</sup>:

Բացառուած չէ, որ Նիկոլի վերայիշեալ հրաժարականը նաեւ Հոռոմի Պապի վստահութիւնը էլ աւելի ամրապնդելու նպատակով արուած դիւանագիտական քայլ լինէր: Բոլոր դէպքերում, քանի որ Միաբարները ժամանակաւոր նահանջել էին, իսկ Հայերը՝ աշխուժացել, Հոռոմը Թորոսովիչից բացի ոչ մի ուրիշ դէմք չէր տեսնում լեհահայութեան մէջ, որը թէ՛ իրաւական տեսակետից եւ թէ՛ ի պաշտօնէ, կարողանար հակամիարար շարժման դէմն առնելու գործում պիտանի լինէր Հոռոմին: Ահա թէ ինչու Հոռոմը Նիկոլին համոզում էր չլքել աթոռը՝ նրան խոստանալով մենակ չթողնել եւ ամէն ինչում օգնել: Բայց Նիկոլի դիւանագիտական այս

<sup>72</sup> Ի նկատի ունենք Նիկոլին պատժելու Լվովահայերի դիտաւորութիւնների մասին խօսող մի քանի ուղղակի եւ անուղղակի փաստերը: Օրինակ, Լվովի դատարանի 1636 թ. Փետրուարի 25-ի ու Մարտի 1-ի դատական նիստերի արձանագրութիւններից երեւում է 1636 թ. Փետրուարին Լվովի հայոց թաղամասում ծագած յուզումների ժամանակ հայադաւանները ծեծել էին Նիկոլին, նրա հօրը եւ մի քանի կաթողիկ քահանայների, սպառնացել էին սպանել նրան եւ այլն (ՅԳԻԱ ՈւՄՄ, ֆ. 52, Օպ. 3, տոմ 246, ստր. 1402, 1407, 1440, 1443: — ՏԵՍ ԵՀԱՅՈՒԹՅՆԱԿԱՆ ԿԱՅԵՐԸ ԺԷ դարում», էջ 80—81, փաստաթուղթ նո. 21): Պահպանուել են Նիկոլին ոչնչացնելու Լվովահայերի մտադրութիւնների մասին խօսող այլ վաւերագրեր եւս:

քայլն էլ արդիւնք չտուեց, եթէ դա իհարկէ ոչ թէ բազմամեայ պայքարից ուժաբամութիւն էր, այլ իրօք՝ դիւանագիտութիւն...:

1640-ական թթ. դէպքերի քննութիւնից պարզուում է Լեհաստանի լեհահայերի ոչ միայն չէր ընկրկում միարար շարժման առաջ, այլեւ ինքն էր անցնում հակայարձակման՝ Թորոսովիչին ստիպելով դիրքերը զիջել:

Այդ դէպքերից մի քանի տարի անց, ըստ Անանուն հեղինակի, Լեհահայք Նիկոլին մէջտեղից վերացնելու նոր փորձ են անում: Այս անգամ նրանք որոշում են պայքարի ձեւը փոխել եւ նրա իսկ դէմքով կուռել նրա դէմ: «Յայնժամ միաբանեցան դատաւորքն . . . զի գոնէ ի վերին երեսս կաթողիկս զանձինս ընծայեցուցեն, որպէս զի դէթ այսու լիցի հնար յաղթահարել զարքեպիսկոպոսն»<sup>73</sup>: Լվովահայերը դտան «Յովհան Օձնեցուց առաջ գրուած» մի հին մաշտոց, ուր իբր գրուած էր թէ հայերը ընդունում են Հոռոմի գիրիչխանութիւնը<sup>74</sup>, եւ դրա հիման վրայ մի դաւանութեան թուղթ ներկայացրին թագաւորին, ըստ որի Լեհահայերը պարտաւորուում էին շարժուել այն դաւանութեամբ, ինչ Հայ Եկեղեցին ունեցել էր մինչեւ Յովհան Օձնեցին<sup>75</sup>: Լատին կղերն իհարկէ գլխի էր ընկել, որ նրանք իրենց եկեղեցու ինքնուրոյնութիւնը պահպանելու համար «ի վերին երեսս կաթողիկս զանձինս ընծայեցուցեն»<sup>76</sup>: Հաւանաբար հէնց լատին հոգեւորականութեան յորդորներով լեհական թագաւորը հրաժարուեց ընդունել այդ դաւանագիրը՝ մինչեւ Լեհահայք այն չվաւերացնէին էջմիածնի կաթողիկոսից:

Լվովահայերի ներկայացուցիչները 1652 թ. փութացին այդ ժամանակ Պոլիս գտնուող Փիլիպպոս կաթողիկոսի մօտ՝ դաւանութեան թղթերը հաստատելու: Բայց «իրբեւ ծանեաւ արքեպիսկոպոսն, թէ ահա մերձ է ի կործանումն . . . սկսաւ ապա հնարս խընդրել հաշտելոյ ընդ ժողովրդեանն, չողաւ եւ ինքն փութապէս առ կաթողիկոսն, աղաչէր եւ հայցէր հեղաբար, ներել նմա զամենայն զյանցանս իւր եւ սայր գրով երդումն ուխ-

<sup>73</sup> Բռնի Միութիւն, էջ 28:  
<sup>74</sup> Մ. Օրմանեանը այս ծիսարանը համարելով կեղծիք, պնդում է հայ եկեղեցին օձնեցուց (717—720) առաջ Հոռոմի հետ նման բանավարութիւններ չի ունեցել (տե՛ս Աղապատում, հտ. Բ, էջ 2477):  
<sup>75</sup> Բռնի Միութիւն, էջ 26, 158—159:  
<sup>76</sup> Անդ:

տի, թէ յայնմհետէ հպատակ լիցի Աթոռոյն էջմիածնի... Հուսկ ուրեմն ընկալաւ ի կաթողիկոսէն թուղթս առ եկեղեցականս եւ առ ժողովուրդն, յորս յորդորէին նոքա հնազանդ լինել արքեպիսկոպոսին<sup>77</sup>»։ Այսպիսով Նիկոլը կանխում է Լեհահայերին եւ Փիլիպպոս կաթողիկոսը ոչնչացնում է Լեհահայ համայնքի ներկայացրած դաւանութեան արդէն հաստատած թղթերը<sup>78</sup>։ Առաջել պատմագիրը նշում է, թէ երկարատեւ բանավարութիւններից յետոյ Նիկոլը կաթողիկոսի հետ չորս կէտանոց պայմանագիր է կնքում, Լեհահայերին ուղղած կաթողիկոսի վերոյիշեալ կոնդակի հետ դալիս է Լվով ու հաշտուում ժողովրդի հետ։ Պայմանագրի էութիւնն այն էր, որ Նիկոլը եւ իր յաջորդները, ինչպէս նաեւ Լեհահայ ժողովուրդն ու քահանայք, երբեք չպիտի շեղուէին հայադաւան եկեղեցու օրէնքներից, ո՛չ մի ժամանակ եւ ո՛չ մի դէպքում հայ եկեղեցու մէջ Նիկոլից բացի ոչ ոք Պապի անունը չպիտի յիշատակէր<sup>79</sup>։ Ընդ որում Պապի անունը տալու կէտը պայմանագրի մէջ էր մուծուել Նիկոլի յամառ խնդրանքներից յետոյ։ Պայմանագրի կէտերը միայն Դաւրիթեցին է բերում եւ նրա վրայ յենուելով՝ նաեւ Մ. Չամչեանը։ Լատին աղբիւրներն ու լեհ պատմաբանները այդ պայմանագրի մասին խօսելիս բերում են դրա մօտաւոր բովանդակութիւնը միայն։ Դաւրիթեցու այն տեղեկութիւնը, թէ պայմանագրի կէտերը Նիկոլը թղթի վրայ գրեց, կընքեց, ու յանձնեց Փիլիպպոս կաթողիկոսին, իսկ կաթողիկոսն այն տուեց Լվովի հայ համայնքի ներկայացուցիչ Ուչկոյին, որպէսզի սա տանի Լվով եւ «ի պահեստի ունիցին վասն առ յապայն զգուշութեան<sup>80</sup>», ենթադրել է տալիս, որ պայմանագիրը գաղտնի է եղել եւ լեհահայերն այն կաթողիկոսներին ցոյց չեն տուել։ Այլ Պիդուեւ եւս պայմանագրի կէտերին տեղեակ չէր, որովհետեւ խօսելով Նիկոլի ու Փիլիպպոսի հանդիպման մասին, յարում է. «Թէպէտ չէ յայտ հաւաստեալ զի՛նչ ինչ իրաց բանակցութիւն ի նոսա եղեւ<sup>81</sup>»։ Լատին աղբիւրներից պայմանագրի ճշգրիտ բովանդակութիւնը յայտնի չի եղել նաեւ Յր. Չախարիասեւիչին, Ա. Պավինս-

կուեւ, Չ. Լեխիցկուեւ եւ այլոց։ Թ. Գրոմ-նիցկին պայմանագրի կէտերը բերում է հիմնուելով ոչ թէ լատին կամ լեհական որեւէ աղբիւրի վրայ, այլ Ա. Դաւրիթեցու «Պատմութեան» Փրանսերէն թարգմանութեան վրայ։ Սա եւս լրացուցիչ կուուան կարելի է ընդունել՝ պայմանագրի կէտերը գաղտնի լինելու օգտին։

Թէ՛ Նիկոլը եւ թէ՛ լեհահայ համայնքը պայմանագիրը գաղտնի պահելու հիմք ունէին։ Նիկոլը, որի դիրքերը սկսել էին խարխուրուել դեռեւս իր ամենազօրեղ պաշտպան Սիդիգմունդ Գ-ի մահուանից յետոյ (1632), չէր ցանկանայ լատին հոգեւորականութիւնն իմանար դէպի էջմիածին կատարած իր դիմաշրջութեան մասին։ Իսկ լեհահայերն էլ, քանի որ այդ հաշտութեամբ հասել էին հայադաւան եկեղեցին Հռոմից անջատ պահելու թուացեալ յաջողութեանը, ըստ երեւոյթին պայմանագիրը «առ յապայն զգուշութեամբ» պահում էին իբրեւ Նիկոլի հնարաւոր դիմաշրջութիւնը զսպող զէնք։

Ընդհանրապէս օտար պատմաբանների համար մի տեսակ առեղծուածային հարց էր, թէ Փիլիպպոս կաթողիկոսը ի՞նչ միջոցներով կարողացաւ շիջանալ լեհահայերի միահամուռ ատելութիւնը Նիկոլի հանդէպ, սրան շրջել դէպի հայադաւան եկեղեցին եւ հաշտեցնել ժողովրդի հետ, երբ Լվովահայերի դիմին նա բերել էր անհաւատալի թուացող փորձանքներ։ Հարցի արտաքին՝ այսինքն՝ տեսանելի կողմը բաւական հասկանալի է, մանաւանդ երբ ձեռքի տակ ունենք Փիլիպպոս կաթողիկոսի ու Նիկոլի պայմանագրի կէտերը։ Կաթողիկ կղերականութեան մէջ կորցնելով հեղինակութիւնը եւ տեսնելով լեհահայերը իրենից ազատուելու համար անընդհատ նորանոր զէնքեր են կուում, Նիկոլը պաշտօնին մնալու մի ելք էր տեսնում՝ հակուել դէպի էջմիածինը՝ բայց իր դիմաշրջութիւնը գաղտնի պահելու պայմանով, ինչը նրան դարձեալ վերադառնալու սողանց էր ապահովում։ Պարզ է, էջմիածին աւելի շատ ձեռնտու էր Նիկոլը, քան Հռոմից նշանակուած մէկ ուրիշը, որը հասկանալի պատճառով պէտք է էլ աւելի մեծ գիջուակներ անէր, քան Նիկոլ թորոսովիչը։ Հարցի նման լուծումը ձեռ էր տալիս նաեւ լեհահայերին, որոնք Նիկոլի դէմ բազմամեայ պայքարից ուժաքամ՝ թուում է Նիկոլի հետ հաշտուելու

77 Բունի Միութիւն, էջ 159։  
78 Անդ։  
79 Պատմութիւն Առաջի վարդապետի Դաւրիթեցույ, էջ 386—387, Վաղարշապատ, 1896 թ.։  
80 Առ. Դաւրիթեցի, Պատմութիւն, էջ 387։  
81 Բունի Միութիւն, էջ 27։

հեռանկարը պէտք է գերադասէին նրան գահընկէց անելու անյաջող փորձերից։

Բայց սա, ինչպէս ասուեց, հարցի մի կողմն է։ Նիկոլի ու Լեհահայերի հաշտութեան միակ պայմանը դրա մէջ տեսնելը ինչ որ տեղ պակասաւոր է թուում կար մի այլ պատճառ եւս։ Հայ պատմագիտութեան անծանօթ Չ. Լեխիցկու մի տեղեկութիւնը լրացնում է այդ պակասը։ Պարզուում է Պոլուում կնքուել է ո՛չ թէ մէկ, այլ երկու գաղտնի պայմանագիր, որը հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշման տուեալները համալրում է մեր պատմագիտութեան ուշադրութիւնից վրիպած նոր փաստերով։

Նշելով, որ յայտնի չի 1653 թ. հանդիպման ժամանակ կաթողիկոսը ի՞նչ միջոցներով Նիկոլին «կապեց իրեն», Չ. Լեխիցկին շարունակում է. «որպէսզի Փիլիպպոսի հետ վարած բանակցութիւնները արքունիքի ու լատին հոգեւորականութեան աչքում այլ նշանակութիւն վերագրէր, թորոսովիչը Լվով դառնալուց յետոյ, 1653 թ. Օգոստոսի 21-ին Հռոմ է ուղարկում լատիներէն մի նամակ, ուր էջմիածնի եւ մեծ Հայաստանի միութեան հնարաւորութիւնը Հռոմին ներկայացուում էր լաւատեսական գոյներով՝ բերելով նոյնիսկ այդ միութեան մտացածին (Ֆիկտիվ) կէտերը<sup>82</sup>»։ Մենք զժուարանում ենք ընդունել Լեխիցկու պընդումը, թէ պայմանագիրը Նիկոլի կեղծիքն է՝ թէեւ ձեռքի տակ ոչ մի վաւերագիր չուենք հակառակին ասպացուցելու։ Բայց անկախ նրանից, Նիկոլի ներկայացրած պայմանագիրը կեղծիք էր թէ ոչ, լեհ պատմաբանի այս վկայութիւնը մեզ մղում է շատ հետաքրքիր ու համարձակ կուահումներին։

Քանի որ Նիկոլը այդ նամակի մէջ շօշափում է Հայաստանը Հռոմի կապելու մտքեր, ուրեմն կարծեցեալ պայմանագրի մէջ հայադաւան եկեղեցին Հռոմին միացնելու խնդիրը անպայման պիտի կապուած լինէր Հայաստանի անկախութեան հեռանկարին։ Դա այդպէս է, որովհետեւ դրանից առաջ նման պայմանագրեր կնքուած են եղել թէ՛ Յրանսիայի, թէ՛ Վենետիկի հանրապետութեան եւ թէ՛ հետագայում հէնց Լեհաստանի հետ, որի մասին մանրամասն կը խօսենք քիչ յետոյ։

82 Չ. Լեխիցկի, նշ. աշխ. էջ 66։

Հասկանալի է՝ եթէ Լեհաստանի արքունիքում եւ Հռոմում Նիկոլի նամակում նշուած պայմանագրի բովանդակութեան իմաստով որոշակի մտայնութիւն եւ նախապայման եղած չլինէր, Նիկոլը այդպիսի նամակ չէր գրի Հռոմ։ Նիկոլը այդ բովանդակութեամբ նամակ չէր գրի Հռոմ նաեւ ա՛յն դէպքում, եթէ տեղեակ չլինէր Հայոց կաթողիկոսի այն դիտաւորութիւնների մասին, որոնք ներդաշնակ էին իր նամակում արժարձուած խնդիրներին։

Իսկ եթէ Հայոց կաթողիկոսը նամակի մասին տեղեակ էր, որը գրեթէ կասկած չի յարուցում, ապա լիովին տրամաբանական է, որ յիշեալ կեղծ հրովարտակը, եթէ այն իրօք կեղծիք է, դալիս է ո՛չ թէ Նիկոլից, այլ Փիլիպպոս կաթողիկոսից։ Այդ պայմանագիրը եզակի բնոյթ եւ նպատակ ունէր։

Թէեւ փաստերն աւելի շատ խօսում են պայմանագրի վաւերականութեան, քան դրա կեղծ լինելու օգտին, այսուամենայնիւ Նիկոլի ու Փիլիպպոսի միջեւ Պոլսում կնքուած պայմանագրի կեղծ կամ վաւերական լինելը տուեալ դէպքում գրեթէ նշանակութիւն չունի մեր հետեւեալ եզրակացութեան համար. 1650-ական թուերին Հայաստանը Հռոմի միութեամբ հայ ժողովրդի ազատագրութեան գործը Լեհաստանի մասնակցութեամբ ապահովելու մտայնութիւնը այդ ժամանակ անպայման առկայ էր թէ՛ Հռոմում, թէ՛ Լեհաստանում։ Հետեւաբար, ի դէմս Չ. Լեխիցկու յիշատակած վերոյիշեալ նամակի, մենք գործ ունենք հայ ազատագրական շարժման պատմութեան՝ Եան Գ. Սորեսկու շրջանին նախորդող մի փաստաթղթի հետ, որն այդ շարժման լեհական կողմնորոշման նախապատմութիւնը ձեւաւորող եւ հայ պատմագիտութեան ուշադրութիւնից վրիպած, թէեւ առայժմ անվաւեր, բայց լիովին հաւանական մի վկայութիւն է։

Այժմ տեսնենք ի՞նչ կապ կարող էր լինել Չ. Լեխիցկու եւ Առ. Դաւրիթեցու յիշատակած պայմանագրերի միջեւ, որոնք կնքուել էին նոյն օրերին, նոյն անձանց ձեռքով եւ միեւնոյն առիթով։

Ասացինք Նիկոլը իշխանութեան գլուխ մնալու համար կանխեց «դաւանութեան թերթերը» Փիլիպպոսի մօտ հաստատելու տարած պատուիրակութեանը եւ հասաւ այն բանին, որ Փիլիպպոսը ոչ միայն չեղեալ

յայտարարեց Նիկոլի վրայ դրուած բանադրանքը, այլեւ իբ աշակերտ Յոհան Արդնեցի վարդապետին յատուկ կոնդակով Լվով ուղարկեց Լեհահայերին յորդորելու ենթարկուել իրենց թեմակալին: Հարց է ծագում՝ Նիկոլը ի՞նչ միջոցներով պիտի հայոց կաթողիկոսին համոզէր ոչնչացնելու դաւանութեան թղթերը: Եթէ հայադաւանութեանը նուիրուած մնալու խոստումներով, ապա բարոյալքուած Նիկոլին լաւ ճանաչող կաթողիկոսը նրան դժուար թէ հաւատար: Դրա կարիքն էլ կարծես չկար, որովհետեւ Պաշկոյի պատուիրակութիւնից առաջ Պոլիս ժամանած Լվովահայերի ներկայացրած դաւանութեան թղթերը ստորագրելիս, Փիլիպպոս Աղբակեցին շատ լաւ գիտէր, որ այդ քայլով լեհահայերը նպատակ ունէին հայ եկեղեցու ծիսակարգում չնչին փոփոխութիւններ մտցնելով Նիկոլին վերացնել ասպարէզից — տեղը թեմակալ ընտրել էջմիածնին նուիրուած իրենց թեկնածուին, որով պէտք է լեհահայ եկեղեցին պահպանուէր անխուսափելի բաժանումից:

Բացի այդ՝ ինչպէս ասուեց, հայոց կաթողիկոսը քաջատեղեակ էր լեհահայերի հանդէպ Նիկոլի ունեցած վարմունքէն եւ դժուար թէ նրա զղջական մեղանքներն ու էջմիածնին հպատակ մնալու երդումները վրձնական նշանակութիւն ունենային Նիկոլին թեմակալի գահին թողնելու եւ Լեհահայերին հնազանդութիւն յորդորելու կաթողիկոսի քայլերի համար:

Այս դէպքում ի՞նչը պէտք է Փիլիպպոսին մղէր Նիկոլին պաշտպանելու անսպասելի քայլին, երբ Նիկոլը հեղինակագրկուել էր նաեւ լատին կղերի աչքում եւ արդէն վըտարուում էր ասպարէզից:

Տրամաբանութիւնը միայն մի ենթադրութեան օգտին է աշխատում՝ Փիլիպպոս կաթողիկոսը, տեղեակ լինելով Հռոմի ու լեհական արքունիքի հետ Նիկոլի կապերի մասին, նրան ներգրաւում է ազատագրական շարժման մէջ:

Այս քայլով կաթողիկոսը միանգամից երեք կարեւոր հարց է լուծում:

ա) Հայ ժողովրդի ազատագրութեան հեռանկարի մէջ Նիկոլի ունենալիք հետագայ դերը շեշտելու ճանապարհով, կաթողիկոսը ոչ միայն կարողանում է անելանելի թուա-

ցող իրադրութիւնում չէզոքացնել լեհահայ գաղութը ջլատող երկու թշնամի խմբակցութիւնների հակամարտութիւնը եւ լուծել լեհահայերին մայր եկեղեցու դիրքը պահելու հարցը, այլեւ միարարների երբեմնի ամենագորեղ դործիքը հանդիսացող թեմակալին ներգրաւել հայադաւան եկեղեցին անխաթար պահելու պայքարի մէջ՝ այդ եկեղեցու դոյութիւնը Լեհաստանում երկարաձգելով եւս մի քանի տասնամեակ:

բ) Նիկոլին կապում է հայ ազատագրական շարժմանը եւ օգտագործում իր ծրագրերը լեհական արքունիք եւ Հռոմ ներկայացնելու համար:

գ) Որպէսզի իր եւ Նիկոլի յարաբերութիւնները վերջինիս ֆւստող կասկածներ չյարուցեն, կաթողիկոսը Նիկոլի հայանդպաստ կեցուածքը լեհական արքունիքի ու Հռոմի աչքին ներկայացնում է իրբեւ Լեհահայերին հանդարտեցնող ժամանակաւոր դիջում՝ Հայաստանայց եկեղեցին Հռոմին միացնելու ճանապարհին. այսինքն՝ Հռոմին մատուցելիք Նիկոլի հերթական ծառայութիւն:

Այսպիսով՝ աղբիւրների ուշադիր քնննութիւնը եւ Փիլիպպոս կաթողիկոսի ու Նիկոլի թորոսովիչի շփումների մասին եղած սուղ տուեանների բաղդատումները ցոյց են տալիս, որ «ի յոլով աւուրս զկնի բազում խօսից եւ գործոց»<sup>83</sup> Նիկոլն ու Փիլիպպոս կաթողիկոսը կնքում են ո՛չ թէ մէկ, այլ երկու առանձին պայմանագիր:

Առաջին պայմանագիրը, որը հայադաւան եկեղեցու եւ էջմիածնի հանդէպ լեհահայերի ու Նիկոլի պարտաւորութիւններին է վերաբերում, հասկանալի պատճառով գաղտնի էր պահուում լատին կղերից ու միութեան կողմնակիցներից, որը միաժամանակ հայերի ձեռքին զէնք էր՝ Նիկոլի հնարաւոր դիմադարձութիւնը զսպող: Իսկ հայադաւան եկեղեցին Հռոմին միացնելու գնով Հայաստանի ազատագրութեան գործում Հռոմի ու Լեհաստանի օժանդակութեանը վերաբերող մասը գաղտնի էր մնում թէ՛ լեհահայերի եւ թէ՛ լատին կղերի լայն շրջանների համար, որը միաժամանակ Նիկոլի զէնքն էր լեհահայերի դէմ: Այսպիսով, իմաստուն կաթողիկոսը լատին կղերի աչքում վերջնականապէս ու անդառնալիորէն հեղինակագրկուած Նիկոլին

<sup>83</sup>Դաւրիթեցի, Պատմութիւն, էջ 386:

այնպիսի վիճակի մէջ է դնում, որ սա իր աթոռը պահելու համար էջմիածնին հակուելուց բացի ոչ մի ելք չունէր: Ահա թէ ինչո՞ւ կաթողիկոսը ոչ միայն սիրալոյսով ընդունում է «Մոլորեալ ոչխարի դարձը» այլեւ նրա համար դռնում է մի այնպիսի ճանապարհ, որով նա պէտք է ամրապնդէր իր դիրքերը Հռոմում՝ առանց սակայն հնար ունենալու լքել էջմիածնին... Եթէ մեր ենթադրութիւնը հետադայում ճշտուի Նիկոլի յիշեալ նամակի ու այլ փաստաթղթերի յայտնաբերումով, ապա Փիլիպպոս Աղբակեցին մի աւելորդ անգամ մեզ համար հանդէս կըղայ որպէս խորիմաց, նուրբ ու երկայնամիտ մի դիւանադէտ ու քաղաքական գործիչ:

Նիկոլի թորոսովիչին դահընկէց անելու փոխարէն նրան ընդհանուր գործի մէջ ներգրաւելն, իրօք, թէեւ շատ համարձակ, բայց միակ ճիշտ քայլն էր տուեալ իրավիճակում, որով հնարաւոր եղաւ լեհահայ եկեղեցին մօտ 30 տարով կանխել վերջնական բաժանումից, այսինքն՝ այն առաւելագոյնը, ինչ հնարաւոր էր անել այդ պարագային:

Բայց լատին կղերը որոշ ժամանակ անց շատ լաւ հասկացաւ բանի էութիւնը: Լեհ պատմաբանների վկայութեամբ, Պոլսի «հաշտութիւնից» յետոյ կաթողիկ եկեղեցու վերաբերմունքը էլ աւելի պահանջողական տեսք ընդունեց Նիկոլի վերաբերութեամբ: Առաջ խօսք չէին դռնում նրան գովարանելու, այժմ թերութիւն չկար չվերագրէին (Լոզինսկի): Իսկ Ալոիսիոս Պիզուն մօտ 1670 թ. այդ հաշտութիւնը հետեւեալ կերպ է մեկնաբանում. «Եւ այսպէս դարձաւ արքեպիսկոպոսն յաթոռ իւր եւ զամենայն ինչ կարգեաց ըստ այնմ որպէս էր յառաջ քան զխոստովանութիւն իւր (դաւանութեան հրոտովմայեցւոց)... ի նորոյ ընկալան գնա Հայք, որ կարի գուարճանային ի սիրտ իւրեանց, զի գտին հնար... միացեալս զանձինս ընծայեցուցանելոյ եւ այնու պահելոյ... զարտունութիւնսն, զորս վայելեն մինչեւ ցայսօր՝ մնալով կալով ի նախնի հաւատս իւրեանց: Վասն որոյ սահմանեցին տօն երեւելի... եւ կոչի Տօն Միութեան, եւ արդարեւ, միարանցան նոքա ընդ միմեանս, այլ ոչ ընդ Ս. Եկեղեցւոյն (Հռոմին: Ռ. Հ.): Սովաւանքատումն մանաւանդ եղեւ յեկեղեցւոյն քան միութիւն, զի յայնմհետէ մեծաւ եւս ջերմեռանդութեամբ պաշտէին զհերետիկո-

սական արարողութիւնս իւրեանց, քէպէտնս քահանայքն, յորժամ հարկ լինէր նոցա մատուցանել պատարագ ի Լատին եկեղեցւոյ՝ յաւելուին ջուր ի գինի, որով դիւրագոյն եւս խաբէին զկաթողիկոսն» (ընդգծումներն իմը: Ռ. Հ.): Այսպիսով, միութեան նորագոյն շրջանի առաջին փուլում (1626—1664) լեհահայերը կարողանում են անխաթար պահել հայադաւան եկեղեցու ծիսակարգը՝ չհաշտուած պատարագի ժամին Նիկոլի կողմից Պապի անուան յիշատակութեան ձեւական հանդամանքը:

Առ. Դաւրիթեցին լեհահայերի մասին խօսքն աւարտում է 1652—1653 թթ. դէպքերով եւ վերջում նշում, թէ նրանք մինչեւ այսօր (այսինքն՝ 1660 թ.: Տե՛ս «Պատմութիւն, էջ 389) հաշտ ու խաղաղ ապրում են իրենց եպիսկոպոսի հետ: Հետեւաբար միութեան հետագայ դէպքերին նա տեղեակ չէր:

Մինչդեռ 1664 թ. Թէատինեան կրօնաւոր Կղեմենոս Գալանոսը գալիս է Լվով, միութեանական քահանաներ աճեցնելու համար բացում Հայոց ձեմարան եւ սկսուում է միութեան երկրորդ եւ վճռական փուլը, որը շարունակում է մինչեւ Վ. Յունանեանի թեմակալութեան սկիզբը (1686 թ.): Այդ տարիներին պատարագի մէջ հետզհետէ արժատաւորուում են լատինական ծիսակարգի որոշ տարրեր, մասնաւորապէս գինուն ջուր խառնելու խորհուրդը, որը հայադաւան եկեղեցին կաթողիկ եկեղեցուց անջատող հիմնական կէտերից էր:

Թէեւ 1664 թ. յետոյ Թէատինեանների ջանքերով լատին կղերը կարողացաւ մի շարք արժատական փոփոխութիւններ մտցնել հայադաւան եկեղեցու ծիսակարգի մէջ, բայց այսուամենայնիւ, լեհահայ եկեղեցին, միաժամանակ թէ՛ էջմիածնին եւ թէ՛ Հռոմին ենթակայ լինելու իւրօրինակ հանդամանքով, իր կիսաանկախ վիճակը պահպանեց մինչեւ Վ. Յունանեանի դահակալութեան սկիզբը, որից յետոյ հետզհետէ՝ թէ՛ իրաւաբանօրէն եւ թէ՛ փաստօրէն, վերջնականապէս կապերը խզեց էջմիածնից:

Այսպիսով՝ միութեան դէմ լեհահայ համայնքի 1627—1652 թթ. պայքարի շնորհիւ, Փիլիպպոս Աղբակեցին կարողացաւ 1652 թ. վերականգնել լեհահայ եկեղեցու

<sup>84</sup> Բռնի Միութիւն, էջ 27:

ենթակայութիւնը էջմիածնին, պահպանել հայադաւանութեան գլխաւոր կէտերը:

Լատինացման դէմ լեհահայերի 1650-ական թուերի յաղթանակին որոշ չափով նըպաստեց նաեւ 1648—1657 թթ. Լեհաստանում տիրող քաղաքական խիստ աննպաստ իրադրութիւնը:

1648—1654 թթ. Բողոքի իմենիցիկին, Ղրիմի թաթարներին զինակից եւ Ռուսաստանի գաղտնի հովանաւորութեամբ, ապըստամբում է Լեհաստանի դէմ: 1654 թ. Պեդեսալաւեան ռազան աջափնեայ Ուկրայինան միացնում է Ռուսաստանին: 1655 թուին Շվեդիայի թաղաւոր Կարլ Գուստաւի զորքերը, առիթից օգտուելով, ներխուժում են Ռեչ Պոսպոլիտա եւ հասնում մինչեւ Չամոստիէ հայաշատ քաղաքի մատոյցները: Այդ նոյն ժամանակ իմենիցիկին պաշարել էր Լըվովը, իսկ Կարլ Գուստաւի հետ Լեհաստանը բաժանելու պայմանագիր կնքած Բրանդենբուրգի իշխան Ռակոցի 1656 թ. 40 հազարանոց բանակով պաշարել էր Կրակովը: Երկիրը անկախութեան կորստի շեմին էր եւ Լեհական արքունիքը ժամանակ չունէր ուշք դարձնելու հայերի միութենական հարցերին: Ընդհակառակը՝ ի նկատի ունենալով Բ. իմենիցիկու համակիրներին շարքերը որոշ հակամիարար հայերով համալրուելու դէպքերը<sup>85</sup>, արքունիքը լատին կղերի միութենական ջանքերը այդ իրավիճակում դիտում էր որպէս երկրի միասնականութիւնը խարխուղ գործողութիւն եւ ձգտում էր հայերին սերաւահանել<sup>86</sup>,<sup>87</sup>:

Բազմաթիւ փաստերի վկայութեամբ լեհահայերը պայքարը չեն դադարեցնում նաեւ

<sup>85</sup> W. KACHOWSKI, HISTORIA PANOWANIA JANA KAZIMIERZA... T 1, str. 24, Poznan.

<sup>86</sup> 1850 (Հմմտ.՝ Յա. Դաշկեւիչ, «Հայ Ռուսիէն կապերը ժէ դարում») Ուկրաինո-արմենական սվեպի վ XVII վիէկէ (փաստաթղթերի ժողովածոյ, առաջարան, էջ 20—23, Կիււ, 1900 թ.):

<sup>87</sup> Եան Կաղիմիրը 1651 թ. հրովարտակով ընդարձակում է Հայ վաճառականների իրաւունքները, իսկ 1654 թ. արտօնագրով ոչ միայն մերժում է հայերի իրաւունքները սահմանափակելու Լվովի քաղաքապետարանի (մագիստրատ) պահանջը, այլեւ հայերին տալիս որոշ ապրանքներ վաճառելու, քաղաքի կենտրոնում աներ եւ արհեստանոցներ ունենալու լրացուցիչ Արտօնութիւններ: Տե՛ս Ս. Բարոնչ, Ռես Ձեյրով Օրմիանսկիս, էջ 123: Յա. Դաշկեւիչ, Հայ-Ռուսիէն կապերը ժէ դարում առաջարան, էջ 21 եւ փաստաթուղթ 30 (էջ 90—106):

1664 թ. յետոյ: Արտիսիոս Պիդուի շարադրանքից երեւում է Թէատինեանների կողմից 1652 թ. «պայմանագրի» խախտումները Թորոսովիչին ստիպում են ընդդիմանալ: 1666 թ. Գալանոսի մահը էլ աւելի է աշխուժացնում հայերին, որոնց պահանջով Թորոսովիչը վճռում է փակել Գալանոսի բացած «Հայոց ձեմարանը»: Բայց լատին բարձրաստիճան հոգեւորականութեան (Պիդնատելի եւ այլք) եռանդուն ջանքերով դպրոցը վերաբացուում է: 1668 թ. Սեպտեմբերի 27ին կայացած Լվովի «Հայոց աւազներ խորհրդի» նիստը միաձայն որոշում է Հռոմ մեկնող արքեպիսկոպոսին «խնդրել» որպէսզի սա հայադաւան եկեղեցուց լեհահայ եկեղեցու հետադայ անջատման «դէմն առնի»<sup>88</sup>: Յանձնարարականների բնոյթ ունեցող լեհահայերին յղած Դաւիթ Դ. եւ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսների 1662—1672 թթ. նամակներից յստակօրէն երեւում է, որ Նիկոլը պահպանում էր Փիլիպպոս կաթողիկոսի հետ կնքած պայմանագրի կէտերը<sup>89</sup>:

Փաստօրէն, եթէ 30 տարի առաջ ինքնակամ միութիւն ընդունած եւ իր ժողովրդի դէմ յարձակումներ գործող թեմակալը միաբարներին պէտք էր իրենց դործը սկզբնաւարելու համար, ապա այժմ, երբ սկսուել էր վերջնական միութեան վնասակամ փուլը, դէպի էջմիածին հակուած եւ հայադաւանութեան հիմնական կէտերը պահպանել ջանացող Նիկոլը միաբարներին չէր կարող պէտք դալ: Ահա թէ ինչու՞ Նիկոլին մեկուսացնելու համար Թէատինեանները նրան 1668 թ. կարողանում են մի կերպ զրկել Պապի մօտ: Նիկոլը իր փոխարէն թողնելով իր ազգական Եան Կերիմովիչ եպիսկոպոսին<sup>90</sup>, մեկնում է Հռոմ, ուր Պապը նրան բարձր պաշտօններով, ռոճիկով, կարգինալի ծիրանի հազըններով<sup>91</sup> եօթ տարու չափ պահում է մօտը: Բայց կաթողիկոսները Նիկոլին մեկուսացնելուց յետոյ կանգնեցին նոր խնդրի առաջ: Յակոբ Ջուղայեցին Նիկոլի Լվովից մեկնելը լսելով 1671 թ. Սեպտեմբերի 1-ի կոնդակով Լվով է ուղարկում իր կողմից եպիսկոպոս օժուած Թէոդորոս Վարդանեանին (Լեհական աղ-

<sup>88</sup> Լվովի պետական դիտական դիւան, ձեռագրերի բաժին, Օսոլինսկիների ենթարածին, թիւ 1723 II, թ. 3 (տե՛ս Յա. Դաշկեւիչ, «Հայ-Ռուսիէն կապերը ժէ դարում», էջ 116, փաստաթուղթ թիւ 38):

<sup>89</sup> Ղ. Ալիշան, Կամենից, էջ 257—265:

<sup>90</sup> Բարոնչ, Ռես, էջ 125:

<sup>91</sup> Ժըվոտը, էջ 335:

բիւրներում՝ Վարդանովիչ) որպէս «առաջնորդ հովիւ եւ տեսուչ լեհաց երկրին», որպէսզի իշխանութիւն վարէ՝ Հայոց եկեղեցուց կանոնաց համեմատ»<sup>92</sup>: Հասկանալի է՝ էջմիածինը նպատակ ունէր պահպանելու Լեհահայ եկեղեցու ինքնուրոյնութիւնը: Լատին հոգեւորականութիւնը անմիջապէս անցնում է հակադիր քայլերի: Ալ. Պիդուին փոխարինողներ Լուբելին եւ Բոսը լեհական թագաւորին բողոքում են, թէ քանի Նիկոլը կենդանի է, նրա յաջորդին ընտրելու իրաւունքը պատկանում է լեհական թագաւորին: Այս դործին խառնուեց նաեւ Հռոմի Կղեմնոս Ժ Պապը՝ Լեհաստանի թագաւորին դրած իր 1672 թ. Յունուարի 3-ի նամակով նրան խնդրելով Վարդանովիչին «քաղաքից վտարել»<sup>93</sup>:

Վարդանովիչին թէեւ Լվովահայերը լաւ ընդունեցին, բայց չուտով նա հեռացաւ քաղաքից:

Լեհահայերը տեսնելով Վարդանովիչին չեն կարողանում պահել, բազմաթիւ դիմումներով Հռոմից խնդրեցին Թորոսովիչին ետ ուղարկել<sup>94</sup>: Թէեւ լատին կղերը Նիկոլին չէր ուզում Լվովում տեսնել, բայց յարմար թեկնածու չգտնելով, ստիպուած Թորոսովիչին 1675 թ. ետ ուղարկեց Լվով՝ բայց նըրան ստիպելով աթոռակից ընտրել Վ. Յունանեանին<sup>95</sup>:

Թորոսովիչի բացակայութեան ընթացքում թէեւ ժամասացութիւններն ու երաժշտական հատուածները հիմնականում անփոփոխ էին մնացել, բայց պատարագի եւ ծիսակարգի մէջ միութեան կուսակիցները նոր «չտկուսներ» էին մտցրել: Թորոսովիչի Լվով ժամանելուց յետոյ Վ. Յունանեանը չզիմանալով Նիկոլի վարմունքին, մեկնում է Հայաստան<sup>96</sup>:

Նիկոլ Թորոսովիչի մահուանից (1681 թ.) յետոյ Լեհահայերը էջմիածնի օժանդակութեամբ դիմում են հայադաւանութիւնը

<sup>92</sup> Յակոբ Դ կաթողիկոսի 1671 թ. եւ 1672 թթ. նամակները լեհահայերին, Ղ. Ալիշան, Կամենից, էջ 259—265: Տե՛ս նաեւ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, էջ 2596:

<sup>93</sup> Չ. Լեխիցկու նշ. աշխ., էջ 76:

<sup>94</sup> Ջաւրեան, նշ. յօդուածը, «Հայրենիք», թիւ 6, էջ 126:

<sup>95</sup> Անդ:

<sup>96</sup> Չ. Լեխիցկի, նշ. աշխ., էջ 80:

վերականգնելու վճռական նոր քայլերի, որոնք անծանօթ են հայ պատմագիտութեանը:

Բարոնչը դիւանական փաստաթղթերի վրայ հիմնուելով այդ իրադարձութիւնների մասին եզակի տեղեկութիւններ է տալիս:

Ըստ նախնական պայմանադրութեան, Վարդան Յունանեանը, որը Նիկոլի աթոռակից թեմակալն էր, սրա մահուանից յետոյ պիտի նստէր թեմակալի դահին: Բայց Նիկոլը պատկանում է լեհական թագաւորին: Այս դործին խառնուեց նաեւ Հռոմի Կղեմնոս Ժ Պապը՝ Լեհաստանի թագաւորին դրած իր 1672 թ. Յունուարի 3-ի նամակով նրան խնդրելով Վարդանովիչին «քաղաքից վտարել»<sup>97</sup>, գրում է Բարոնչը Յունանեանի մասին:

Իսկ մինչ Յունանեանին Նիկոլը կաթողիկոսը կը թոյլատրէր վերադառնալու Լեհաստան, լեհահայերը կատարում են նախնիների հաւատը վերականգնելու մի նոր փորձ:

Նիկոլի մահուանից յետոյ Կամենեց-Պոդոլսկի հայ համայնքը եպիսկոպոս է ընտրում Թորոսովիչի աճեցրած հոգեւորականներից ոմն Եան Բերնարտովիչին (կամ՝ Բերնատովիչ), որը գալիս է Լվով եւ անցնում հակամիաբարական շարժման գլուխը:

Հիմնուելով Լվովի հայոց առաջնորդարանի դիւանական փաստաթղթերի վրայ, Բարոնչը մանրամասնում է այս իրադարձութիւնները. «Բերնատովիչը խոստացել էր միշտ հնազանդ լինել իր արքեպիսկոպոսին (Նիկոլին: Ռ. Հ.): Նա դովելի կերպով պահում էր իր այդ խոստումը մինչեւ 1683 թ., երբ Լվով ժամանեց հայադաւան մի եպիսկոպոս, որն իրեն Երուսաղէմի պատրիարք անուանելով հայադաւանութեանը վերադառնալու շատ մեծ յոյսեր արթնացրեց որոշ հայերի մէջ: Սրանք Եան Բերնատովիչին համոզեցին Կամենեցի եպիսկոպոս օժուել: Սա տեղի տուեց հայերի յորդորներին, ապօրինաբար եպիսկոպոս օժուեց եւ կատարում էր եպիսկոպոսի պաշտօն: Այդ մասին փմանալով, Լեհաստանում Պապի առաքելական նուիրակ, Եփեսոսի արքեպիսկոպոս Օպի-

<sup>97</sup> Բարոնչ, Ժըվոտը, էջ 140: Տե՛ս նաեւ՝ «Հայրենիք», թիւ 6, էջ 127 (Ջաւրեանի յօդուածը):

ցիուչ Պալավիցիներին անմիջապես նզովք դրեց Եանի վրայ՝ սպառնալով նզովել իւրաքանչիւրին, ով սրան եպիսկոպոս ճանաչի<sup>98</sup>» :

Բերնատովիչի թեմակալութեան մասին գրել են նաեւ Թ. Գրոմնիցկին, Չ. Լեխիցկին եւ միւս լեհ պատմաբանները :

Այսպիսով՝ չնայած Թորոսովիչի մահուանից յետոյ Յունանեանը պէտք է փոխարինէր նրան, բայց Լեհահայերը Կամենեց Պոդոլսկի յիշեալ հոգեւորականին 1683 թ. եպիսկոպոս օծելով կարողանում են 3-6 տարի դնել Լվովի թեմակալի գահին, մինչեւ Վարդան Յունանեանը «1686 թ. Հոկտեմբերի 3-ին Հայաստանից Լվով ժամանելով<sup>99</sup>» չի անցնում իշխանութեան գլուխ<sup>100</sup> եւ 1687 թ. Բերնարդովիչին կարգալոյծ անելով չի վերստարում եկեղեցական գործունէութիւնից<sup>101</sup> :

Ինչպէս տեսնում ենք, միութեան սկզբից (1630 թ.) 53 տարի յետոյ, երբ Լեհահայերի դաւանափոխութիւնը վաղուց պէտք է աւարտուած լինէր, նրանք ոչ միայն շարունակում էին պայքարը, այլեւ յաջողացնում են Լվովի Հայոց թեմը աւելի քան երեք տարի (ոմանց կարծիքով՝ 1681—1686 թթ.) վերցնել իրենց ձեռքը, որը նախնեաց հաւատը պահելու Լեհահայութեան երեւի վերջին ճիգն էր :

Այս փաստը եւս մի զօրեղ կոռուան է պնդելու, որ Լեհահայերը երկար ժամանակ չեն դադարացրել պայքարը միութեան դէմ :

Այսպիսով՝ Լեհահայերի միութեան երրորդ եւ վերջնական փուլը սկսում է Հայաստանից Վ. Յունանեանի Լվով ժամանելուց յետոյ՝ 1686 թ. :

Այժմ տեսնենք 1660—80-ական թթ. Հայ ազատագրական շարժումները եւ Եւրոպայի քաղաքական վիճակը ինչ առնչութիւն եւ ազդեցութիւն կարող էին ունենալ Լեհահայերի միութեան վճռական փուլում :

1645 թ. Վենետիկի Հանրապետութեան եւ Օսմանեան կայսրութեան միջեւ բռնկուեց

<sup>98</sup> Ժըվոտը, էջ 76—77 :  
<sup>99</sup> Ռըս Ջելով Օրմիանսկի, էջ 130 :  
<sup>100</sup> Հայ պատմագիտութիւնը չի ճշտել նաեւ Վ. Յունանեանի Լվով ժամանելու օրը (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատմ., էջ 2651), որը ճշգրիտ բերում է Բարոնը՝ հիմնուելով Լվովի Հայոց եկեղեցու դեանական թղթերի վրայ :  
<sup>101</sup> Ժըվոտը, էջ 77 :

Կրետեկան կամ Կանդինայի 25-ամեայ պատերազմը, որը Միջերկրականի աւազանում եւ Եւրոպական ցամաքամասում գերիշխանութիւն ձեռք բերելու տեսակէտից շօշափում էր համաեւրոպական շահեր : Եւրոպական պետութիւնները, մի կողմ դնելով իրար միջեւ եղած հակասութիւնները, Հռոմի Պապի գլխաւորութեամբ շահագրգռուած էին Վենետիկի յաղթանակով : Հռոմի Իննուկենտիոս Ժ եւ Աղեքսանդր է Պապերը Վենետիկին օգնում էին ոչ միայն դիւանագիտական ճանապարհներով՝ Եւրոպական տէրութիւններին յորդորելով միաւորուել Թուրքերի դէմ, այլեւ զէնքով, ռազմամթերքով եւ նոյնիսկ ռազմանաւերով<sup>102</sup> :

Թուրքիայի տիրապետութեան տակ դստնուող քրիստոնէայ ժողովուրդները (Հայեր, յոյներ, սերբեր, ասորիներ, վալաքներ եւ այլք) ձգտում էին կայսրութեան հետ հաշիւ ունեցող Եւրոպական պետութիւնների շահերը դաշնակել իրենց քաղաքական նկրտումներին եւ մեծ յոյսեր էին կապում այդ ժամանակուայ Եւրոպայի հզօրագոյն պետութիւն Պրանսիայի հետ : Այդ յոյսերը բթթում էին 1660-ական թուերին արեւելքում պլտտուող այն լուրերից, թէ՛ Լուդովիկոս Ժ-ն ծրագրել է Թուրքերի դէմ խաչակրաց արշաւանք սկսել՝ «քրիստոնէայ ժողովուրդներին անհաւատներից փրկելու համար» :

Արեւելքում քաղաքական գերիշխանութիւն ձեռք բերելու ծրագրերով մտահոգուած Լուդովիկոս Ժ-ին Հռոմը նման գործ ձեռնարկելու ցանկութիւն, իրօք, ներշնչել էր : Նոյնիսկ Արեւ-թագաւորին էին ներկայացուել Թուրքիան կործանելու որոշակի ծրագիր<sup>103</sup> :

Ուշակրաց արշաւանքի լուրերից խանդավառ Հայ ազատագրական գործիչները Եւրոպայի մայրաքաղաքներում եւ Հռոմում եռանդուն բանակցութիւններ էին սկսել միութեան ուղղութեամբ Հայաստանի ազատագրութեան գործը գլուխ բերելու համար : 1662 եւ 1663 թթ. Գալանոսի աշակերտ, Կիրիկիայի Հայոց կաթողիկոս Ուշատուր Գաղատացին, Հալէպի Ասորի եպիսկոպոս Անդրէասի եւ Յունաց պատրիարք Մակարի հետ հպատակութեան թուղթ էր յղել Հռոմի

<sup>102</sup> Հ. Անասեան, 17-րդ դ. ազատագրական շարժումները Արեւմտեան Հայաստանում, էջ 87, 1961 թ., Երեւան :  
<sup>103</sup> Անդ, էջ 164 :

Պապին՝ Հայաստանի ազատագրութեան մէջ ծրանսիական զէնքից սպասուելիք օգնութեանն ի հատոյց : Նոյն նպատակով ու պայմաններով 1662 թ. Միջայէլ Սեբաստացի կաթողիկոսի գլխաւորութեամբ կայացած Սեբաստիայի դաղտնի խորհրդակցութիւնը Հռոմ էր ղրկել հետագայում Հայ ազատագրութեան երախտաւորներից մէկին՝ Աբգար դպիր Թուրքատեցուն : Ազատագրական շարժումների եռանդուն գործիչ Մահտեսի Մուրադը, որը դեռեւս 1650—60-ական թթ. Վենետիկում, Փարիզում եւ Հռոմում ազատագրական գործերով բազմիցս հանդիպել էր տեղի նշանաւոր պետական ու կրօնական գործիչների հետ, 1670—80-ական թթ. նորից է բախում Վերսայի դռները՝ Պրանսիական նորակառոյց արքունիքում արժանանալով շքեղ ընդունելութեան<sup>104</sup> :

1677 թ. Յակոբ Զուղայեցու նախահաւթեամբ դումարուած էջմիածնի ժողովը եւս կաթողիկոսի գլխաւորութեամբ պատուիրակութիւն է առաքում Հռոմի Պապի մօտ՝ դարձեալ նոյն գործերով եւ նոյն պայմաններով<sup>105</sup> :

Ուշակրաց արշաւանքի եւ Եւրոպական աշխոյժ բանակարութիւնների մասին այս լուրերը օգտագործելով եւ խանդավառելով թուրք-պարսկական տիրապետութիւնը թութափել ձգտող Հայութեանը, լատին միաբարները արտակարգ եռանդով շարունակում էին միութեանական գործը, մշտական կապեր ունենալով Հռոմի ու Փարիզի հետ<sup>106</sup> :

Այնպէս որ, երբ 1620-ական թուերին Պոլսի Պատրիարք Կիրակոսին միութեան բերած<sup>107</sup> Գալանոսը 1664 թ. ժամանեց Լվով, շատ լաւ տեղեակ էր վերոյիշեալ դէպքերին եւ իր «Միարար Եղբայրների» հետ այս տեղեկութիւնները առաւելագոյնս պիտի օգտա-

<sup>104</sup> Անդ, էջ 96—98 :  
<sup>105</sup> Հռոմ գնալու ճամփին Հակոբ Զուղայեցին Պոլսում մահանում է 1680 թ., իսկ պատուիրակութիւնը, բացի երիտասարդ Իսրայէլ Օրուց, ետ է գալիս :  
<sup>106</sup> Նախիջևանի Հայ կաթողիկ համայնքների 1688—1674 թթ. եպիսկոպոս Մատթէոսը Սպահանում կատարում էր նաեւ Լուդովիկոս Ժ-ի, Պապի ու Վենետիկի հանրապետութեան ներկայացուցչի պաշտօն (տե՛ս Լէօ, Երկ. ժող., հտ. 3, «Հայոց Պատմութիւն» հտ. 3, Գիրք տաղին, էջ 336, Երեւան, 1969 թ.) :  
<sup>107</sup> Լէօ, Հայկական տպագրութիւն, հտ. 1, էջ 241—246, 1904 թ., Թիֆլիս :  
<sup>108</sup> Լէօ, Հայոց Պատմութիւն, հտ. 3, Գիրք առաջին, էջ 336, 1969 թ., Երեւան :

գործէր Լեհահայերի դիմագրութիւնը կոտրելու համար :

Լեհահայերին թեւաթափ անելու տեսակէտից Լվովի լատին կղերի համար կարեւոր կոռուան էր Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի միութեան յարումը, որ Յիսուսեանք ութ տարուայ ջանքերից յետոյ կարողացան իրականացնել հէնց էջմիածնում, 1676 թ. Ապրիլի 2-ին «անթիւ ժողովրդեան առաջ<sup>108</sup>» :

Դժուար չէ պատկերացնել միութեան դէմ տասնամեակներ մարտնչող Լեհահայոց համար ինչ ազդեցութիւն կարող էին ունենալ Հայաստանից անընդհատ հոսող այն հաւաստի լուրերը, թէ Հայրենիքի ազատագրութիւնը օրերի հարց է, որ այդ նպատակին հասնելու համար այսինչ Պատրիարքը, այսինչ Կաթողիկոսը Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու ակնկալիքներով ընդունել է Հռոմի հետ միութիւն :

Այսպիսով՝ կարելի է հաստատապէս պնդել, որ 1660—70-ական թուերի վերոյիշեալ դէպքերը Լվովի լատին հոգեւորականութիւնը օգտագործում էր Լեհահայերի դիմագրութիւնը ջլատելու համար :

1680-ական թուերին Հայ ազատագրական շարժման մէջ սկսուում է նոր փուլ : Եւրոպայում կատարուել էին քաղաքական լուրջ փոփոխութիւններ եւ ուժերի նոր դասաւորութիւն : Կանդինայի պատերազմը 1669 թ. տանուլտալուց յետոյ Վենետիկը, կորցրած լինելով միջերկրականի եւ Բալկանների մի շարք կարեւոր առեւտրական ու ռազմավարական շրջաններ (Կրետէ, Հռոդոս, Կիպրոս կղզիները, ինչպէս նաեւ Թեսալիան, Թրակիան, Պելեպոնէսը), զրկուում է Եւրոպայում ունեցած իր երբեմնի ազդեցութիւնից :

Իսկ Հարսուրդների եւ Պրանսիայի միջեւ առկայ մշտական հակասութիւնները Լուդովիկոս Ժ-ին հնարաւորութիւն չըտուեցին արեւելքում իրագործելու իր քաղաքական ծրագրերը : Վենետիկին յաղթելուց եւ Պրանսիայի հետ առեւտրա-տնտեսական պայմանագրեր կնքելուց յետոյ Թուրքիան 1670—80-ական թթ. աշխուժացնում է ռազմական գործողութիւնները՝ այս անգամ

<sup>108</sup> Լէօ, Հայոց Պատմութիւն, հտ. 3, Գիրք առաջին, էջ 336, 1969 թ., Երեւան :

Աւստրիական կայսրութեան եւ Լեհաստանի դէմ: 1672 թ. թուրքերը ներխուժում են Պոդոլիա եւ գրաւում Կամենեցը: 1673 թ. Եան Սորբսկին Պոտինում ջարդում է Օսմանեան բանակը, 1683 թ., արդէն որպէս Լեհաստանի Եան Գ. Սորբսկի թագաւոր, նա 40 հազար աւստրիական ու 30 հազար լեհական զորքերի ղրուին անցած<sup>109</sup> Վիեննայի պարիսպների տակ կործանում է թուրքական 90 հազարանոց բանակը՝ կանխելով Օսմանեան կայսրութեան ատաղիստացումը Եւրոպայի խորքերը: Վիեննայի ճակատամարտից յետոյ Եան Սորբսկու Լեհաստանը դառնում է Եւրոպայի ազդեցիկ տէրութիւններից մէկը: Հակաթուրքական դաշնակցութեան կենտրոնը տեղափոխուում է Աւստրիա: 1683—84 թթ. թուրքերի դէմ ստեղծուում է նոր խումբակցութիւն (Հռոմ, Աւստրիա, Լեհաստան, Վենետիկ), որտեղ Լեհաստանը ազդեցիկ դերք է բռնում:

Եւրոպայում կատարուած ահա այս փոփոխութիւնները ազդում են նաեւ հայ ազատագրական շարժման զաղափարաբանութեան ու դիմադարձութեան վրայ: Հայերը հայեացքներն ուղղում են Աւստրիա եւ Լեհաստան<sup>110</sup>: Դիմադարձութեան այս փոփոխութիւնը արտացոլուում է նոյնիսկ դրականութեան մէջ: 1678 թ. էջմիածնի խորհրդակցութիւնից ջիչ անց, 1679 թ. Եղիա Քեոմուրճեանը Սորբսկուն ուղղուած մի ներբող է գրում, ուր այդ թագաւորին ներկայացնում է իրբեւ ջրիստոնեայ ժողովուրդներին «սիրող, խնամող, դաստիարակող հայր դատաւոր, տէր. եւ թագաւոր, փրկիչ թագաւոր»<sup>111</sup>:

Լեհաստանից սպասուող ազատագրական ակնկալիքները նորութիւն չէին հայերի համար: Դեռեւս Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը Հռոմի Յուլիոս Գ Պապի յանձնարարական նամակով 1550 թ. հանդիպում ունեցաւ Գերմանական կայսր Կառլոս Ե-ի, ապա Սիգիզմունդ Բ-ի հետ<sup>112</sup>:

<sup>109</sup> Լեհական 30 հազարանոց բանակի մէկ վեցերորդը հայեր էին, որոնք կռուում էին «իրենց մուկեաներով, համազգեստով ու դրօշակներով» (տե՛ս, Բարոնչ, Ռես Ջեյուվ Օրմիանսկիէ, էջ 68):  
<sup>110</sup> Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. 4, էջ 126, 1972 թ., Երևան:  
<sup>111</sup> Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ, հտ. Բ, էջ 222:  
<sup>112</sup> Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. 4, էջ 98:

Բարոնչի տուեալներով Ստեփան Բատոր թագաւորը (1576—1586) «Չերմութեամբ էր պաշտպանում հայերի գործերը»<sup>113</sup>: Այդ «Չերմութեան» խորհուրդն այն էր, որ նա երազում էր նուաճել Մոսկովիան եւ թուրքերի զաւթած Անդրկովկասը՝ այստեղից Փոքր Ասիա եւ Պոլիս դուրս գալու համար<sup>114</sup>:

Հայ ազատագրական շարժման գործիչները եւս իրենց հերթին շփոմներ են ունեցել լեհական արքունիքի հետ: 1660—ական թթ. Լեհաստան էր դնացել Յովհաննէս Թուրիւնչիւն<sup>115</sup>: Վերը տեսանք Փիլիպպոս կաթողիկոսի կապերը Եան Կազիմիր թագաւորի հետ Պիրուսովիչի, ինչպէս նաեւ Նիկոլ Թորոսովիչի միջոցով, որը հանդէս էր դալիս որպէս Հռոմը եւ լեհական արքունիքը Փիլիպպոսին կապող օղակ:

Մահտեսի Մուրատի հետ 1666 թ. Լուդովիկոս ԺԴ-ին այցելած Յոյների պատրիարքական փոխանորդ Պալէոլոգը մի թղթի մէջ նշում է Յոյներն ու Հայերը թուրքերի դէմ պատրաստ են այստամբել եւ որ նրանց կը միանան նաեւ միւս ջրիստոնեայ թրքահայատակները՝ օժանդակութիւն դոնելով Լեհաստանի թագաւորից<sup>116</sup>: 1672 թ. լեհահայ բանադնաց Բողդան Գուրդին Ռուսաստանում Սպահանի հայ առեւտրական ընկերութեան ներկայացուցիչ Գր. Լուսիկենցի հետ ձեռքտում էր թուրքերի դէմ քաղաքական դաշինք ստեղծել Ռուսաստանի, Իրանի ու Լեհաստանի միջեւ<sup>117</sup>: Ըստ Բարոնչի, Եան Սորբսկին, որի հայր Յակոբը լեհահայ մեծ բանաստեղծ Շիմոն Շիմոնովիչի աշակերտն է եղել<sup>118</sup>, դեռեւս 1660—ական թուրքերին էր յղացել «Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու մեծ միտքը եւ այդ նպատակով կապ հաստատել այդ ժամանակ Ստամբուլ դռնուող»<sup>119</sup> էջմիածնի կաթողիկոս Յակոբ

<sup>113</sup> Ռես Ջեյուվ Օրմիանսկիէ, էջ 64:  
<sup>114</sup> Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ, հտ. Բ, էջ 349:  
<sup>115</sup> Արշ. Ալպոյաճեան, Հայ Եպիսկոպոսի մը առաջնութիւնը ի Հայէջիստան ժե դարուն, էջ 63, Կահիրէ, 1946 թ.:  
<sup>116</sup> Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ, հտ. Բ, էջ 349:  
<sup>117</sup> Անդ, էջ 350—351:  
<sup>118</sup> Մ. Բարոնչ, Ռես Ջեյուվ Օրմիանսկիէ, էջ 64:  
<sup>119</sup> Յակոբ Ջուղայեցին 1666 թ. Սեպտեմբերից մինչեւ 1667 թ. Ապրիլի սկզբները իրօք դռնուում էր Պոլիս՝ խափանելու Տաճկահայերի համար էջմիածնից անկախ կաթողիկոսութիւն հիմնելու Եղիազար Այնթապցու քայլերը (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատմ., հտ. Բ, էջ 2568, 2571):

Ջուղայեցու հետ, որից ստացած 1679 թ. նամակը, որպէս թանկագին մի յուշարձան, պահում էր իր դիւանում<sup>120</sup>:

Բարոնչը տեղեկացնում է նաեւ, որ Պոլիս ուղարկուած 1660 եւ 1667 թթ. լեհական դեսպանութեան կազմում էին նշանաւոր լեհահայեր Միկոլայ Մաթվիաշեւիչը (1660 թ. դեսպանութեան կազմում) եւ Նիկոլ Բայդուլովիչը (1667 թ. դեսպանութիւնում<sup>121</sup>): Քանի որ Յակոբ Ջուղայեցին 1666—1667 թթ. դռնուում էր Պոլիս, կարելի է ենթադրել, որ այդ տարիներին թաղի մեծ Հեթման Սորբսկին Ջուղայեցու հետ կապեր է ունեցել Բայդուլովիչի միջոցով: Այս ենթադրութիւնը հաւանական է նաեւ այնու, որ Բայդուլովիչը 1662 թ. եղել է էջմիածնում, որտեղից «արեւելեան տեղեկութիւններով հարստացած Լվով վերադարձաւ 1662 թ. Յուլիսի 13-ին»<sup>122</sup>:

Այս եւ նման բաղմաթիւ ուղղակի եւ անուղղակի փաստերը ցոյց են տալիս որ հայ ազատագրական միտքը ԺՁ դարի 40—ական թուրքից շփոմներ է ունեցել լեհական արքունիքի հետ: Բայց այս կապերը, ինչպէս ասուեց, վերածուցին քաղաքական դիմադարձութեան Եան Սորբսկու թագաւորութեան շրջանում (1674—1696) երբ թուրքերի դէմ տասնեակ տարիների պայքարի մէջ դռնուող Լեհաստանը դարձաւ Եւրոպայի ազդեցիկ պետութիւններից մէկը: Պէտք է նշել Սորբսկին, ըստ Ս. Բարոնչի տուեալների, դեռեւս թաղի մեծ Հեթման պաշտօնում եւ դրանից յետոյ, շրջապատուած էր բաղմաթիւ լեհահայերով: Եժի Շիմոնովիչը նրա անձնական նկարիչն էր<sup>123</sup>, Վարչաւացի Յակոբ Մինասովիչը՝ նրա անձնական քարտուղարը<sup>124</sup>, Միկոլայ Հաշիւեւիչը ազատ ելք ու մուտք ունէր Սորբսկու մօտ, սրա խնդրանքով էր, որ Սորբսկին հայերին թղթաւորեց Կիւեւի իշխան Թէոդոր Դմիտրեւիչի հրովարտակից սկսած մինչեւ Եան Սորբսկու ժամանակներում հայերի տրուած լեհ թագաւորների հրովարտակներն ու արտօնագրերը Վարչաւացի դիւանից արտագրուի եւ

<sup>120</sup> DZIENNIK LITERACKI, Թիւ 22, 1854, էջ 171, Լվով:  
<sup>121</sup> Ռես Ջեյուվ Օրմիանսկիէ, էջ 66—67:  
<sup>122</sup> Ժրվոսը, էջ 57:  
<sup>123</sup> Ժրվոսը, էջ 411:  
<sup>124</sup> Ժրվոսը, էջ 203:

տրուի Լվովի հայոց եկեղեցու դիւանին<sup>125</sup> Լվովցի Բեդրոս Ջախարիասեւիչը Եան Սորբսկու ոսկերչական արհեստանոցի ոսկերիչն էր: Առաւել նուրբ աշխատանքները Սորբսկին յանձնարարում էր միայն նրան<sup>126</sup>: Արդէն 1677 թ. Սորբսկին Պոլիս է ուղարկում այդ շրջանի Լեհաստանի արեւելեան դիւանագիտութեան ամենանշանաւոր դէմքին՝ հայագրի Կոստանդին Սուլէյման դը Սըրբին: Ի դէպ, այդ դեսպանութեան առիթով Վ. Ղոզինսկին գրում է. «1677 թ., երբ Յակոբ Ջուղայեցին Պոլիս էր»<sup>127</sup>, այնտեղ դնաց լեհական մի դեսպանութիւն, որի մէկ անդամն էր Կոստանդին Սուլէյմանը, որը ինչ-ինչ դաղտնի բանակցութիւններ էր վարում Յակոբի հետ<sup>128</sup>: Անհրաժեշտ է նշել հայ եւ լեհ պատմագիտութիւնը եւս ընդունում է Յակոբ Ջուղայեցի ու Եղիազար կաթողիկոսների հետ Եան Սորբսկու շփոմների ու նամակագրութեան հնարաւորութիւնը: Բայց Բարոնչի բերած փաստերը լրացնում ու ճշգրտում են ազատագրական մտքի լեհական կողմնորոշման սուղ տուեալները:

Այսպէս՝ հիմնուելով Անտոնիւեւիչի «Հայերը Լեհաստանում» գերմաներէն աշխատութեան վրայ, Լեւոն Բարայեանը գրում է. «Եան Սորբսկին առանձնապէս հովանաւորում էր հայերին նրա համար, որովհետեւ մտադիր էր արեւելքի վերաբերութեամբ իրազորել մի ծրագիր, որի վրայ շատ լուրջ ուշադրութիւն էր դարձնում... Վերջին տարիներում: Նա ծրագրել էր Ասիայում հայկական մի անկախ թագաւորութիւն հաստատել Հռոմի Պապի կրօնական եւ Լեհաստանի քաղաքական գերիշխանութեան ներքեւ: Այդ ծրագիրը փրագործելու համար Լեհաստանի հայերը կարող էին Հայաստանում իրենց ազգակիցների մէջ քաղաքական

<sup>125</sup> Wł. Łoziński, Złotnictwo Polskie w dawnych wiekach, str. 124:  
<sup>126</sup> Ժրվոսը, էջ 136—137:  
<sup>127</sup> Պատմագիտութեան մէջ Ջուղայեցու Պոլիս մշտնելու վերաբերեալ միասնական կարծիք չկայ: Ա. Ալպոյաճեանը նշում է 1678 թ., Հայ ժող. պատմութեան ակադեմիական հրատարակութիւնը՝ 1678 թ. վերջերի (հտ. 4, էջ 128, Երևան, 1972), իսկ Հայկական հանրագիտարանում Ջուղայեցու մուտքը Պոլիս գրուում է 1679 թ. Դեկտեմբերին (ՀՄՀ, հտ. 4, էջ 71, 1978: ՀՄՀ, հտ. 6, էջ 67, Երևան, 1980):  
<sup>128</sup> Հմմտ. Հ. Ջաւրեանի նշ. աշխ., «Հայրենիք», Թիւ 6, էջ 130:

որոշ դեր կատարել իբրև պրոպագանդիստներ եւ քաղաքական գործիչներ կամ միջնորդներ<sup>129</sup> :

Արշ. Ալպոյաճեանը, թէեւ առանց աղբիւրը նշելու, բայց աւելի որոշակի գրում է Սորբսկին ծրագրել էր Թուրքիայի թիկունքում վերականգնել Հայոց պետականութիւնը եւ այդ խնդրի շուրջը բանակցելու համար 1678 թուին պատուիրակութիւն էր յղել Յակոբ Առաջապետ մօտ՝ վերջինիս Պոլիս գտնուելու ժամանակ<sup>130</sup> : Վերը Բարոնչի տեղեկացանք, որ Սորբսկին, նախքան թագաւոր դառնալը, Յակոբ Առաջապետ հետ Պոլսում կայեր էր Հաստատել 1660-ական թուերին :

Բարոնչի տուեալներով ճշտուում է նաեւ Սորբսկուն յղած Առաջապետ նամակի թուականը (1679 թ.), որը Հաստատուում է Նահապետ Եղեռացի կաթողիկոսին յղած Սորբսկու 1696 թ. նամակից, որի մասին խօսք կը լինի ստորեւ :

Իսկ Եղիազար Այնթապցու հետ Սորբսկու կայերի մասին անուղղակի ակնարկ կայ Բարոնչի հետեւեալ տեղեկութեան մէջ. «Թուրքերի հետ 1683 թ. զինադադարից յետոյ . . . Սորբսկին վերադարձաւ Կրակով, Հայերին տուած իր խոստումները կատարելու համար դարձեալ սկսեց զբաղուել Հայկական գործերով . . . Սորբսկու նախաձեռնութեամբ Հռոմը նախատեսել էր կարգինալական թասակ, իսկ կայսրը՝ իշխանական թագ, որպէսզի Հայոց կաթողիկոսի (Եղիազար Այնթապցու: Ռ. Հ.) առաջարկած թեկնածուին զուգին կարգինալական թիկնոցով ու իշխանական թագով: Երեւում է Սորբսկին Սուլէյման Կոստանդ զը Սըրի կոմսին օգտագործեց իր նպատակների համար, երբ 1686 թ. նրան որպէս Պապի եւ Եւրոպայի բոլոր դաշնակից պետութիւնների լիազօր դեսպան, ուղարկեց Իրան, որպէսզի Պարսից թագաւորին համոզի մտնելու լիզայի մէջ: Նա մտադիր էր Թուրքիայից ետ վերացընել այն հողերը, որոնք նրան էր զիջել ոչ վաղ անցեալում . . . Այդ դեսպանութիւնը բոլոր արքունիքներում կոմսին մեծ փառք բերեց, իսկ Պարսկաստանը նրան թոյլատրեց

Շամախիում «Հայերին դարձի բերելու համար<sup>131</sup>» առաքելութիւն հիմնել<sup>132</sup> :

Թէեւ Բարոնչի այստեղ ոչ մի խօսք չի ասում Եղիազարի հետ Սուլէյման կոմսի հանդիպման մասին, բայց ինչպէս վերը տեսանք, Վարդան Յունանեանին Եղիազարը Հայաստանից Լվով բաց թողեց Եան Սորբսկու միջնորդութեամբ միայն: Հասկանալի է Եան Սորբսկին այդ միջնորդութիւնը պիտի 1686 թ. Պարսկաստան գտնուող Սուլէյման կոմսի միջոցով անէր: Եան Սորբսկու այս միջնորդութիւնը, որը նշում են նաեւ լեհական պատմաբանները, անուղղակի կուռան է այն ենթադրութիւնը Հաստատելու համար ըստ որի Սուլէյման կոմսը Պարսկաստան գտնուելիս Եղիազար կաթողիկոսի հետ Հայաստանի ազատագրութեան գործում Լեհաստանի ու «սրբազան Լիզայի» երկրների օժանդակութեան վերաբերեալ բանակցութիւններ է վարել: 1680-ական թթ. Հայ ազատագրական շարժման գործիչների հետ Եան Սորբսկու բանակցութիւնների մասին Ս. Բարոնչի տուեալները Հաստատող փաստեր կան նաեւ թէ՛ լեհ, թէ՛ Հայ պատմաբանների աշխատութիւններում, եւ թէ՛ ԺԸ դարի Հայկական վաւերագրերում :

Չ. Լեխիցկին, առանց աղբիւրը նշելու, այս հարցի մասին գրում է. «Եան Սորբսկին ունեցել է Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու Ֆանտաստիկ ծրագրեր . . . Նա Կոստանդին Սուլէյման զը Սըրիի օգնութեամբ 1686 թ. բանակցութիւններ է վարել Յակոբ Առաջապետ հետ<sup>133</sup>, իսկ երկրորդ անգամ, երկու շաբաթ մահուանից առաջ, իր Հայազգի քարտուղար Սիմոն Բեդրոսովիչի միջոցով նամակներ է յղել Նահապետ կաթողիկոսին<sup>134</sup>»: Ս. Բարոնչի վրայ յենուելով նոյնն է գրում նաեւ Լ. Կորվինը. «Եան Գ Սորբսկի թագաւորը . . . որոշեց յարութիւն տալ Հայոց թագաւորութեանը եւ այդ նպատակով

<sup>129</sup> Հայ պատմագիտութիւնը նշում է այդ թուին «Լեհաստանի դեսպանի միջնորդութեամբ Շամախիում եղուիտական առաքելութեան Հաստատումը», (տե՛ս Լէօ, Հայոց Պատմութիւն, գիրք առաջին, էջ 326, 1909 թ., Երեւան), բայց դեսպանի անունը Բարոնչից ենք իմանում:

<sup>130</sup> Ռըս Աեյուվ, էջ 68:

<sup>131</sup> Լեխիցկին այստեղ Եղիազար կաթողիկոսին (1681—1691) շփոթում է Յակոբ Առաջապետը (1655—1680) հետ:

<sup>132</sup> Չ. Լեխիցկի, նշ. աշխ., էջ 87:

տակով բանակցութիւնների մէջ մտաւ (այդ ժամանակ) Ստամբուլ ապրող Հայոց կաթողիկոս Յակոբ Առաջապետ հետ, բայց կաթողիկոսի յանկարծակի մահը եւ Լէոպոլդ կայսեր զինադադարը Թուրքերի հետ այդ պանկութիւնները ի դերեւ դարձին<sup>135</sup>»: Լ. Կորվինն այնուհետեւ խօսում է Սիմոն Բեդրոսովիչի միջոցով Նահապետ կաթողիկոսի հետ Սորբսկու կայերի մասին՝ դարձեալ օգտագործելով Բարոնչի տուեալները<sup>136</sup>: Արշակ Ալպոյաճեանը նշում է, որ Յակոբ Առաջապետ մահուանից յետոյ Սորբսկին, Եղիազար Այնթապցուն յղած նամակում, իբր, գրում էր, թէ Յակոբ Առաջապետը ստացած նամակը պահում է իր դիւանում<sup>137</sup>: Թէեւ սփիւռքահայ պատմաբանի այս տեղեկութեան մէջ անճշտութիւն եւ անորոշութիւն կայ<sup>138</sup>, բայց երախտաշատ պատմաբանի տեղեկութիւնը արժէքաւոր է ա՛յնքանով, որ կարող է լրացուցիչ կուռան ծառայել Եղիազար կաթողիկոսի հետ 1683—84 թթ. Սորբսկու ունեցած շփոխների մասին Բարոնչի այն տեղեկութեան օգտին: Թէ «1683 թ. զինադադարից յետոյ . . . Սորբսկու նախաձեռնութեամբ Հռոմը նախատեսել էր կարգինալական թասակ, իսկ կայսրը՝ իշխանական թագ, որպէսզի Հայոց կաթողիկոսի առաջադրած թեկնածուին զուգէին կարգինալական թասակով ու իշխանական թագով<sup>139</sup>»:

Սորբսկու եւ Եղիազար կաթողիկոսի միջեւ 1683—84 թթ. կայացած բանակցութիւնների օգտին անուղղակի կուռան կարելի է համարել նաեւ Պֆալցի Կուրֆիւրստ Յովհան Վիլհելմին յղած Իսրայէլ Օրիի 1699 թ. Սեպտեմբերի 22-ի նամակ — զեկուցադիրը, որտեղ Օրիի գրում է, թէ «Լեհահայ այսօրուայ թագաւորի նախորդը (Եան Սորբսկին: Ռ. Հ.) 15 տարի առաջ (այսինքն

<sup>135</sup> L. KORWIN ORMIANSKIE RODY SZLACHECKIE, էջ 46, 1934, Կրակով:  
<sup>136</sup> Նոյն տեղում, էջ 47:  
<sup>137</sup> Ար. Ալպոյաճեան, նշ. աշխ., էջ 68:  
<sup>138</sup> Նախ՝ Ալպոյաճեանը չի նշում Եղիազարին յղած Սորբսկու նամակի գոնէ մօտաւոր ժամանակը: Երկրորդ՝ իրականում Սորբսկին Յակոբ Առաջապետը ստացած նամակի մասին տեղեկութիւն է տալիս ոչ թէ Եղիազար Այնթապցուն, այլ՝ Նահապետ Եղեռացուն յղած 1696 թ. նամակի մէջ, որի մասին խօսք կը լինի ստորեւ: Բայց, յամենայնդէպս, չի կարելի լինիլի ժխտել, թէ Սորբսկին Եղիազարին նամակ չի յղել:  
<sup>139</sup> Ռըս Աեյուվ Օրմիանսկիէս, էջ 68:

է 1684 թ.) կամեցաւ 30 հազար մարդ ուղարկել մեծ Հայաստան՝ նրան սիրելու համար, եթէ Ղափանի գլխաւորները այդ կամենային, բայց նրանք դա չկամեցան<sup>140</sup>»:

Այսպիսով ուղղակի եւ անուղղակի մի շարք փաստերը Հաստատում են Բարոնչի ու Հայ եւ օտար պատմաբանների այն տեղեկութիւնները, թէ 1660—80-ական թթ. Եան Սորբսկին Հայաստանի ազատագրութեանը զօրքով օժանդակելու ծրագրերով յուսադրել է Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներին: Սորբսկու այդ Հայասիրական ցոյցերը, Հասկանալի է, բխում էին իր քաղաքական շահերից: Այս առիթով Վ. Լոզինսկին գրում է. «Սորբսկին եկաւ այն եզրակացութեան, որ Թուրքիայի շարժումը դէպի Եւրոպա կասեցնելու համար անհրաժեշտ է գործակցել Պաւսկաստանի հետ՝ ընդդէմ Թուրքիայի՝ եւ Թուրքիայի արեւմտեան սահմանների վրայ հիմնել Լեհաստանից կախում ունեցող քրիստոնեայ մի պետութիւն, որը ընդունակ լինէր օգնելու Լեհաստանին՝ Թուրքիայի դէմ մղուած պատերազմում: Դաշինքը Պարսկաստանի հետ Սորբսկին մշակեց Պապի հաճութեամբ . . . իսկ ծրագրի երկրորդ մասը, այսինքն՝ Թուրքիայի արեւելեան սահմաններում քրիստոնեայ պետութեան ստեղծումը Սորբսկին մշակում էր գաղտնի, Հայերի հետ միասին՝ ծածկելով իր նպատակը մասնաւորապէս Շահից, որի շահերը մեծապէս պիտի տուժէին այդ ծրագրով<sup>141</sup>»:

Բայց թէ դարի լեհ-Հայկական յարաբերութիւնների մասին վերոյիշեալ տեղեկութիւնները, հիմնուած չլինելով վաւերական որոշակի փաստաթղթերի վրայ, կարող էին ինչ-որ տեղ կասկած յարուցել, եթէ մեր ձեռքի տակ չունենայինք Նահապետ Եղեռացի կաթողիկոսին յղած Եան Գ. Սորբսկու 1696 թ. Յունիսի 2-ի լատիներէն նամակը, որը մեզ է հասել Սադոկ Բարոնչի շնորհիւ:

Նամակը ոչ միայն Հաստատում է Հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշմանը վերաբերող վերոհիշեալ տեղեկութիւնները, այլեւ լրացնում եւ ճշգրտում է դրանք:

<sup>140</sup> Լէօ, Երկ. Ժող. հտ. 3, «Հայոց Պատմութիւն» հտ. 3, Գիրք երկրորդ, էջ 51, 1973, Երեւան:  
<sup>141</sup> Հմմտ. Հ. Ջաւրեան, նշ. յօդուածը, «Հայրենիք», թիւ 6, էջ 129:

<sup>129</sup> Լ. Բարսեան, Հայերը Մոլդովիայում եւ Բուզովիայում, էջ 34, 1911, Թիֆլիս:  
<sup>130</sup> Արշ. Ալպոյաճեան, նշ. աշխ., էջ 68:

Այժմ կորած այդ փաստաթուղթը կը-  
ցուած էր Լվովի «Ջեննիկ Լիտերացիկ»  
(Գրական Թերթ) շաբաթաթերթի 1854 թ.  
թիւ 21—22 համարներում Բարոնչի ստորա-  
գրած «Սորբսկին եւ հայերը» ընդարձակ յօ-  
դուածին՝ որպէս տողատակի ծանօթագրու-  
թիւն<sup>142</sup>։

Նամակը Հայաստան էր հասցրել Սո-  
րբսկու հայազգի քարտուղար, աստուածա-  
բանութեան դոկտոր Շիմոն Բեդրոսովիչը։  
Թէեւ նամակը մինչեւ վերջերս ամբողջական  
տեսքով անձանօթ էր հայ պատմագիտու-  
թեանը, բայց դրա մասին բաւական խօսուել  
է։ Օր. Աշ. Յովհաննիսեանը այդ առիթով  
գրում է. «1696 թ. Սորբսկին յատուկ նամա-  
կով Սիմոն Պետրովիչին ուղարկեց Շահի  
եւ էջմիածնի Նահապետ կաթողիկոսի մօտ։  
Նամակում նա յորդորում էր կաթողիկոսին՝  
միանալ կաթողիկ եկեղեցուն եւ խոստանում  
դրա համար Պապի, կայսեր եւ իր օգնու-  
թիւնը . . . Լեհական աղբիւրներից տեղե-  
կութիւն է հասել, թէ Սորբսկին առաջար-  
կած է եղել Նահապետ կաթողիկոսին ցոյց  
տալ իրեն այն ուղին, որով ինքը կարող կը  
լինէր աջակցել հայ ազնուականներից մէկին  
վերականգնելու հայերի անկախութիւնը եւ  
նստելու հայ թագաւորների գահին<sup>143</sup>»։ Տո-  
ղատակի ծանօթագրութեան մէջ Աշ. Յով-  
հաննիսեանը որպէս աղբիւր յղում է Բարոն-  
չի «Ուրա Ջեյով Օրմիանսկիի» աշխատու-  
թիւնն ու «Պոսլանից» հանդէսը եւ նշում.  
«Այս աղբիւրները անձամբ տեսած չունենք,  
տեղեկանքը քաղում ենք Յ. Քիւրտեանի  
յօդուածից»։ Յ. Քիւրտեանի միջոցով Աշ.  
Յովհաննիսեանի աշխատութեան մէջ թա-  
փանցած այս տեղեկութիւնների մէջ սխալ-

ներ կան, որոնք ճշտուում են ղիւանական  
աղբիւրներից քաղած Բարոնչի տուեալներով։  
Նախ՝ Յ. Քիւրտեանը, ինչպէս նաեւ Արշ.  
Ալպոյաճեանն ու միւսները, Սորբսկու  
հայազգի երկու բանագնացներին չփոթել են  
իրար։ Սիմոն Պետրովիչը Պարսկաստան է  
եկել 1690 թ., իսկ 1696 թ. Նահապետ կա-  
թողիկոսին Սորբսկու նամակը բերող բա-  
նագնացի անունն է Շիմոն Բեդրոսովիչ<sup>144</sup>։

Երկրորդ՝ Բարոնչի բերած աղբիւրնե-  
րում նշուած չէ, թէ Բեդրոսովիչը ուղար-  
կուել էր նաեւ Շահի մօտ։ Բարոնչը տալիս է  
միայն կաթողիկոսի անունը, որը տուեալ  
դէպքում ներդաշնակ է Վ. Լոզինսկու վերո-  
յիշեալ այն ճիշտ ենթադրութեանը, թէ Սո-  
րբսկին Հայաստանի թագաւորութիւնը վե-  
րականգնելու իր մտադրութիւնները հաս-  
կանալի պատճառով զաղտնի էր պահում  
Շահից։ Եւ վերջապէս, Նահապետ Եղեսա-  
ցուն յղած Սորբսկու նամակում, ինչպէս կը  
տեսնենք ստորեւ, մի փոքր այլ կերպ է ներ-  
կայացուած Հայաստանի անկախութիւնը վե-  
րականգնելու Սորբսկու առաջարկները, քան  
դա ներկայացնում է Յ. Քիւրտեանը։

Ինչեւէ. Այս եղակի վաւերագիրը մեզ  
համար կարեւոր է ոչ միայն որպէս հայ-  
լեհական առնչութիւնների ու հայ ազատա-  
գրական մտքի լեհական կողմնորոշմանը վե-  
րաբերող մեզ հասած առայժմ միակ փաս-  
տաթուղթ։ Նամակը մի աւելորդ անգամ ցոյց  
է տալիս, ինչպէս էին Հռոմն ու հակաթուրք  
դաշնակցութեան երկրները Օսմանեան կայս-  
րութեան քրիստոնէայ ժողովուրդների ազա-  
տագրական բաղձանքները շահարկում՝ իրենց  
քաղաքական դիտաւորութիւնները Թուրքիա-  
յում իրագործելու եւ նրանց Հռոմէական  
եկեղեցու միութեան բերելու համար։

Նամակի 15 հիմնական կէտերից 12-ը  
վերաբերում է հայերի Հռոմի հետ միութեան  
ու դրա հետ կապուած այն գործողութիւն-  
ներին, որոնք պէտք է կատարէր հայոց կա-  
թողիկոսը։ Առաջին կէտով կաթողիկոսին  
առաջարկուում է «ճանաչել սրբազան ուղղա-  
փառ միասնութիւնը Հռոմէական եկեղեցու  
հետ՝ համաձայն մեր կողմից իրեն ուղար-  
կած նորմերի, որոնք ինչպէս իր գերապա-  
տիւ նախորդներ Փիլիպպոսին ու Յակոբին,  
տրուած են Ուրբանոս է Պապի հրամանով եւ

<sup>142</sup> Բարոնչը նշում է, որ նամակը արտատպել է  
Լվովի հայոց թեմական խորհրդի ղիւանում պահուող  
պատճէնից։ Փաստաթղթի համառոտ բովանդակու-  
թեանը նա բերում է իր «Ուրուագծեր Հայոց Պատմու-  
թեան» գրքի 69—70 էջերում։ Նամակի համառոտ բո-  
վանդակութիւնը բերում է նաեւ Վ. Լոզինսկին իր  
PATRYCYAT I MIESZCZANSTWO LWOWSKIE  
W XVI I XVII WIEKU աշխատութեան մէջ (Լվով,  
1902 թ.), ուսկից Հ. Չաւրեանը թարգմանել է հը-  
րատարակել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (թիւ  
6, 1929 թ., էջ 131)։ Փաստաթուղթը ամբողջու-  
թեամբ հայերէն է հրատարակել պատմաբան Մ. Յով-  
հաննիսեանը «Բանբեր Երեւանի Համալսարանի» հան-  
դէսում (1978 թ., թիւ 1, էջ 153—156, Երեւան),  
որտեղից եւ օգտուում ենք։

<sup>143</sup> Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ, հտ. Բ, էջ  
351—352։

<sup>144</sup> Տե՛ս Ժըվոտը, էջ 69։ Ուրա Ջեյով Օրմիանսկիի,  
էջ 69)։

իր ձեռամբ ստորագրուած ու սեփական կնի-  
քով կնքուած ուղարկի մեզ, մենք էլ մեր  
թագաւորական ձեռքով՝ Հռոմի Կոնրիային,  
միաժամանակ ճշմարտութեան աւելի մեծ  
ապացոյցի համար բնագրին հաւասարազօր  
պատճէնը անհրաժեշտ ցուցումներով ու իր  
յաջորդների համար տրուած երդումով պա-  
հի իր ղիւանում»։

Նախ՝ նամակից երեւում է Բեդրոսովիչը  
հետը բերած է եղել նաեւ ղաւանութեան  
թղթեր, որոնք պիտի ստորագրած ու կնքած  
ետ տանէր։ Երկրորդ՝ որ այդ «նորմերը»  
տարիներ առաջ ուղարկած էր եղել նաեւ  
Յակոբ Ջուղայեցուն, Եղիազար Այնթապ-  
ցուն, իսկ աւելի վաղ՝ Փիլիպպոս Աղբակե-  
ցուն։

Նամակն, այսպիսով, հաստատում է հայ  
պատմաբանների ու Բարոնչի այն տեղեկու-  
թիւնները, ըստ որոնց Սորբսկին նամակա-  
գրական կապեր է ունեցել նաեւ վերոյիշեալ  
երկու կաթողիկոսների հետ։

Պատմագիտութեանը լաւ յայտնի է  
հայազգի կաթողիկ քահանաներ անցնելու  
համար Լվովում բացուած կղերանոցը ինչ  
կարեւոր դեր ունեցաւ միութեան գործում։  
Եւ ահա այս նամակում յստակօրէն երեւում  
է, որ Սորբսկին լեհահայերին Հռոմի հետ  
միացնելու փորձը ձգտում էր կիրարկել նաեւ  
Հայաստանում։ Նա առաջարկում է Կրակովի  
մօտեքի Մարիամպոլ քաղաքում կաթողիկ  
հոգեւորականներ անցնելու նպատակով  
ճեմարան հիմնել՝ «ի նպաստ արեւելեան  
երիտասարդութեան, որը կըթուլի ստա-  
նալու համար կը դար տարբեր կողմերից»  
(կէտ 2-րդ)։

Սորբսկին չի բաւականանում Լեհաս-  
տանում նախատեսուած այդ ճեմարանով,  
11-րդ կէտով Նահապետ Եղեսացուն առա-  
ջարկում է «երիտասարդութեան դաստիա-  
րակութեան համար էջմիածնի ճեմարանում  
պահի Յիսուսեան միաբանութեան . . . աս-  
տուածաբաններ, որոնք մենք կըհրամայենք  
ուղարկել մեծ քանակութեամբ եւ ամէն  
ինչում կ'աջակցենք նրանց»։

Պայմանագրի 12-րդ կէտը Հայոց կաթո-  
ղիկոսին պարտաւորեցնում է հրամայել,  
«հայ եկեղեցիներից հանուեն, ոչնչացուեն  
եւ ապագայում մոռացութեան մատնուեն  
այն գրքերը, որոնք երբեւէ գրուել են կեղծ

ուսուցիչների (իմա՝ Գրիգոր Տաթևացու,  
եւ հայադաւան եկեղեցու միւս գործիչների։  
Ռ. Հ.) կողմից . . . Ապա կաթողիկոսը թող  
հրամայի ուղղել կապածելի գրքերը . . . եւ  
յանձնի տպարան, որը . . . մեր թագաւո-  
րութեան գումարներով կը ստեղծենք . . .  
յիշեալ գիմնագիտայում եւ կը հրամայենք տը-  
պագրել . . . գրքերը կ'ուղարկենք բոլոր  
հայկական եկեղեցիները»։ Նամակի մէջ Հա-  
յաստանի ազատագրութեան խնդիրը շօշափ-  
ւում է 3-րդ եւ 6-րդ կէտերում։

Երկրորդ կէտում Սորբսկին կաթողիկո-  
սին խնդրում է, որպէսզի նա «յարմար մարդ  
ընտրի, որը արժանանայ մեր հաւանութեա-  
նը՝ սոյն նամակի համաձայն նախ եւ առաջ  
համապատասխան լինի նորին սրբազնութիւն  
Պապի նշած պարտականութիւններին ու հե-  
ղինակութեանը եւ արժանի լինի կարգինա-  
լական թիկնոց ընդունելու, ինչպէս եւ նորին  
մեծութիւն կայսեր պահանջներին՝ իր եւ  
հետնորդների համար մեր միջնորդութեամբ  
իշխանական տիտղոս ստանալու համար»։

Մենք վերը տեսանք Սորբսկին 1680-  
ական թթ. եւս հայոց կաթողիկոսից խըն-  
դրում էր մի յարմար թեկնածու առաջադրել  
կարգինալ անուանելու համար։ Կարծում  
ենք Յակոբ Ջուղայեցու մեզ չհասած նամա-  
կը եւս պիտի շօշափած լինէր այդ խնդիրը։

Նամակ-պայմանագրի 6-րդ կէտում Եան  
Սորբսկին նշում է որ ինքը Պոլսից Յակոբ  
կաթողիկոսի 17 տարի առաջ ուղարկած նա-  
մակը «անհրաժեշտ հոգացողութեամբ» պա-  
մում է իր ղիւանում։ «Թէեւ վաղուց, նրա  
վախճանից յետոյ նրա խօսքերը մոռացու-  
թեան են մատնուել ու մինչեւ այսօր . . . չեն  
իրականացուել, այդուհանդերձ մենք այն  
նորոգման եւ վերստին քննարկման ենք ներ-  
կայացնում, որպէսզի Ձերը սրբազանութիւ-  
նը փորձի վերստանալ . . . Հայկական թա-  
գաւորութեան թագը եւ կարողանայ միաւո-  
րել քրիստոնէայ տիրակալների աջակցու-  
թիւնը, միաժամանակ մանրամասն նկարա-  
գրել այն վայրերը, որտեղով քրիստոնէական  
գործերը կարող են յաջողութեամբ հասնել  
Հայաստան, յայտնել, թէ ինչ քանակու-  
թեամբ զինուորներ կարող է ունենալ, կամ  
գուցէ ոչինչ չունի. թող յայտնի նաեւ կա-  
րող է հոգալ բանակի ծախսերը։ Եւ թող  
Ձերը սրբազանութիւնը նամակով ղիմի . . .  
Ֆրանսիայի քրիստոնէայ միապետին եւ միւս

տիրակալներին եւ խնդրի նրանց օժանդակութիւնը, իսկ մենք . . . յայտարարում ենք, որ ամբողջ Ռեչ-Պոսպոլիտայի եւ մեր ժառանգների հետ միասին այդ բոլորին զօրավիզ կը կանգնենք եւ մեր ամբողջ զինուած ձեռքով կ'օգնենք այդ գործին, հէնց որ ընդհանուր համաձայնութեամբ քրիստոնէական արիւն ունեցող որեւէ իշխան ընտրուի պետութեան բախտի տնօրէն, ժառանգորդ եւ տիրակալ»:

Այստեղից ճշտուում է ոչ միայն Սոբեսկուն յղած Յակոբ Ջուղայեցու նամակի թրւականը (1679 թ.), այլեւ պատկերացում տալիս այդ նամակի մօտաւոր բովանդակութեան մասին:

Նամակի այս հատուածը մեր ձեռքի տակ եղած մի քանի այլ անուղղակի փաստերին համադրելիս, պարզուում է հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշմանը վերաբերող եւս մի շատ կարեւոր հանգամանք, որը վրիպել է հայ պատմագիտութեան ուշադրութիւնից: Խօսքն այստեղ լեհահայերից զինուած ջոկատներ կազմելու եւ Հայաստան ուղարկելու մասին է: 1667 թ. Յակոբ Ջուղայեցին Պոլսում հանդիպում է Սոբեսկու հայազգի բանազնաց Ն. Բայդուլովիչին, որին նա ճանաչում էր դեռեւս 1662 թ., երբ սա գտնուում էր Էջմիածնում եւ որտեղից «արեւելեան տեղեկութիւններով հարստացած» վերադարձել էր Լվով<sup>145</sup>: Հայադաւան եկեղեցին Հոռոմին հպատակեցնելու գնով Հայաստանի ազատագրութեան գործը այնքան հասունացած եւ իրական էր թուում Յակոբ Ջուղայեցու համար, որ նա 1676 թ. «անթիւ ժողովրդեան, առաջ» Էջմիածնի մայր տաճարում հպատակութիւն է յայտնում Հոռոմի Պապին: Դրանից մէկ տարի անց Էջմիածնի գաղտնի խորհրդակցութիւնում որոշում է ընդունուում հայրենիքը ազատագրելու գործը գլուխ բերելու համար դիմել Հոռոմի Պապին ու արեւմտեան տէրութիւններին: 1678 թ. (կամ՝ 1679 թ.) Ջուղայեցին Հոռոմ է ուղարկում Նախիջևանի կաթողիկ թեմի առաջնորդ, Շոռոտցի Առաքել Բոպիկ (բոկոսն) հայ Վարդապետին: Նոյն թուին իր գլխավորած պատուիրակութիւնը հասնում է Պոլիս, որտեղ Ջուղայեցին հանդիպում է Սոբեսկու հայազգի դեսպանին: Դրանից յետոյ 1679 թ. Պոլսից նա Սո-

բեսկուն նամակ է յղում, որը լեհ թագաւորը, «անհրաժեշտ հոգացողութեամբ» պահում էր իր դիւանում:

Նահապետ կաթողիկոսին յղած Եան Սոբեսկու նամակի վերոյիշեալ հատուածից պարզ երեւում է, որ Լեհաստանի թագաւորը նպատակ ունէր ընթացք տալ իր եւ Ջուղայեցու համատեղ մշակուած ծրագրին: Ծրագրերը, ինչպէս տեսանք, Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու համար լեհական զորքերի ներխուժումն էր Տաճկահայաստան եւ կաթողիկոսի առաջադրած եւ Հոռոմի Պապի հաւանութեանն արժանացած թեկնածուին հայոց թագաւորութեան թագին բազմեցնելը: Հետեւաբար Յակոբ կաթողիկոսի նամակը, ինչպէս ասուեց, մօտաւորապէս նոյն հարցերի մասին է եղել, ինչ որ Նահապետ Եղեւսացուն յղած Սոբեսկու նամակը:

Գերման աղբիւրներից Ս. Բարոնչի քաղած այն տեղեկութիւնը, թէ 1683 թ. Վիեննայի ճակատամարտին լեհ-աւստրիական զորքերի շարքում «սեփական մուշկետներով, համազրեւստով ու դրօշակներով» կոռուում էին հինգ հազար հայ ռազմիկներ, մեզ շատ հետաքրքիր ենթադրութիւններ է մղում: Մենք կարծում ենք Յակոբ Ջուղայեցու 1679 թ. նամակում պէտք է որ խօսք եղած լինէր նաեւ Լեհաստանում կազմակերպուելիք հայկական զինուորական ջոկատի մասին, որը պէտք է կազմէր Թուրքիա ներխուժելիք լեհ-աւստրիական զորքերի միջուկը: Իսկ այդ 5000-անոց ջոկատը հնարաւոր չէր կազմել զուտ լեհահայերից, որովհետեւ մեր ձեռքի տակ եղած որոշ աղբիւրների պընդամամբ ժէ դարակէսին 11 միլիոնանոց<sup>146</sup> Լեհաստանի թագաւորութիւնում հայադաւան Հայերը կազմում էին բնակչութեան 0,023 տոկոսը<sup>147</sup> (2530 հոգի) միայն<sup>148</sup>: Ըստ 1633 թ. Նոյեմբերի 29-ի մի փաստաթղթի (Լվովահայերի բողոքը Լվովի դատարանին) Ռեչ-

<sup>145</sup> Encyklopedia Powszechna PWN, T. 3. str. 586, Warszawa, 1975.  
<sup>147</sup> TYGODNIK POWSZECHNY (շաբաթաթերթ), 1980, թիւ 15, Կրակով:  
<sup>148</sup> Ժէ դարակէսին Լեհաստանում 2530 հոգի հայադաւան բնակչութիւնը հաւանական է, որովհետեւ ըստ մեզ հասած հաւաստի բազմաթիւ տուեալների, Թորոսովիչի հալածանքներին չդիմանալով, 1630-40-ական թուերին հարիւրաւոր հայեր լքեցին Լեհաստանը:

<sup>146</sup> Բարոնչ, Ժըվոտը, էջ 57:

Պոսպոլիտայի ամենահայաշատ գաղթօջախ Լվովում ու շրջակայ բնակավայրերում այդ թուին ալրում էր «մօտաւորապէս մէկուկէս հազար հայադաւան հայ»<sup>149</sup>: Մեր կարծիքով, այդ ժամանակ լեհահայութեան թիւը 4000-ից չէր անցնի: Հետեւաբար նրանք չէին կարող այդքան զինուոր տալ: Մնում է ենթադրել, որ այդ ջոկատը համալրուել է տարբեր վայրերից, դուքէ եւ Հայաստանից դնացած հայերի հաշուին: Այսպիսով՝ Հայաստանից հարիւրաւոր մղոններով հեռու մի երկրում զինուորական միաւորում ստեղծելու, զինելու, հանդերձաւորելու եւ պահելու համար հարկ պիտի լինէր հսկայական դրամական միջոցներ ու ժամանակ պահանջող նախապատրաստական-կազմակերպչական լուրջ աշխատանք: Իսկ պարտքերի մէջ թաղուած Էջմիածինն ու իր կաթողիկոսը հնարաւորութիւն չպիտի ունենային հողալու այդ հսկայական ծախսերը: Հասկանալի է այդ ծախսերը պէտք է հոգային ազատագրական շարժման մէջ ներդրուած հայ խոջայութիւնն ու լեհահայ հարուստ վաճառականութիւնը, որը այդ դէպքերից մօտ 40 տարի անց պատրաստակամութիւն յայտնեց Դաւիթ Բէկին օշոնութեան հասցնել հարիւրաւոր լեհահայերի: Եթէ նկատի ունենանք, որ հայ ռազմիկները Վիեննայի տակ կոռուում էին սեփական գէնք-դրահով ու դրօշակներով, իսկ Սոբեսկու եւ հայոց կաթողիկոսների միջեւ կայացած բանավարութիւններում յատուկ ուշադրութիւն է դարձուել Թուրքիա մտնելիք եւրոպական զորամասը հայ ռազմիկներով համալրելու հանգամանքին (տե՛ս Սոբեսկու նամակի 6-րդ կէտը), ապա վերոյիշեալ վարկածները կարելի է ընդունելի համարել:

Այսպիսով՝ հայ ազատագրական շարժման լեհական դիմահակութեան մասին մեր թուոցիկ ակնարկից երեւում է այդ դիմաշըջութիւնը միանգամից չի ծլել խոպան ասպարէզում:

Ազատագրական ակնկալիքներով հայլեհական շփումները սկսուում են դեռեւս ԺՁ դարում՝ Սիգիզմունդ Բ եւ Ստեֆան Բատոր թագաւորների ժամանակներից եւ զարգանալով որոշակի տեսք են ստանում Փիլիպ-

<sup>149</sup> 89-րդ ՈւՍՍՐ, ֆ. 9, Օպ. 1, տոմ 384, Ստրաւիցա 1970: (Հմտ. «Հայ Ռուսներ, կապերը Ժէ դարում», էջ 6):

պոս կաթողիկոսի օրօք, որի շնորհիւ էլ սկսուում է ձեւաւորուել հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշումը: Ժէ դարի Եւրոպայում տեղի ունեցած քաղաքական փոփոխութիւնները մի կողմից, Թուրքերի դէմ ռազմական մի քանի խոշոր յաղթողներ տարած Եան Գ Սոբեսկու Լեհաստանի յաջողութիւնները միւս կողմից, Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսին մղում են Լեհաստանի հետ աշխոյժ բանավարութիւնների, որը ԺՁ դարում կրում էր պատահական եւ թուուցիկ բնոյթ, որովհետեւ այդ դարի հայ ազատագրական միտքը հիմնականում սնուում էր Օսմանեան կայսրութեան հետ զինաբախումների մէջ գտնուող եւ Եւրոպայի ազդեցիկ տէրութիւններից հանդիսացող Վենետիկի, ապա Ֆրանսիայի խոստովանումներով: Ժէ դարի ուժերի վերադասաւորութիւնն ու քաղաքական իրադրութեան փոփոխութիւնը հայլեհական զինակցութեան համար իրական նախադրեալներ է ստեղծում: Յակոբ Ջուղայեցին շարունակելով իր նախորդի սկսած գործը, 1660-ական թուերից սկսած աշխոյժ կապերի մէջ է մտնում Լեհաստանի հետ, որը 80-ական թթ., արդէն յաջորդ կաթողիկոսի օրօք, դառնում է քաղաքական դիմահակութիւն:

Նորից դառնալով Սոբեսկու 1696 թ. նամակին, պէտք է նշենք, որ Սերբիական փոքրիկ քաղաք Կառլովիցում կնքուած յայտնի զինադադարից երեք տարի եւ Սոբեսկու մահուանից տասնուհինգ օր առաջ գրուած դիտարկուող նամակը, լինելով հայ ազատագրական շարժման պատմութեան լեհական կողմնորոշման վերաբերող եզակի մի վկայական, միաժամանակ այդ դիմահակութեան մայրամուտն է նշանակուում, որովհետեւ եթէ 1680-ական թուերի Եւրոպայի ազդեցիկ պետութիւններից մէկը հանդիսացող Լեհաստանն իր քաղաքական շահերից ելնելով կարող էր նման ծրագրեր փայտանել, ապա 1690-ական թուերի վերջերին նա արդէն այն երկիրը չէր որ կարողանար իրագործել լեհ պատմաբանների իսկ խօսքերով ասած՝ «Փանտաստիկ» այնպիսի արշաւանք, ինչպիսին խոստանում էր:

Նամակը մեր կարծիքով գրուած էր լատին բարձր հոգեւորականութեան յորդորներով: Նպատակը կարծում ենք մէկն էր՝ օգտագործելով հայերի մէջ եղած Սոբեսկու հեղինակութիւնը, մի հերթական փորձ եւս

կատարել հայ ժողովրդի Հոռմի հետ միութիւնը իրագործելու համար:



Երբ հայ ազատագրական շարժման գործիչները ժ.Պ. դարի 80—90-ական թուերին Լեհաստանի ու Հոռմի հետ աշխոյժ բանակցութիւններ էին վարում Հայաստանի անկախութիւնը վերականգնելու համար, Վարդան Յունանեանը 1691 թ. Լվովում գումարում է եկեղեցական սինոդ, որտեղ իրաւաբանորէն վերջնականապէս վճռում են Լեհահայ եկեղեցու պատարագի հիմնական փոփոխութիւններ, անկախութիւնը էջմիածնից եւ հպատակութիւնը Հոռմի Պապին: Սինոդը ամբողջ Լեհահայ հողեւորականութեան անունից Լեհահայ կաթողիկէ եկեղեցու գլուխ հռչակեց Լվովի արքեպիսկոպոսին, ընդունւեց նոր ծիսակարգ, որը Յունանեանը Թէատինեան հայերի օգնութեամբ փոփոխութեան ենթարկեց<sup>150</sup>: 1699 թ. կայացած Լեհահայ եկեղեցու ընդհանուր ժողովը հրահանք իջեցրեց «Տիրոջ խօսքը եկեղեցիներում աշխարհաբար (բնագրում՝ ժողովրդային լեզուով: Ռ. Հ.) տանել<sup>151</sup>», այսինքն՝ Ս. Գրքի ընթերցումները դրաբար փոխարէն Լեհերէն պիտի տարուէր:

Յրանցիչէկ Զախարիասելիչի տուեալներով, ժ.Պ. դարի առաջին տասնամեակներին Լեհահայոց եկեղեցիներում աղօթքներն ու «ժողովրդի հետ երգուող երգերը» որոնք առաջ դրաբարով էին, սկսեցին Լեհերէն կատարել<sup>152</sup>:

Բայց այսուհանդերձ Լեհահայ որոշ գաղթօջախներում միութիւնը չէին ընդունել եւ շարունակում էին պայքարը: Օրինակ Վարեայ քաղաքի կաթողիկէ քահանան ըստիպուած էր 1690 թ. հեռանալ այդտեղից, քանի որ հայերը շատ էին կառչած իրենց հին հաւատին<sup>153</sup>: Բուկովինայում, ըստ Ֆր. Զախարիասելիչի, 1825 թ. ապրոլ 1824 Հայերից 1134-ը մնացել էին հին հաւատին<sup>154</sup>: Իսկ երբ Թէատինեանը 1785 թ. Կամենեց-Պոդոլսկում ուզում էին կղերանոց բանալ, տեղի հայերը նոյնիսկ Գրիգորեան տոմարը

չուզեցին ընդունել, ուր մնաց թէ Կամենեց Պոդոլսկում հանդուրժէին կաթողիկէ քահանաներ արտադրող կղերանոց:

Ինչ որ է. Լեհահայերի միութիւնը, որը սկսուել էր ժ.Պ. դարի 60-ական թուերին եւ սպառնալի տեսք ընդունել 1630 թ. Նիկոլ Թորոսովիչի շրջանին, աւարտուեց մօտ 120 տարուայ յամառ պայքարից յետոյ: Լեհահայերի միակ յաղթանակն այս դործում այն եղաւ, որ նրանց եկեղեցին ո՛չ թէ ամբողջովին ձուլուեց լատին եկեղեցուն, այլ պաշտօնապէս անուանուեց «Հոռմին միացած հայոց ծիսակարգի եկեղեցի»՝ պահպանելով բազմաթիւ ծիսական իւրայատկութիւններ:

Եթէ Լեհահայերի միութեան պատմութիւնը շրջանաբաժանելու լինենք, ապա այն կարելի է տրոհել երկու մեծ շրջանների:

Առաջին կամ նախնական շրջան. մօտաւորապէս սկսում է Տրիդենտեան ժողովից եւ շարունակում մինչեւ Նիկոլ Թորոսովիչի դահակալութեան սկիզբը (1545—1626):

Երկրորդ՝ կամ գլխաւոր շրջան. սկսում է 1626 թ. եւ շարունակում մինչեւ 1691 թ. սինոդի որոշումները:

Լեհահայերի միութեան պատմութեան գլխաւոր շրջանի (1626—1691) հետազոտութիւնը մեզ բերում է հետեւեալ եզրակացութեան. 1626—1652 թթ. Լեհահայ համայնքը լիովին ենթարկուում էր էջմիածնին, իսկ թեմակալը՝ Հոռմին:

1653—1686 թթ. թեմակալը փաստօրէն վերամիաւորուելով էջմիածնին, իրաւականօրէն մնաց Հոռմի ենթակայութեան տակ: Այս եզակի ու աննախընթաց վիճակը Փիլիպպոս կաթողիկոսի ու Նիկոլի 1653 թ. դադարի պայմանագրի արդիւնքն էր, ըստ որի, Նիկոլի մահուանից յետոյ Լեհահայոց թեմակալին պիտի նշանակէր էջմիածինը: Բայց յիշեալ պայմանագրի անվերապահ կատարումը, հասկանալի պատճառով, չէր կարող ապահովուել: Ուստի Լեհահայ եկեղեցու համար Հոռմի ու էջմիածնի միջեւ սկսում է տասնամեակներ տեւող մի անօրինակ պայքար: Հոռմը ձգտում էր թեմի իրաւական ենթակայութիւնը վերածել փաստականի, իսկ էջմիածինը՝ փաստականը իրաւականի: Թէատինեանների Լվով ժամանելուց յետոյ (1664 թ.) Հոռմը լուրջ յաջողութիւն-

150 Չ. Լեիցիկէ, նշ. աշխ. էջ 90—91:  
151 Անդ, էջ 92:  
152 Ֆր. Զախարիասելիչ, նշ. աշխ. էջ 68:  
153 Տե՛ս Իււս Զելուլ, էջ 176:  
154 Ֆր. Զախարիասելիչ, նշ. աշխ. էջ 80:

ներ է արձանագրում: Կղեմենս Գալանոսի մահուանից յետոյ (1666 թ.) հակամիարար շարժումը ուժեղանում է: 1640 եւ 1670-ական թթ. էջմիածինը երկու անյաջող փորձ է անում իր նպատակին հասնելու համար: Հոռմի եւ էջմիածնի այս պայքարը տեւում է մինչեւ 1681 թ., երբ էջմիածինը կարողանում է մի քանի տարով թեմակալի փաստական ու իրաւական ենթակայութիւնը դաշնակել իրար (Բեռնատովիչի դահակալութիւնը): Բայց Հոռմը, 1686 թ. թեմակալ նշանակելով Վ. Յունանեանին, տանում է իր վերջնական յաղթանակը:

Այսպիսով՝ էջմիածինը 1626—1652 թ. պարտութիւն կրելով Հոռմից, 1653 թ. կարողանում է վերականգնել իր հիմնական իրաւունքները եւ հասնել թեմակալի ու իր հօտի փաստական միութեանը՝ յօդուտ իրեն: 1664—1666 թթ. միարարական շարժման նոր թափը խարխում է էջմիածնի դիրքերը՝ լատին կղերի եւ Նիկոլի միջեւ եղած հակասութիւնը հասցնելով առաւելագոյնի: Բայց Գալանոսի մահուանից (1666 թ.) յետոյ էջմիածինը կրկին մասնակիորէն վերականգնում է հաւասարակշռութիւնը, որը եթէ 1626—1652 թթ. համար շատ լուրջ պարտութիւն էր, ապա 1666—1686 թթ. պայմաններում նշանակում էր շօշափելի յաղթանակ:

1681 թ. էջմիածնին յաջողում է Լեհահայ թեմի գլուխը դնել իր կողմնակցին: Բայց 1680-ական թթ. Լեհահայ կղերի մէջ լուրջ տեղաշարժեր էին կատարուել: Եթէ 1630—70-ական թթ. սկզբներին հողեւորականութեան ու աշխարհիկ բարձր խաւի ճընշող մեծամասնութիւնը էջմիածնական էր, ապա 1670—1680-ական թթ. այդ համամասնութիւնը խարխուում է: Անցած 50—60 տարիների ընթացքում Լեհահայերի լատինահակ թեւը աճել էր երկիրը լքած հարիւրաւոր հայադաւանների հաշուին: Հողեւորականութեան մէջ այս բանը աւելի ակնյայտ էր: Լվովի կղերանոցի շրջանաւարտները մեծամասնութիւն էին կազմում հին սերնդի հայադաւան կղերի համեմատ (սրանց մեծ մասը կա՛մ շարքից դուրս էր եկել, կա՛մ Նիկոլ Թորոսովիչի ճնշումներից ազատելու համար լքել էր երկիրը): Այս պատճառով, 1681 թ. էջմիածինը չստանալով քահանայութեան ու Լեհահայ վերնախաւի բացարձակ մեծամասնութիւնը, թեմակալի դահը կա-

րողանում է պահել մի քանի տարի միայն: Լեհահայերի ստուարացած կաթողիկէ հատուածը վճռում է Լեհահայոց եկեղեցու բախտը: էջմիածինը 1687 թ. մեկուսացուելով իր թեմից, եւ ի դէմս նոր թեմակալի՝ կորցնելով յենարանը, չէզոքացուում է: 1691 թ. այդ եկեղեցին անդառնալիորէն ու վերջնականապէս ենթարկուում է Հոռմին, որը 60-ամեայ վիթխարի ջանքերի գնով թեմակալի ու թեմի փաստական ենթակայութիւնը վճռում է իր օգտին:

Լեհահայերի միութեան գլխաւոր շրջանը կարելի է երեք շրջանի բաժանել.

- ա) Նիկոլ Թորոսովիչի թեմակալութիւնից մինչեւ Թէատինեանց Լվով ժամանելը (1626—1664)՝ երեք փուլերով.
    1. Նիկոլի թեմակալութիւնից մինչեւ նրա վերջնական միութիւնը Հոռմի (1626—1630).
    2. Միութեանէն մինչեւ Փիլիպպոս կաթողիկոսի հետ հաշտութիւն կնքելը (1630—1653): Այս երկու փուլերում 1626—1653 Լեհահայ համայնքը լիովին ենթարկուում էր էջմիածնին, իսկ թեմակալը՝ Հոռմին:
    3. Պոլսի հաշտութիւնից մինչեւ Թէատինեանների մուտքը Լեհաստան (1653—1664).
  - բ) Թէատինեանց Լվով ժամանելուց եւ կղերանոցի հիմնարկումից մինչեւ Նիկոլի մահը (1664—1681).
  - գ) Նիկոլի մահուանից մինչեւ 1691 թ. սինոդի որոշումները՝ երկու փուլով.
    1. Նիկոլի մահուանից ու Եան Բերնարտովիչի դահակալութիւնից մինչեւ Յունանեանի թեմակալութեան ըսկիզբը (1681—1686).
    2. Յունանեանի դահակալութեան սկզբից մինչեւ 1691 թ. սինոդի որոշումները (1686—1691), որը պէտք է համարել Լեհահայերի միութեան աւարտական շրջանը:
- Այսպիսով՝ Լեհահայ եկեղեցու վերջնական միութիւնը Հոռմին ո՛չ թէ պիտի դնել 1630 թ., ինչպէս ընդունուած է պատմագիտութեան մէջ, այլ 1687—1691 թթ., ինչպէս վկայում են պատմական աղբիւրները: